3231

3К33
4-41

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀամԿ(բ)Կ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ
1930 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ—ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ

★

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

329.15(47)
Ս-94

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Ի. ՍՏԱԼԻՆ

3К33
Կ-41 ստր.
21 JUN 2005
20 NOV 2009
6

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀամԿ(բ)Կ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ
1930 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ—ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ △ 1937 △ ՅԵՐԵՎԱՆ

05 AUG 2013

3231

ՀՍՍՀ-ՍՍՐ ... Ал. Мясникян ...

2063
38

И. СТАЛИН
ПОЛИТИЧЕСКИЙ ОТЧЕТ
ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА
XVI СЪЕЗДУ ВКП(б)

Армнартиздат, Ереван, 1937

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԿ(Բ)Կ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Զեկուցումը յեվ յեզրափակման խոսքը 1930 թ. հունիսի 27-ին—հուլիսի 2-ին

I

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՃՈՂ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերնե՛ր։ XV համագումարի ժամանակից անցել է $2^{1}/_{2}$ տարի։ Կարծես, շատ էլ մեծ ժամանակաշրջան չէ։ Այնինչ՝ այս ժամանակի ընթացքում ժողովուրդների ու պետությունների կյանքում տեղի յեն ունեցել լրջագույն փոփոխություններ։ Յեթե անցած ժամանակաշրջանը յերկու խոսքով բնութագրելու լինենք, այն կարելի կլիներ անվանել **բեկման** ժամանակաշրջան։ Նա բեկման ժամանակաշրջան է յեղել վոչ միայն մեզ համար, ԽՍՀՄ-ի համար, այլև ամբողջ աշխարհի կապիտալիստական յերկրների համար։ Բայց այս յերկու բեկումների միջև արմատական տարբերություն գոյություն ունի։ Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ի համար այդ բեկումը նշանակում եր շրջադարձ դեպի տնտեսական նոր, ավելի լուրջ **վերելք**, կապիտալիստական յերկրների համար բեկումը նշանակում եր շրջադարձ դեպի տնտեսական **անկում**։ Մեզանում, ԽՍՀՄ-ի մեջ, սոցիալիստական շինարարության **աճող վերելք** է թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության մեջ։ Նրանցում, կապիտալիստների մոտ, եկոնոմիկայի **աճող ճգնաժամ** է թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության մեջ։

Այս է ներկա դրության պատկերը յերկու խոսքով։

Մտաբերեցեք գործերի դրությունը կապիտալիստական յերկրներում սրանից $2\frac{1}{2}$ տարի առաջ: Արդյունաբերական արտադրության ու առևտրի աճում կապիտալիզմի գրեթե բոլոր յերկրներում: Հումքի ու պարենի արտադրության աճում գրեթե բոլոր ագրարային յերկրներում: ՀԱՄՆ-ի, վորպես ամենալիարյուն կապիտալիզմի յերկրի շուրջը լուսապսակ: Հաղթական յերգեր «բարգավաճման» մասին: Ստորաքարշություն դոլլարի առջև: Փառաբանություն ի պատիվ նոր տեխնիկայի, ի պատիվ կապիտալիստական ռացիոնալիզացիայի: Կապիտալիզմի «առողջացման» դարագլխի, կապիտալիստական կայունացման անխորտակելի ամրապնդության դարագլխի հռչակում: «Ընդհանրական» աղմուկ-աղաղակ Խորհուրդների յերկրի «անխուսափելի կործանման» մասին, ԽՍՀՄ-ի «անխուսափելի կրախի» մասին:

Այս եր գործի վիճակը յերեկ:

Իսկ ինչ պատկեր ե այժմ:

Այժմ տնտեսական ճգնաժամ ե կապիտալիզմի գրեթե բոլոր արդյունաբերական յերկրներում: Այժմ գյուղատնտեսական ճգնաժամ ե բոլոր ագրարային յերկրներում: «Բարգավաճման» փոխարեն՝ մասսաների թշվառություն ե ու գործազրկության հսկայական աճում: Գյուղատնտեսության վերելքի փոխարեն՝ գյուղացիության միլիոնավոր մասսաների տնտեսությունների քայքայում: Խորտակվում են ընդհանրապես կապիտալիզմի ամենակարողության, առանձնապես հյուսիս-ամերիկյան կապիտալիզմի ամենակարողության մասին յեղած պատրանքները: Քանի գնում թուլանում են հաղթական յերգերն ի պատիվ դոլլարի ու կապիտալիստական ռացիոնալիզացիայի: Քանի գնում ուժեղանում են կապիտալիզմի «սխալների» վերաբերյալ պեսսիմիստական վոռնոցները: Իսկ ԽՍՀՄ-ի «անխուսափելի կործանման» վերաբերյալ «ընդհանրական» աղմուկը փոխվում ե «ընդհանրական» չարալից ֆշշոցի այն մասին, թե անհրաժեշտ ե պատժել «այդ յերկիրը», վորը համարձակվում ե զարգացնել իր եկոնոմիկան, յերբ ամենուրեք ճգնաժամ ե թագավորում:

Այս ե պատկերն այժմ:

Հենց այնպես դուրս յեկավ, ինչպես ասում եյին բոլշևիկները մի յերկու-յերեք տարի սրանից առաջ:

Բոլշևիկներն ասում եյին, թե, քանի վոր կապիտալիստական յերկրներում բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների կենսական մակարդակի շրջանակները սահմանափակ

են, տեխնիկայի աճումն այդ յերկրներում, արտադրողական ուժերի ու կապիտալիստական ռացիոնալիզացիայի աճումն անխուսափելիորեն պետք ե հասցնեն դաժան տնտեսական ճգնաժամի: Բուրժուական մամուլը ծիծաղում եր բոլշևիկների «որիգինալ մարգարեյության» վրա: Աջ ուկլոնիստները սահմանազերծվում եյին բոլշևիկյան պրոգնոզից՝ մարքսիստական վերլուծությունը նենգափոխելով լիբերալ շաղակրատությամբ «կազմակերպված կապիտալիզմի» մասին: Իսկ իրականում ինչ դուրս յեկավ: Դուրս յեկավ այնպես, ինչպես ասում եյին բոլշևիկները:

Սրանք են փաստերը:

Անցնենք կապիտալիստական յերկրների տնտեսական ճգնաժամի վերաբերյալ տվյալների քննարկմանը:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

ա) Ճգնաժամն ուսումնասիրելիս աչքի յեն ընկնում ամենից առաջ հետևյալ փաստերը.

1. Տնտեսական ներկա ճգնաժամը գերարտադրության ճգնաժամ ե: Այս նշանակում ե, վոր ապրանքներ ավելի յեն արտադրված, քան կարողանում ե կլանել շուկան: Այս նշանակում ե, վոր ճոթեղեն, վառելիք, ֆաբրիկա-գործարանային շինվածքներ, անդամթերքներ ավելի յեն արտադրված, քան կանխիկ դրամով կարող են գնել հիմնական սպառողները, այսինքն՝ ժողովրդական մասսաները, վորոնց յեկամուտները ցածր մակարդակի վրա յեն մնում: Իսկ վորովհետև կապիտալիզմի պայմաններում ժողովրդական մասսաների գնողունակությունը նվազագույն ցածր մակարդակի վրա յե մնում, ուստի ապրանքների, ճոթեղենի, հացի և այլնի «ավելցուկը» կապիտալիստները թողնում են պահեստներում կամ նույնիսկ վոչնչացնում են՝ բարձր գները պահպանելու համար, կրճատում են արտադրությունը, արձակում են բանվորներին, և ժողովրդական մասսաները հարկադրված են թշվառության մատնվել այն պատճառով, վոր ապրանք չափազանց շատ ե արտադրված:

2. Ներկա ճգնաժամը համաշխարհային առաջին տնտեսական ճգնաժամն ե պատերազմից հետո: Նա համաշխարհային ճգնաժամ ե վոչ միայն այն իմաստով, վոր ընդգրկում ե աշխարհի բոլոր կամ գրեթե բոլոր արդյունաբերական յերկրները, ընդ վորում Գերմանիայի ռեպարացիոն վճարումների միլիարդավոր

մարկաները սիստեմատիկորեն իր օրգանիզմի մեջ ներարկող Ֆրանսիան իսկ անկարող յեղավ խուսափելու վորոշ դեպրեսիայից, վորն, ըստ բոլոր տվյալների, պետք ե փոխվի ճգնաժամի։ Նա համաշխարհային ճգնաժամ ե նաև այն իմաստով, վոր արդյունաբերական ճգնաժամն ըստ ժամանակի զուգադիպել ե գյուղատնտեսական ճգնաժամին, վորն աշխարհի հիմնական ագրարային յերկիրներում ընդգրկում ե հումքի ու պարենի բոլոր տեսակների արտադրությունը։

3. Համաշխարհային ներկա ճգնաժամը, չնայած նրա ընդհանրական բնույթին, անհավասարաչափ ե ծավալվում՝ այս կամ այն յերկիրը հարվածելով տարբեր ժամանակ ու տարբեր ուժով։ Արդյունաբերական ճգնաժամն ամենից շուտ սկսվեց Լեհաստանում, Ռումինիայում, Բալկաններում։ Նա այնտեղ ծավալվում եր ամբողջ անցյալ տարվա ընթացքում։ Սկսված գյուղատնտեսական ճգնաժամի ակնհայտ նշաններ արդեն 1928 թ. վերջերին կային՝ Կանադայում, ՀԱՄՆ-ում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ավստրալիայում։ Այս ամբողջ ժամանակաշրջանում ՀԱՄՆ-ի արդյունաբերությունը դեպի վեր ե բարձրանում։ 1929 թ. կեսերին ՀԱՄՆ-ում արդյունաբերական արտադրությունը հասնում ե գրեթե ռեկորդային բարձրության։ 1929 թ. յերկրորդ կեսից միայն սկսվում ե բեկումը, և ապա արդեն ծավալվում ե արդյունաբերական արտադրության սրընթաց ճգնաժամը, վորը հետ ե շպրտեց ՀԱՄՆ-ին դեպի 1927 թ. մակարդակը։ Սրան հաջորդում ե արդյունաբերական ճգնաժամը՝ Կանադայում, Ճապոնիայում։ Ապա գալիս են սնանկացումներն ու ճգնաժամը Չինաստանում ու գաղութային յերկիրներում, վորտեղ ճգնաժամը կրկնապատկվում ե արծաթի գների անկումով, և վորտեղ գերարտադրության ճգնաժամը զուգակցվում ե գյուղացիական տնտեսության քայքայման հետ, գյուղացիական տնտեսության, վորին ֆեոդալների շահագործումը և ուժերից վեր հարկերը կատարյալ ուժասպառության եյին հասցրել։ Ինչ վերաբերում ե Արևմտյան Յեվրոպային, ապա այնտեղ ճգնաժամն սկսում ե ուժի մեջ մըտնել միայն այս տարվա սկզբին, ընդվորում՝ վոչ ամենուրեք միևնույն ուժով, իսկ Ֆրանսիան նույնիսկ այս ժամանակաշրջանում դեռ ելի շարունակում ե ցուցաբերել արդյունաբերական արտադրության աճում։

Յես կարծում եմ, վոր անհրաժեշտություն չկա առանձնապես կանգ առնելու ճգնաժամի առկայությունը ցուցադրող թվական տվյալների վրա։ Վոր ճգնաժամ գոյություն ունի, այժմ այդ մասին արդեն չեն վիճում։ Այս պատճառով յես կսահմանափակվեմ մեջ բերելով մի փոքրիկ, բայց բնորոշ աղյուսակ, վորը նորերս հրապարակել ե գերմանական «Կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտը»։ Այդ աղյուսակը պատկերում ե լեռնարդյունաբերության ու մշակող խոշոր ինդուստրիայի հիմնական ճյուղերի զարգացումը՝ ՀԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, ԽՍՀՄ-ում՝ սկսած 1927 թվականից, ընդվորում՝ 1928 թ. արտադրության մակարդակն ընդունվում ե 100։

Ահա այդ աղյուսակը.

Թվականներ	ԽՍՀՄ	ՀԱՄՆ	Անգլիա	Գերմանիա	Ֆրանսիա	Լեհաստան
1927	82,4	95,5	105,5	100,1	86,6	88,5
1928	100	100	100	100	100	160
1929	123,5	106,3	107,9	101,8	109,4	99,8
1930 (առաջին յեռամս.)	155,5	95,5	107,4	93,4	113,1	84,6

Ինչի՞ մասին ե խոսում այս աղյուսակը։

Նա խոսում ե, ամենից առաջ, այն մասին, վոր ՀԱՄՆ-ը Գերմանիան ու Լեհաստանն ապրում են խոշոր արդյունաբերական արտադրության սուր կերպով արտահայտված ճգնաժամ, ընդվորում՝ ՀԱՄՆ-ում արտադրության մակարդակը՝ 1929 թ. առաջին կիսամյակի վերելքից հետո՝ 1929 թ. համեմատությամբ 1930 թ. առաջին յեռամսյակում ընկել ե 10,8%-ով, իջնելով 1927 թ. մակարդակին. Գերմանիայում արտադրության մակարդակը յեռամյա լճացումից հետո՝ անցյալ տարվա համեմատությամբ իջել ե 8,4%-ով, 1927 թ. մակարդակից ցած իջնելով 6,7%-ով, իսկ Լեհաստանում արտադրության մակարդակն անցյալ տարվա ճգնաժամից հետո՝ անցյալ տարվա համեմատությամբ իջել ե 15,2%-ով, 1927 թ. մակարդակից ցած իջնելով 3,9%-ով։

Յերկրորդ, նա խոսում ե այն մասին, վոր Անգլիան՝ արդեն յերեք տարի յե՝ դոփդոփում ե միևնույն տեղում, 1927 թ. մակարդակի շուրջը, և ապրում ե տնտեսական ծանր լճացում, ընդվորում՝ 1930 թ. առաջին յեռամսյակում նա արդեն կարողացել

ե իջեցնել արտադրության մակարդակն անցյալ տարվա համեմատությամբ 0,5%-ով՝ այսպիսով մտնելով ճգնաժամի սկզբնական փուլը։

Յերրորդ, նա խոսում ե այն մասին, վոր կապիտալիստական խոշոր յերկրներից միայն Ֆրանսիայում ե տեղի ունենում խոշոր արդյունաբերության վորոշ աճում, ըստվորում, յեթե 1928 թ. աճի տոկոսը կազմում եր 13,4, իսկ 1929 թ.՝ 9,4, ապա 1930 թ. առաջին յեռամսյակում աճը 1929 թ. համեմատությամբ կազմում ե ընդամենը միայն 3,7%՝ այսպիսով տալով աճման տարեցտարի իջնող կորագծի պատկեր։

Վերջապես, նա խոսում ե այն մասին, վոր յերկրներից միայն ԽՍՀՄ-ում տեղի ունի խոշոր արդյունաբերության բուռն վերելք, ըստվորում՝ արտադրության մակարդակը 1930 թ. առաջին յեռամսյակում ավելի քան յերկու անգամ գերազանցում ե 1927 թ. մակարդակից, իսկ աճի տոկոսը 1928 թ. 17,6-ից 1929 թ. բարձրանում ե մինչև 23,5-ը և 1930 թ. առաջին յեռամսյակում՝ մինչև 32՝ այսպիսով տալով աճման տարեցտարի բարձրացող կորագծի պատկեր։

Կարող են ասել,— յեթե բանն այս վիճակումն ե յեղել մինչև այս տարվա առաջին յեռամսյակի վերջը, ապա չի բացառված, վոր այս տարվա յերկրորդ յեռամսյակում նա կարող եր դեպի լավը փոխվել։ Բայց յերկրորդ յեռամսյակի տվյալները վճռականապես հերքում են նման յենթադրությունը։ Ընդհակառակը, նրանք խոսում են այն մասին, վոր դրությունը յերկրորդ յեռամսյակում ել ավելի յե վատթարացել։ Այդ տվյալները ցույց են տալիս ակցիաների նոր անկումը Նյու-Յորկի բորսայում և սնանկությունների նոր ալիքը՝ ՀԱՄՆ-ում. արտադրության նոր կրճատում, բանվորների աշխատավարձի իջեցումը և գործազրկության աճումը՝ ՀԱՄՆ-ում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Հարավային Ամերիկայում, Լեհաստանում, Չեխո-Սլովակիայում և այլն. Ֆրանսիայի արդյունաբերության մի շարք ճյուղերի՝ լճացման շրջան մտնելը, լճացում, վորը ներկա միջազգային տնտեսական պայմաններում սկսվող ճգնաժամի նշան ե։ Գործազուրկներ ներկայումս կան ՀԱՄՆ-ում 6 միլիոնից ավելի, Գերմանիայում՝ մոտ 5 միլիոն, Անգլիայում՝ 2 միլիոնից ավելի, Իտալիայում, Հարավային Ամերիկայում, Ճապոնիայում՝ մեկական միլիոն, Լեհաստանում, Չեխո-Սլովակիայում, Ավստրիայում՝ 500 հազարական։ Ել յես չեմ խոսում միլիոնավոր ֆեր-

մերների ու աշխատավոր գյուղացիների տնտեսությունները քայքայող գյուղատնտեսական ճգնաժամի հետագա սրման մասին։ Գերարտադրության ճգնաժամը գյուղատնտեսության մեջ այն տեղն ե հասել, վոր բարձր գներն ու բուրժուազիայի շահույթները պահպանելու համար Բրազիլիայում ծովն ե գցված 2 միլիոն պարկ սուրճ, Ամերիկայում սկսել են ածխի փոխարեն յեգիպտացորեն վառել, Գերմանիայում միլիոնավոր փթերով հաճար խոզերի կեր են դարձրել, իսկ բամբակի ու ցորենի վերաբերմամբ ձեռք են առնվում բոլոր միջոցները՝ ցանքի տարածությունները մի 10—15 տոկոսով կրճատելու համար։

Այս ե համաշխարհային տնտեսական ծավալվող ճգնաժամի ընդհանուր պատկերը։

բ) Այժմ, յերբ համաշխարհային տնտեսական ճգնաժամը ծավալում ե իր կործանարար ներգործությունը՝ հատակն իջեցնելով միջակ ու մանր կապիտալիստների ամբողջ շերտեր, տնտեսապես քայքայելով բանվորական արիստոկրատիայի ու ֆերմերների ամբողջ խմբեր և սովի մատնելով բանվորների միլիոնավոր մասսաներ,— բոլորը հարցնում են. վորտեղ ե ճգնաժամի պատճառը, ինչումն ե նրա հիմքը, ինչպես կռվել նրա դեմ, ինչպես վոչնչացնել այն։ Ճգնաժամի ամենաբազմազան «թեորիաներ» են հնարվում։ Ճգնաժամը «մեղմելու», «կանխելու», «վերացնելու» ամբողջ նախագծեր են առաջարկվում։ Բուրժուական ոպոզիցիաները գլխով են անում բուրժուական կառավարությունների կողմը, վորոնք, բանից դուրս ե գալիս, ճգնաժամը կանխելու համար «ձեռք չեն առել բոլոր միջոցները»։ «Դեմոկրատները» «հանրապետականներին» են մեղադրում, «հանրապետականները»՝ «դեմոկրատներին», իսկ բոլորը միասին — Հուվերի խմբին՝ նրա «ֆեդերալ ռեզերվային սիստեմով» հանդերձ, վորը չկարողացավ «սանձահարել» ճգնաժամը։ Նույնիսկ այնպիսի խմաստուններ գոյություն ունեն, վորոնք համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառը «բոլշեվիկների դավերի» մեջ են տեսնում։ Յես նկատի ունեմ հայտնի «արդյունաբերող» Թեխբերգին, վորն իսկապես արդյունաբերողի քիչ ե նման և ավելի շուտ հիշեցնում ե «արդյունաբերողի»՝ գրականագետների մեջ և «գրականագետի»՝ արդյունաբերողների մեջ։ (Ծիծաղ)։

Հասկանալի յե, վոր բոլոր այս թեորիաներն ու նախագծերը գիտության հետ վոչ մի ընդհանուր բան չունեն։ Պետք ե ընդունել, վոր բուրժուական տնտեսագետները ճգնաժամի հանդեպ

և իջեցնել արտադրության մակարդակն անցյալ տարվա համեմատությամբ 0,5%-ով՝ այսպիսով մտնելով ճգնաժամի սկզբնական փուլը։

Յերրորդ, նա խոսում է այն մասին, վոր կապիտալիստական խոշոր յերկրներից միայն Ֆրանսիայումն է տեղի ունենում խոշոր արդյունաբերության վորոշ աճում, ըստվորում, յեթե 1928 թ. աճի տոկոսը կազմում եր 13,4, իսկ 1929 թ.՝ 9,4, ապա 1930 թ. առաջին յեռամսյակում աճը 1929 թ. համեմատությամբ կազմում է ընդամենը միայն 3,7%՝ այսպիսով տալով աճման տարեցտարի իջնող կորագծի պատկեր։

Վերջապես, նա խոսում է այն մասին, վոր աշխարհում բոլոր յերկրներից միայն ԽՍՀՄ-ում տեղի ունի խոշոր արդյունաբերության բուռն վերելք, ըստվորում՝ արտադրության մակարդակը 1930 թ. առաջին յեռամսյակում ավելի քան յերկու անգամ գերազանցում է 1927 թ. մակարդակից, իսկ աճի տոկոսը 1928 թ. 17,6-ից 1929 թ. բարձրանում է մինչև 23,5-ը և 1930 թ. առաջին յեռամսյակում՝ մինչև 32՝ այսպիսով տալով աճման տարեցտարի բարձրացող կորագծի պատկեր։

Կարող են ասել,— յեթե բանն այս վիճակումն է յեղել մինչև այս տարվա առաջին յեռամսյակի վերջը, ապա չի բացառված, վոր այս տարվա յերկրորդ յեռամսյակում նա կարող եր դեպի լավը փոխվել։ Բայց յերկրորդ յեռամսյակի տվյալները վճռականապես հերքում են նման յենթադրությունը։ Ընդհակառակը, նրանք խոսում են այն մասին, վոր դրությունը յերկրորդ յեռամսյակում ել ավելի յե վատթարացել։ Այդ տվյալները ցույց են տալիս ակցիաների նոր անկումը Նյու-Յորքի բորսայում և սնանկությունների նոր ալիքը՝ ՀԱՄՆ-ում. արտադրության նոր կրճատում, բանվորների աշխատավարձի իջեցումը և գործազրկության աճումը՝ ՀԱՄՆ-ում, Գերմանիայում, Անգլիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Հարավային Ամերիկայում, Լեհաստանում, Չեխո-Սլովակիայում և այլն. Ֆրանսիայի արդյունաբերության մի շարք ճյուղերի՝ լճացման շրջան մտնելը, լճացում, վորը ներկա միջազգային տնտեսական պայմաններում սկսվող ճգնաժամի նշան է։ Գործազուրկներ ներկայումս կան ՀԱՄՆ-ում՝ 6 միլիոնից ավելի, Գերմանիայում՝ մոտ 5 միլիոն, Անգլիայում՝ 2 միլիոնից ավելի, Իտալիայում, Հարավային Ամերիկայում, Ճապոնիայում՝ մեկական միլիոն, Լեհաստանում, Չեխո-Սլովակիայում, Ավստրիայում՝ 500 հազարական։ Ել յես չեմ խոսում միլիոնավոր ֆեր-

մերների ու աշխատավոր գյուղացիների տնտեսությունները քայքայող գյուղատնտեսական ճգնաժամի հետագա սրման մասին։ Գերարտադրության ճգնաժամը գյուղատնտեսության մեջ այն տեղն է հասել, վոր բարձր գներն ու բուրժուազիայի շահույթները պահպանելու համար Բրազիլիայում ծովն է գցված 2 միլիոն պարկ սուրճ, Ամերիկայում սկսել են ածխի փոխարեն յեգիպտացորեն վառել, Գերմանիայում միլիոնավոր փթերով հաճար խոզերի կեր են դարձրել, իսկ բամբակի ու ցորենի վերաբերմամբ ձեռք են առնվում բոլոր միջոցները՝ ցանքի տարածությունները մի 10—15 տոկոսով կրճատելու համար։

Այս է համաշխարհային տնտեսական ծավալվող ճգնաժամի ընդհանուր պատկերը։

բ) Այժմ, յերբ համաշխարհային տնտեսական ճգնաժամը ծավալում է իր կործանարար ներգործությունը՝ հատակն իջեցնելով միջակ ու մանր կապիտալիստների ամբողջ շերտեր, տնտեսապես քայքայելով բանվորական արիստոկրատիայի ու ֆերմերների ամբողջ խմբեր և սովի մատնելով բանվորների միլիոնավոր մասսաներ,— բոլորը հարցնում են. վորտեղ է ճգնաժամի պատճառը, ինչումն է նրա հիմքը, ինչպես կռվել նրա դեմ, ինչպես վոչնչացնել այն։ Ճգնաժամի ամենաբազմազան «թեորիաներ» են հնարվում։ Ճգնաժամը «մեղմելու», «կանխելու», «վերացնելու» ամբողջ նախագծեր են առաջարկում։ Բուրժուական ոպոզիցիաները գլխով են անում բուրժուական կառավարությունների կողմը, վորոնք, բանից դուրս է գալիս, ճգնաժամը կանխելու համար «ձեռք չեն առել բոլոր միջոցները»։ «Դեմոկրատները» «հանրապետականներին» են մեղադրում, «հանրապետականները»՝ «դեմոկրատներին», իսկ բոլորը միասին — Հուվերի խմբին՝ նրա «ֆեդերալ ռեզերվային սիստեմով» հանդերձ, վորը չկարողացավ «սանձահարել» ճգնաժամը։ Նույնիսկ այնպիսի իմաստուններ գոյություն ունեն, վորոնք համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառը «բոլշևիկների դավերի» մեջ են տեսնում։ Յես նկատի ունեմ հայտնի «արդյունաբերող» Ռեխբերգին, վորն իսկապես արդյունաբերողի քիչ է նման և ավելի շատ հիշեցնում է «արդյունաբերողի»՝ գրականագետների մեջ և «գրականագետի»՝ արդյունաբերողների մեջ։ (Ծիծաղ)։

Հասկանալի յե, վոր բոլոր այս թեորիաներն ու նախագծերը գիտության հետ վոչ մի ընդհանուր բան չունեն։ Պետք է ընդունել, վոր բուրժուական տնտեսագետները ճգնաժամի հանդեպ

կատարելապես սնանկ դուրս յեկան։ Ավելին. նրանք զուրկ գըտնըվեցին կյանքի հոտառության այն մինիմումից իսկ, վոր միշտ ել չի կարելի ժխտել, թե ունեյին նրանց նախորդները։ Այդ պարոնները մոռանում են, վոր չի կարելի ճգնաժամերը դիտել վորպես պատահական յերևույթ կապիտալիստական տնտեսության սիստեմում։ Այդ պարոնները մոռանում են, վոր տնտեսական ճգնաժամերը կապիտալիզմի անխուսափելի հետևանքն են։ Այդ պարոնները մոռանում են, վոր ճգնաժամերը կապիտալիզմի տիրապետության ծնվելու հետ միասին են ծնվել։ Ավելի քան հարյուր տարվա ընթացքում տեղի յեն ունենում պարբերական տնտեսական ճգնաժամեր, կրկնվելով յուրաքանչյուր 12 — 10 — 8 ու պակաս տարին մեկ անգամ։ Այդ ժամանակաշրջանում ամեն կարգի ու գույնի բուրժուական կառավարությունները, ամեն աստիճանի ու ընդունակության տեր բուրժուական գործիչները, — առանց բացառության բոլորը ջանացել են փորձել իրենց ուժերը ճգնաժամերը «կանխելու» ու «վոչնչացնելու» գործի վրա։ Բայց նրանք բոլորն էլ պարտություն են կրել։ Պարտություն են կրել, վորովհետև, մնալով կապիտալիզմի շրջանակներում, չի կարելի կանխել կամ վոչնչացնել տնտեսական ճգնաժամերը։ Եվ ինչ զարմանալու բան կա այստեղ, վոր ներկայիս բուրժուական գործիչները նույնպես պարտություն են կրում։ Եվ ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե բուրժուական կառավարությունների ձեռնարկումներն իրականում տանում են վոչ թե դեպի ճգնաժամի մեղմացում, վոչ թե դեպի աշխատավորության միլիոնավոր մասսաների դրության թեթևացում, այլ դեպի սնանկությունների նոր պայթումներ, դեպի գործազրկության նոր ալիք, դեպի կապիտալիստական պակաս ուժեղ միավորումների կլանում կապիտալիստական ավելի ուժեղ միավորումների կողմից։

Հենց կապիտալիստական տնտեսության սիստեմն է գերարտադրության տնտեսական ճգնաժամերի հիմքը, նրանց պատճառը։ Ճգնաժամի հիմքը արտադրության հասարակական բնույթի և արտադրության արդյունքների յուրացման կապիտալիստական ձևի միջև յեղած հակասությունն է։ Կապիտալիզմի այս հիմնական հակասության արտահայտությունն է այն հակասությունը, վոր գոյություն ունի կապիտալիզմի արտադրական հնարավորությունների՝ կապիտալիստական մաքսիմում շահույթ հետապնդող հսկայական աճման և աշխատավորների միլիոնավոր մասսաների վճարունակ պահանջարկի հարաբերական կրճատման միջև, աշխա-

տավորների, վորոնց կենսական մակարդակը կապիտալիստները շարունակ աշխատում են պահել ծայրահեղ մինիմումի սահմաններում։ Մրցման մեջ շահելու և վորքան կարելի յե շատ շահույթ քամելու համար կապիտալիստները հարկադրված են զարգացնելու տեխնիկան, կիրառելու ռացիոնալիզացիա, ուժեղացնելու բանվորների շահագործումը և բարձրացնելու իրենց ձեռնարկությունների արտադրական հնարավորությունները մինչև վերջին սահմանները։ Իրարից հետ չմնալու համար բոլոր կապիտալիստները հարկադրված են այսպես թե այնպես բռնելու արտադրական հնարավորությունների կատաղի զարգացման այս ճանապարհը։ Բայց ցածր մակարդակի վրա յեն մնում ներքին շուկան ու արտաքին շուկան, վերջին հաշվով հիմնական գնորդներ հանդիսացող բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների գնողունակությունը։ Այստեղից էլ՝ գերարտադրության ճգնաժամերը։ Այստեղից էլ՝ ավելի կամ պակաս պարբերաբար կրկնվող հայտնի այն հետևանքները, վորոնց պատճառով ապրանքները մնում են չվաճառված, արտադրությունը կրճատվում է, աճում է գործազրկությունը, իջնում է աշխատավարձը և, դրանով իսկ, էլ ավելի յե սրվում հակասությունն արտադրության մակարդակի ու վճարունակ պահանջարկի մակարդակի միջև։ Գերարտադրության ճգնաժամն այս հակասության արտահայտությունն է փոթորկալից ու կործանարար ձևերով։ Յեթե կապիտալիզմը կարողանար հարմարեցնել արտադրությունը վոչ թե մաքսիմում շահույթ ստանալուն, այլ ժողովրդական մասսաների նյութական դրությունը սիստեմատիկորեն բարելավելուն, յեթե նա կարողանար շահույթը գործադրել վոչ թե մակաբույծ դասակարգերի քմահաճույքները բավարարելու վրա, վոչ թե շահագործման մեթոդները կատարելագործելու վրա, վոչ թե կապիտալ արտահանելու վրա, այլ բանվորների ու գյուղացիների նյութական դրության սիստեմատիկ բարձրացման վրա, ապա այն ժամանակ ճգնաժամեր չեյին լինի։ Բայց այն ժամանակ կապիտալիզմն էլ կապիտալիզմ չեր լինի։ Ճգնաժամերը վոչնչացնելու համար պետք է վոչնչացնել կապիտալիզմը։

Այս է ընդհանրապես գերարտադրության տնտեսական ճըգնաժամերի հիմքը։

Բայց այժմյան ճգնաժամը բնորոշելիս բանը չի կարող սահմանափակվել սրանով։ Այժմյան ճգնաժամը հին ճգնաժամերի սովորական կրկնությունը չէ։ Նա տեղի յե ունենում և ծավալվում է

կատարելապես սնանկ դուրս յեկան: Ավելին. նրանք զուրկ գըտնըվեցին կյանքի հոտառության այն մինիմումից իսկ, վոր միշտ էլ չի կարելի ժխտել, թե ունեյին նրանց նախորդները: Այդ պարոնները մոռանում են, վոր չի կարելի ճգնաժամերը դիտել վորպես պատահական յերևույթ կապիտալիստական տնտեսության սիստեմում: Այդ պարոնները մոռանում են, վոր տնտեսական ճգնաժամերը կապիտալիզմի անխուսափելի հետևանքն են: Այդ պարոնները մոռանում են, վոր ճգնաժամերը կապիտալիզմի տիրապետության ծնվելու հետ միասին են ծնվել: Ավելի քան հարյուր տարվա ընթացքում տեղի յեն ունենում պարբերական տնտեսական ճգնաժամեր, կրկնվելով յուրաքանչյուր 12 — 10 — 8 ու պակաս տարին մեկ անգամ: Այդ ժամանակաշրջանում ամեն կարգի ու գույնի բուրժուական կառավարությունները, ամեն աստիճանի ու ընդունակության տեր բուրժուական գործիչները, — առանց բացառության բոլորը ջանացել են փորձել իրենց ուժերը ճգնաժամերը «կանխելու» ու «վոչնչացնելու» գործի վրա: Բայց նրանք բոլորն էլ պարտություն են կրել: Պարտություն են կրել, վորովհետև, մնալով կապիտալիզմի շրջանակներում, չի կարելի կանխել կամ վոչնչացնել տնտեսական ճգնաժամերը: Էլ ինչ զարմանալու բան կա այստեղ, վոր ներկայիս բուրժուական գործիչները նույնպես պարտություն են կրում: Էլ ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե բուրժուական կառավարությունների ձեռնարկումներն իրականում տանում են վոչ թե դեպի ճգնաժամի մեղմացում, վոչ թե դեպի աշխատավորության միլիոնավոր մասսաների դրության թեթևացում, այլ դեպի սնանկությունների նոր պայթումներ, դեպի գործազրկության նոր ալիք, դեպի կապիտալիստական պակաս ուժեղ միավորումների կլանում կապիտալիստական ավելի ուժեղ միավորումների կողմից:

Հենց կապիտալիստական տնտեսության սիստեմն է գերարտադրության տնտեսական ճգնաժամերի հիմքը, նրանց պատճառը: Ճգնաժամի հիմքը արտադրության հասարակական բնույթի և արտադրության արդյունքների յուրացման կապիտալիստական ձևի միջև յեղած հակասությունն է: Կապիտալիզմի այս հիմնական հակասության արտահայտությունն է այն հակասությունը, վոր գոյություն ունի կապիտալիզմի արտադրական հնարավորությունների՝ կապիտալիստական մաքսիմում շահույթ հետապնդող հսկայական աճման և աշխատավորների միլիոնավոր մասսաների վճարունակ պահանջարկի հարաբերական կրճատման միջև, աշխատավորների, վորոնց կենսական մակարդակը կապիտալիստները շարունակ աշխատում են պահել ծայրահեղ մինիմումի սահմաններում: Մրցման մեջ շահելու և վորքան կարելի յե շատ շահույթ քամելու համար կապիտալիստները հարկադրված են զարգացնելու տեխնիկան, կիրառելու ռացիոնալիզացիա, ուժեղացնելու բանվորների շահագործումը և բարձրացնելու իրենց ձեռնարկությունների արտադրական հնարավորությունները մինչև վերջին սահմանները: Իրարից հետ չմնալու համար բոլոր կապիտալիստները հարկադրված են այսպես թե այնպես բռնելու արտադրական հնարավորությունների կատաղի զարգացման այս ճանապարհը: Բայց ցածր մակարդակի վրա յեն մնում ներքին շուկան ու արտաքին շուկան, վերջին հաշվով հիմնական գնորդներ հանդիսացող բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների գնողունակությունը: Այստեղից էլ՝ գերարտադրության ճգնաժամերը: Այստեղից էլ՝ ավելի կամ պակաս պարբերաբար կրկնվող հայտնի այն հետևանքները, վորոնց պատճառով ապրանքները մնում են չվաճառված, արտադրությունը կրճատվում է, աճում է գործազրկությունը, իջնում է աշխատավարձը և, դրանով իսկ, էլ ավելի յե սրվում հակասությունն արտադրության մակարդակի ու վճարունակ պահանջարկի մակարդակի միջև: Գերարտադրության ճգնաժամն այս հակասության արտահայտությունն է փոթորկալից ու կործանարար ձևերով: Յեթե կապիտալիզմը կարողանար հարմարեցնել արտադրությունը վոչ թե մաքսիմում շահույթ ստանալուն, այլ ժողովրդական մասսաների նյութական դրությունը սիստեմատիկորեն բարելավելուն, յեթե նա կարողանար շահույթը գործադրել վոչ թե մակաբույծ դասակարգերի քմահաճույքները բավարարելու վրա, վոչ թե շահագործման մեթոդները կատարելագործելու վրա, վոչ թե կապիտալ արտահանելու վրա, այլ բանվորների ու գյուղացիների նյութական դրության սիստեմատիկ բարձրացման վրա, ապա այն ժամանակ ճգնաժամեր չեյին լինի: Բայց այն ժամանակ կապիտալիզմն էլ կապիտալիզմ չեր լինի: Ճգնաժամերը վոչնչացնելու համար պետք է վոչնչացնել կապիտալիզմը:

Այս է ընդհանրապես գերարտադրության տնտեսական ճըգնաժամերի հիմքը:

Բայց այժմյան ճգնաժամը բնորոշելիս բանը չի կարող սահմանափակվել սրանով: Այժմյան ճգնաժամը հին ճգնաժամերի սովորական կրկնությունը չէ: Նա տեղի յե ունենում և ծավալվում է

միքանի նոր պայմաններում, վոր անհրաժեշտ ե հայտաբերել՝ ճգնաժամի լիակատար պատկերն ստանալու համար: Նրան բարդացնում ու խորացնում են մի ամբողջ շարք հատուկ հանգամանքներ, վորոնք չպարզելով՝ անկարելի յե պարզ պատկերացում կազմել տնտեսական ներկա ճգնաժամի մասին:

Այդ ինչ հատուկ հանգամանքներ են:

Նրանք, այդ հատուկ հանգամանքները, հանգում են հետևյալ բնորոշ փաստերին.

1. Ճգնաժամն ամենից ավելի ուժեղ հարվածել ե կապիտալիզմի գլխավոր յերկրին, նրա միջնաբերդին, ՀԱՄՆ-ին, վոր իր ձեռքումն ե կենտրոնացնում աշխարհիս բոլոր յերկիրների ամբողջ արտադրության ու սպառման կեսից վոչ պակասը: Հասկանալի յե, վոր այս հանգամանքը չի կարող չտանել դեպի ճգնաժամի ազդեցության վոլորտի հսկայական ընդլայնում, ճգնաժամի սրում և համաշխարհային կապիտալիզմի համար գերնախահաշվային (сверхсметных) դժվարությունների կուտակում:

2. Գլխավոր կապիտալիստական յերկիրների արդյունաբերական ճգնաժամը տնտեսական ճգնաժամի ծավալման ընթացքում վոչ թե սոսկ զուգադիպեց, այլ միահյուսվեց գյուղատնտեսական ճգնաժամի հետ ագրարային յերկիրներում՝ կրկնապատկելով դժվարությունները և կանխորոշելով տնտեսական ակտիվության ընդհանուր անկման անխուսափելիությունը: Ինչ ասել կուզի, վոր արդյունաբերական ճգնաժամն ուժեղացնելու յե գյուղատնտեսականը, իսկ գյուղատնտեսականը ձգձգելու յե արդյունաբերականը, վոր չի կարող չհասցնել ամբողջությամբ վերցրած՝ տնտեսական ճգնաժամի խորացմանը:

3. Այժմյան կապիտալիզմը, ի տարբերություն հին կապիտալիզմից, մոնոպոլիստական կապիտալիզմ ե, իսկ այս կանխորոշում ե կապիտալիստական միավորումների պայքարի անխուսափելիությունը՝ ապրանքների բարձր, մենաշնորհային գները պահպանելու համար՝ չնայած գերարտադրությանը: Հասկանալի յե, վոր այս հանգամանքը, առանձնապես տանջալից ու ավերիչ դարձնելով ճգնաժամը ժողովրդական մասսաների համար, վորոնք ապրանքների հիմնական սպառողներն են հանդիսանում, չի կարող չտանել դեպի ճգնաժամի ձգձգում, չի կարող չարգելակել նրա տարծծումը:

4. Այժմյան տնտեսական ճգնաժամը ծավալվում ե կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բազայի վրա, վորը ծագել ե դեռ-

ևս իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում, խարխլում ե կապիտալիզմի հիմքերը և հեշտացրել ե տնտեսական ճգնաժամի գալը:

Այս ինչ ե նշանակում:

Այս, ամենից առաջ, նշանակում ե, վոր իմպերիալիստական պատերազմը և նրա հետևանքներն ուժեղացրին կապիտալիզմի նեխումն ու խախտեցին նրա հավասարակշռությունը, վոր մենք այժմ ապրում ենք պատերազմների ու հեղափոխությունների դարաշրջանում, վոր կապիտալիզմը համաշխարհային տնտեսության միակ ու համապարփակ սիստեմը չի հանդիսանում արդեն, վոր տնտեսության կապիտալիստական սիստեմի կողքին գոյություն ունի սոցիալիստական սիստեմը, վորն աճում ե, վորն առաջադիմում ե, վորը դիմակայում ե կապիտալիստական սիստեմին և վորը հենց իր գոյության փաստով ցուցադրում ե կապիտալիզմի նեխվածությունը, ցնցում ե նրա հիմքերը:

Ապա, այս նշանակում ե, վոր իմպերիալիստական պատերազմը և հեղափոխության հաղթությունը ԽՍՀՄ-ում ցնցեցին իմպերիալիզմի հիմքերը գաղութային ու կախյալ յերկիրներում, վոր իմպերիալիզմի հեղինակությունն այդ յերկիրներում արդեն խախտված ե, վոր նա այլևս ի վիճակի չե ըստ հնի տեր ու տնօրեն լինելու այդ յերկիրներում:

Այնուհետև, այս նշանակում ե, վոր պատերազմի ընթացքում և նրանից հետո գաղութային ու կախյալ յերկիրներում յերևան ե յեկել և աճել ե իրենց սեփական յերիտասարդ կապիտալիզմը, վորը շուկաներում հաջողությամբ մրցում ե կապիտալիստական հին յերկիրների հետ՝ սրելով ու բարդացնելով վաճառահանման շուկաների համար մղվող պայքարը:

Վերջապես, այս նշանակում ե, վոր պատերազմը կապիտալիստական յերկիրների մեծամասնությանը ծանր ժառանգություն ե թողել ձեռնարկությունների խրոնիկական թերաբեռնվածության ու գործազուրկների այն միլիոնավոր բանակների առկայության կերպարանքով, վորոնք պահեստի բանակներից վերածվել են գործազուրկների մշտական բանակների,—մի բան, վորը կապիտալիզմի համար ահագին դժվարություններ եր ստեղծում դեռ մինչև այժմյան տնտեսական ճգնաժամը և վորը պետք ե ել ավելի բարդացնի գործը ճգնաժամի միջոցին:

Սրանք են այն հանգամանքները, վոր սաստկացնում ու սրում են համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Պետք է ընդունել, վոր այժմյան տնտեսական ճգնաժամը մինչև այժմ գոյություն ունեցած համաշխարհային տնտեսական բոլոր ճգնաժամերից ամենալուրջ ու ամենախոր ճգնաժամն է։

2. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի կարևորագույն արդյունքն են այն հակասությունների մերկացումն ու սրումը, վորոնք հատուկ են համաշխարհային կապիտալիզմին։

ա) Մերկանում ու սրվում են հակասությունները իմպերիալիստական կարևորագույն յերկիրների միջև, պայքարը վաճառահանման շուկաների համար, պայքարը հումքի համար, պայքարը կապիտալի արտահանման համար։ Ազդեցության վոլորտների ու գաղութների հին բաշխումն այժմ կապիտալիստական պետություններից վոչ մեկին չի բավարարում։ Նրանք տեսնում են, վոր փոխվել է ուժերի հարաբերակցությունը և սրան համապատասխան պետք է վերաբաժանել վաճառահանման շուկաները, հումքի աղբյուրները, ազդեցության վոլորտները և այլն։ Այս հակասություններից գլխավորը՝ ՀԱՄՆ-ի ու Անգլիայի միջև յեղած հակասությունն է։ Թե՛ պատրաստի ապրանքների արտահանման բնագավառում, թե՛ կապիտալի արտահանման բնագավառում պայքարն ընթանում է գլխավորապես ՀԱՄՆ-ի ու Անգլիայի միջև։ Սրան համոզվելու համար բավական է, վոր վերցնենք ուզածդ տնտեսագիտական թերթը, ապրանքների ու կապիտալի արտահանման վերաբերյալ ուզածդ փաստաթուղթը։ Պայքարի գլխավոր ասպարեզը Հարավային Ամերիկան է, Չինաստանը, հին իմպերիալիստական պետությունների գաղութներն ու դոմինիոնները։ Այս պայքարում ուժերի գերակշռությունը, — ըստ վորում՝ վորոշակի գերակշռությունը, — ՀԱՄՆ-ի կողմն է։ Գլխավոր հակասությունից հետո գալիս են վոչ գլխավոր, բայց բավականին էական հակասությունները՝ Ամերիկայի ու Ճապոնիայի միջև, Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև, Ֆրանսիայի ու Իտալիայի միջև, Անգլիայի ու Ֆրանսիայի միջև և այլն։

Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր զարգացող ճգնաժամի կապակցությամբ ամսե-ամիս, որեցոր ուժեղանալու յե պայքարը վաճառահանման շուկաների համար, հումքի համար, կապիտալի արտահանման համար։

Պայքարի միջոցներն են՝ մաքսային քաղաքականությունը,

էժան ապրանքը, էժան վարկը, ուժերի վերախմբավորումն ու ռազմա-քաղաքական նոր դաշինքները, սպառազինումների աճումն ու իմպերիալիստական նոր պատերազմների համար պատրաստվելը, վերջապես՝ պատերազմը։ Յես խոսեցի ճգնաժամի մասին, վոր ընդգրկել է արտադրության բոլոր ճյուղերը։ Բայց կա մի ճյուղ, վորը չի բռնված ճգնաժամով։ Այդ ճյուղը ռազմական արդյունաբերությունն է։ Չնայած ճգնաժամին՝ նա շարունակ աճում է։ Բուրժուական պետությունները կատաղի կերպով զինվում ու վերազինվում են։ Ինչի՞ համար։ Իհարկե, վո՛չ թե զրույցի համար, այլ պատերազմի համար։ Իսկ իմպերիալիստներին պատերազմը հարկավոր է, վորովհետև նա միակ միջոցն է աշխարհը վերաբաժանելու համար, վաճառահանման շուկաները, հումքի աղբյուրները, կապիտալի գործադրման վոլորտները վերաբաժանելու համար։

Միանգամայն հասկանալի յե, վոր այս իրադրության մեջ այսպես կոչված պացիֆիզմը վերջին որերն է ապրում, Ազգերի Լիգան վողջ-վողջ նեխվում է, «զինաթափման նախագծերը» անդունդն են գլորվում, իսկ ծովային սպառազինումների կրճատման կոնֆերենցիաները ծովային նավատորմը նորոգելու և ընդլայնելու կոնֆերենցիաների յեն վերածվում։

Այս նշանակում է, վոր պատերազմի վտանգն արագացված տեմպով է աճելու։

Թող սոցիալ-դեմոկրատները շաղակրատեն պացիֆիզմի մասին, խաղաղության մասին, կապիտալիզմի խաղաղ զարգացման մասին և այլն։ Գերմանիայում ու Անգլիայում սոցիալ-դեմոկրատիայի իշխանության գլուխ կանգնած լինելու փորձը ցույց է տալիս, վոր պացիֆիզմը նրանցում միմիայն մի դիմակ է, վորն անհրաժեշտ է նոր պատերազմներ պատրաստելը քողարկելու համար։

2063
38

բ) Մերկանում են և սրվելու յեն հակասությունները հաղթած յերկիրների ու պարտված յերկիրների միջև։ Վերջինների թվից յես նկատի ունեմ գլխավորապես Գերմանիան։ Անկասկած է, վոր ճգնաժամի կապակցությամբ ու շուկաների պրոբլեմի սրման կապակցությամբ կուժեղանա ճնշումը Գերմանիայի վրա, վորը վո՛չ միայն պարտապան է, այլև խոշորագույն արտահանող։ Հաղթած յերկրների ու Գերմանիայի միջև ստեղծված յուրատեսակ հարաբերությունները կարելի կլիներ պատկերել մի բուրգի ձևով, վորի գագաթին տիրաբար նստած են Ամերիկան, Ֆրանսի-

160—2.

ան, Անգլիան և այլն՝ ձեռներին Յունգի պլանը՝ «Վճարիր» մակագրությամբ, իսկ ներքևում գետնին փռված է Գերմանիան, որն ուժասպառ է լինում և հարկադրված է իրենից դուրս քաշել բոլոր ուժերը, որպեսզի կատարի միլիարդավոր կոնտրիբուցիա վճարելու հրամանը։ Դուք ուզում եք իմանալ, թե այս ինչ է նշանակում։ Սա «Լոկարնոյի ոգին է»։ Կարծել, թե համաշխարհային կապիտալիզմի համար անհետևանք կարող է անցնել մի այսպիսի դրություն՝ նշանակում է ոչինչ չհասկանալ կյանքում։ Կարծել, թե գերմանական բուրժուազիան առաջիկա 10 տարում կարող կլինի վճարել 20 միլիարդ մարկ, իսկ գերմանական պրոլետարիատը, որն ապրում է «իր» և «օտար» բուրժուազիայի կրկնակի լծի տակ, թույլ կտա գերմանական բուրժուազիային, որ առանց լուրջ մարտերի ու ցնցումների քամե իր յերակներից այդ 20 միլիարդը,—նշանակում է խելագարվել։ Թող գերմանական ու ֆրանսիական քաղաքագետները ձևացնեն, թե իրենք հավատում են այդ հրաշքին։ Մենք, բոլշևիկներս, հրաշքների չենք հավատում։

գ) Մերկանում և սրվում են հակասությունները իմպերիալիստական պետությունների և գաղութային ու կախյալ յերկրների միջև։ Տնտեսական աճող ճգնաժամը չի կարող չուժեղացնել իմպերիալիստների ճնշումը գաղութների ու կախյալ յերկրների նկատմամբ, վորոնք վաճառահանման ու հումքի հիմնական շուկաներն են հանդիսանում։ Յեվ իրոք՝ ճնշումն ուժեղանում է ծայր աստիճանի։ Սա փաստ է, վոր յեվրոպական բուրժուազիան այժմ պատերազմի վիճակում է գտնվում «իր» գաղութների հետ Հնդկաստանում, Հնդկա-Չինում, Ինդոնեզիայում, Հյուսիսային Աֆրիկայում։ Սա փաստ է, վոր «անկախ» Չինաստանը փաստորեն արդեն բաժանված է ազդեցության վոլորտների, իսկ հակահեղափոխական գոմինդանականների գեներալական կլիկները պատերազմելով միմյանց հետ ու տնտեսապես քայքայելով չինական ժողովրդին՝ կատարում են իմպերիալիստական բանակին պատկանող իրենց տերերի կամքը։

Պետք է վերջնականապես տապալված համարել ստահոդ այն վերսիան, թե Չինաստանում «խաղաղության ու հանգստության» խանգարելու սկզբնապատճառը Չինաստանի ռուսական դեսպանությունների աշխատողներն են։ Ռուսական դեսպանություններ վաղուց արդեն չկան վոչ հարավային, վոչ էլ միջին Չինաստանում։ Բայց դրա փոխարեն կան անգլիական, ճապոնական, գերմանական, ամերիկյան և ամեն տեսակի ուրիշ դեսպանություններ։ Ռուսական դեսպանություններ վաղուց արդեն չկան վոչ հարավային, վոչ էլ միջին Չինաստանում։ Բայց դրա փոխարեն՝ պատերազմող չինական գեներալներին առընթեր կան գերմանական, անգլիական ու ճապոնական զինվորական խորհրդատուներ։ Ռուսական դեսպանություններ վաղուց արդեն չկան այնտեղ։ Բայց դրա փոխարեն կան անգլիական, ամերիկյան, գերմանական, չեխո-սլովակյան և ամեն տեսակի այլ հրանոթներ, հրացաններ, սավառնակներ, տանկեր, թունավորող գազեր։ Յեվ ինչ։ «Խաղաղության ու հանգստության» փոխարեն հարավային ու միջին Չինաստանում մենք այժմ ունենք գեներալական ամենասանձարձակ ու ամենաավերիչ մի պատերազմ, վոր ֆինանսավորվում ու հրահանգվում է Յեվրոպայի ու Ամերիկայի «քաղաքակիրթ» պետությունների կողմից։ Ստացվում է կապիտալիստական պետությունների «քաղաքակրթական» աշխատանքի բավականին պիկանտ մի պատկեր։ Հայտնի չէ միայն, թե ինչ գործ ունեն այստեղ ռուսական բոլշևիկները։

Ծիծաղելի կլիներ կարծել, թե իմպերիալիստների այս խըժդըժությունները նրանց համար անհետևանք կանցնեն։ Չինական բանվորներն ու գյուղացիներն արդեն տվել են այդ խժդժությունների պատասխանը՝ խորհուրդներ ու կարմիր բանակ ստեղծելով։ Ասում են, վոր այնտեղ արդեն խորհրդային կառավարություն է կազմվել։ Յես կարծում եմ, վոր յեթե այս ճիշտ է, ապա այստեղ զարմանալու վոչինչ չկա։ Կասկած չի կարող լինել, վոր միայն խորհուրդները կարող են փրկել Չինաստանը վերջնական քայքայումից ու թշվառությունից։

Ինչ վերաբերում է Հնդկաստանին, Հնդկա-Չինին, Ինդոնեզիային, Աֆրիկային և այլն, ապա վոչ մի կասկածի յենթակա չէ այդ յերկրների հեղափոխական շարժման աճումը, վորը յերբեմնակի ընդունում է ազատագրման համար մղվող ազգային պատերազմի ձևեր։ Պարոն բուրժուաները հույս ունեին արյունով հեղեղելու այս յերկրները և վոստիկանական սվինների վրա հենվելու՝ օգնության կանչելով Գանդիի նման մարդկանց։ Կասկած չի կարող լինել, վոր վոստիկանական սվինները վատ հենարան են։ Իր ժամանակին ցարիզմը նույնպես ջանում էր հենվելու վոստիկանական սվինների վրա, բայց թե դրանից ինչպիսի հենարան դուրս յեկավ, հայտնի յե բոլորին։ Ինչ վերաբերում է Գանդիի տիպի օգնականներին, ապա ցարիզմն

այդպիսիների մի ամբողջ հոտ ուներ՝ հանձինս ամեն տեսակի լիբերալ համաձայնողականների, սակայն սրանից վոչինչ ել դուրս չեկավ, բացի կոնֆուզից:

դ) Մերկացել և սրվել են հակասությունները բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև կապիտալիստական յերկրներում: Ճգնաժամն արդեն կարողացել է ուժեղացնել կապիտալիստների ճնշումը բանվոր դասակարգի վրա: Ճգնաժամն արդեն կարողացել է առաջացնել կապիտալիստական ռացիոնալիզացիայի նոր ալիք, բանվոր դասակարգի դրության նոր վատթարացում, գործազրկության աճում, գործազուրկների մշտական բանակի ընդլայնում, աշխատավարձի իջեցում: Զարմանալի չէ, վոր այս հանգամանքները հեղափոխականացնում են իրադրությունը, սրում են դասակարգերի կռիվը և բանվորներին մղում են դեպի դասակարգային նոր մարտեր:

Սրա կապակցությամբ կործանվում ու խորտակվում են բանվորական մասսաների մեջ սոցիալ-դեմոկրատական պատրանքները: Սոցիալ-դեմոկրատների՝ իշխանության գլուխ կանգնած լինելու փորձից հետո, յերբ նրանք վիժեցնում են գործադուլները, լոկաուտներ են կազմակերպում ու գնդակահարում են բանվորներին, բանվորների ականջին վորպես չարամիտ ծաղր են հնչում «արտադրական դեմոկրատիայի», «արդյունաբերական խաղաղության», պայքարի «խաղաղ մեթոդների» վերաբերյալ սահող խոստումները: Արդյոք այժմ սոցիալ-ֆաշիստների սահող քարոզին հավատալու ընդունակ շատ բանվորներ կգտնվեն: 1929 թվականի օգոստոսի 1-ի (պատերազմի վտանգի դեմ) և 1930 թ. մարտի 6-ի (գործազրկության դեմ) բանվորական հայտնի ցույցերը ցույց են տալիս, վոր բանվոր դասակարգի լավագույն մարդիկ արդեն յերես են դարձրել սոցիալ-ֆաշիստներից: Տնտեսական ճգնաժամը նոր հարված կհասցնի բանվորների շրջանում յեղած սոցիալ-դեմոկրատական պատրանքներին: Այժմ քիչ բանվորներ կգտնվեն, վորոնք ճգնաժամի կապակցությամբ յեղած սնանկություններից ու ավերումներից հետո համաձայնեն հավատալու, թե բաժնետիրական «դեմոկրատացված» ընկերություններին մասնակցելու միջոցով «յուրաքանչյուր բանվոր» հարստանալու հնարավորություն ունի: Ինչ ասել կուզի, վոր ճգնաժամը խորտակիչ հարված կհասցնի բոլոր այսպիսի ու սրանց նման պատրանքներին:

Բայց սոցիալ-դեմոկրատիայից բանվորական մասսաների

հեռանալը նշանակում է նրանց շրջադարձը կոմունիզմի կողմը: Իսկապես այդպես էլ տեղի յե ունենում: Կոմկուսակցությանը հարող արհմիութենական շարժման աճումը, կոմկուսակցությունների ընտրական հաջողությունները, կոմունիստների ղեկավար մասնակցությամբ տեղի ունեցող գործադուլների ալիքը, տնտեսական գործադուլների վերաճումը քաղաքական բողոքների, վոր կազմակերպում են կոմունիստները, կոմունիզմին համակրող բանվորների մասսայական ցույցերը, վոր ամենաաշխույժ արձագանք են գտնում բանվոր դասակարգի մեջ,— այս ամենը խոսում է այն մասին, վոր բանվորական մասսաները կոմկուսակցության մեջ տեսնում են միակ կուսակցությունը, վորն ընդունակ է պայքարելու կապիտալիզմի դեմ, միակ կուսակցությունը, վորն արժանի յե բանվորների վստահությանը, միակ կուսակցությունը, վորի հետեից կարելի յե և արժե գնալ կապիտալիզմից ազատագրվելու պայքարում: Սա մասսաների շրջադարձն է կոմունիզմի կողմը: Սա յերաշխիք է, վորպեսզի մեր յեղբայրական կոմկուսակցությունները բանվոր դասակարգի մեծ մասսայական կուսակցություններ դառնան: Միայն թե անհրաժեշտ է, վոր կոմունիստները կարողանան գնահատել իրադրությունը և օգտագործեն այն՝ ինչպես հարկն է: Անհաշտ պայքար ծավալելով սոցիալ-դեմոկրատիայի դեմ, վորը կապիտալի գործակալությունն է բանվոր դասակարգի մեջ, և ջարդուփշուր անելով բոլոր ու ամեն տեսակի թեքումները լենինիզմից, թեքումներ, վորոնք ջուր են լցնում սոցիալ-դեմոկրատիայի ջրաղացին,— կոմկուսակցությունները ցույց տվին, վոր իրենք ուղիղ ճանապարհի վրա յեն կանգնած: Անհրաժեշտ է, վոր նրանք վերջնականապես ամրանան այդ ճանապարհին: Վորովհետև նրանք միմիայն այս պարագայում կարող են հույս ունենալ, վոր կնվաճեն բանվոր դասակարգի մեծամասնությունը և հաջողությամբ կնախապատրաստեն պրոլետարիատը դալիք դասակարգային մարտերի համար: Վորովհետև միմիայն այս պարագայում կարելի յե հույս դնել Կոմունիստական Ինտերնացիոնալի ազդեցության ու հեղինակության հետագա աճման վրա:

Այս է համաշխարհային կապիտալիզմի հիմնական հակասությունների վիճակը, վորոնք ծայր աստիճան սրվել են համաշխարհային տնտեսական ճգնաժամի կապակցությամբ:

Ինչի՞ մասին են խոսում այս բոլոր փաստերը:

Այն մասին, որ կապիտալիզմի կայունացման վերջը գալիս է։

Այն մասին, որ մասսաների հեղափոխական շարժման վերելքն աճելու է նոր ուժով։

Այն մասին, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամը մի շարք երկրներում վերաճելու է քաղաքական ճգնաժամի։

Առաջին՝ այս նշանակում է, որ բուրժուազիան դրությունից ելք է որոնելու հետագա ֆաշիզացման մեջ ներքին քաղաքականության բնագավառում՝ օգտագործելով սրա համար բոլոր ռեակցիոն ուժերը, այդ թվում և սոցիալ-դեմոկրատիային։

Երկրորդ, այս նշանակում է, որ բուրժուազիան ելք է որոնելու իմպերիալիստական նոր պատերազմի ու ինտերվենցիայի մեջ՝ արտաքին քաղաքականության բնագավառում։

Վերջապես, այս նշանակում է, որ պրոլետարիատը, պայքարելով կապիտալիստական շահագործման ու պատերազմի վտանգի դեմ՝ ելք է որոնելու հեղափոխության մեջ։

3. ԽՍՀՄ-Ի ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ես վերը խոսեցի համաշխարհային կապիտալիզմի հակասությունների մասին։ Բայց բացի այդ հակասություններից՝ մի հակասություն էլ գոյություն ունի։ Ես խոսում եմ կապիտալիստական աշխարհի և ԽՍՀՄ-ի միջև եղած հակասության մասին։ Ճիշտ է, այս հակասությունը ներկապիտալիստական կարգի հակասություն չէ։ Նա մի հակասություն է ամբողջությամբ առած կապիտալիզմի ու կառուցվող սոցիալիզմի երկրի միջև։ Բայց սա չի խանգարում, որ նա քայքայի ու ցնցի կապիտալիզմի բուն հիմքերը։ Դեռ ավելին. նա մինչև արմատները բաց է անում կապիտալիզմի բոլոր հակասությունները և հավաքում է մի հանգույցի մեջ՝ նրանց դարձնելով բուն իսկ կապիտալիստական կարգերի կյանքի ու մահու խնդիր։ Ուստի և ամեն անգամ, երբ սկսում են սրվել կապիտալիստական հակասությունները, բուրժուազիան իր հայացքը դարձնում է ԽՍՀՄ-ի կողմը. արդյոք չի՞ կարելի կապիտալիզմի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները միասին վերցրած՝ լուծել ի հաշիվ ԽՍՀՄ-ի, Խորհուրդների այս երկրի, հեղափոխության միջնաբերդի, որն իր սոսկական գոյությամբ հեղափոխականացնում է բանվոր դասակարգին ու գաղութները, որը խանգարում է նոր պատերազմ դուրս բերելուն, խանգարում է աշխարհը նոր կերպ վերաբաժանելուն, խանգարում է տեր ու տիրականություն անելու իր ընդարձակ ներքին շուկայում, որ այնքան անհրաժեշտ է կապիտալիստներին, մանավանդ այժմ, տնտեսական ճգնաժամի կապակցությամբ։

Այստեղից էլ՝ ԽՍՀՄ-ի վրա ավանտյուրիստական հանկարծակի հարձակումներ գործելու և ինտերվենցիայի այն տենդենցը, որը պետք է ուժեղանա ծավալվող տնտեսական ճգնաժամի կապակցությամբ։

Տվյալ մոմենտում այդ տենդենցի ամենացայտուն արտահայտիչը ներկայիս բուրժուական Ֆրանսիան է՝ սիրառատ «Պան-Եվրոպայի» հայրենիքը, Կելլոգի պակտի «օրրանը», աշխարհի ագրեսիվ ու միլիտարիստական բոլոր երկրներից ամենաագրեսիվն ու ամենամիլիտարիստականը։

Բայց ինտերվենցիան երկսայր փայտ է։ Սա բուրժուազիային հայտնի է սքանչելապես։ Լավ է,—մտածում է նա,— եթե ինտերվենցիան սահուն անցնի ու վերջանա ԽՍՀՄ-ի պարտությամբ։ Ե, հապա ինչ անենք, եթե նա վերջանա կապիտալիստների պարտությամբ։ Չէ՞ որ մի ինտերվենցիա արդեն եղել է, որը կրախով է վերջացել։ Եթե առաջին ինտերվենցիան կրախով է վերջացել, երբ բոլշևիկները թույլ էին, ինչ երաշխիք կա, թե երկրորդը նույնպես կրախով չի վերջանա։ Բոլորն էլ տեսնում են, որ բոլշևիկներն այժմ շատ ավելի ուժեղ են թե տնտեսապես, թե քաղաքականապես, թե երկրի պաշտպանունակությունը նախապատրաստելու իմաստով։ Իսկ ինչպես վարվել կապիտալիստական երկրների բանվորների հետ, որոնք չեն թողնի ինտերվենցիայի ենթարկել ԽՍՀՄ-ն, որոնք կկռվեն ինտերվենցիայի դեմ և որոնք պատեհ դեպքում կարող են կապիտալիստներին հարվածել թիկունքից։ Արդյոք ավելի լավ չի՞ լինի գնալ ԽՍՀՄ-ի հետ առևտրական կապերն ուժեղացնելու գծով, ինչի դեմ բոլշևիկներն էլ չեն առարկում։

Այստեղից՝ ԽՍՀՄ-ի հետ խաղաղ հարաբերությունները շարունակելու տենդենցը։

Այսպիսով, մենք ունենք գործոնների երկու շարք և երկու տարբեր տենդենցներ, որոնք հակադիր ուղղություններով են գործում։

1. Կապիտալիստական երկրների հետ ԽՍՀՄ-ի տնտեսա-

կան կապերը խափանելու քաղաքականություն, պրովոկացիոն հանկարծակի հարձակումներ ԽՍՀՄ-ի վրա, ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա պատրաստելու ակներև ու ծածուկ աշխատանք: Սրանք գործոններ են, վորոնք սպառնում են ԽՍՀՄ-ի միջազգային դրությանը: Այս ֆակտորների ներգործությամբ են բացատրվում այնպիսի փաստեր, ինչպես են անգլիական պահպանողական կաբինետի կողմից հարաբերությունների խզումը ԽՍՀՄ-ի հետ, Չին-Արևելյան յերկաթուղու զավթումը չինական միլիտարիստների կողմից, ԽՍՀՄ-ն ֆինանսապես ողակելը, պապի գլխավորությամբ կղերականների «արշավը» ԽՍՀՄ-ի դեմ, մեր մասնագետների վնասարարության կազմակերպումն օտար պետությունների գործակալների կողմից, պայթյունների ու հրկիզումների կազմակերպումը՝ նման նրանց, վոր կատարել են «Լենա-Գոլդֆիլդս»-ի ծառայողներից վոմանք, մահափորձեր ԽՍՀՄ-ի ներկայացուցիչների դեմ (Լեհաստան), բծախնդրություններ մեր եքսպորտի վերաբերմամբ (ՀԱՄՆ, Լեհաստան) և այլն:

2. Համակրանք ու աջակցություն ԽՍՀՄ-ին կապիտալիստական յերկրների բանվորների կողմից, ԽՍՀՄ-ի տնտեսական ու քաղաքական հզորության աճում, ԽՍՀՄ-ի պաշտպանունակության աճում, խաղաղության քաղաքականություն, վորն անփոփոխ կիրառում է խորհրդային իշխանությունը: Սրանք գործոններ են, վորոնք ամրապնդում են ԽՍՀՄ-ի միջազգային դրությունը: Այս ֆակտորների ներգործությամբ են բացատրվում այնպիսի փաստեր, ինչպես են Չին-Արևելյան յերկաթուղու կոնֆլիկտի հաջող լիկվիդացիան, հարաբերությունների վերականգնումը Մեծ Բրիտանիայի հետ, տնտեսական կապերի աճումը կապիտալիստական յերկրների հետ և այլն:

Այս յերկու գործոնների պայքարով է վորոշվում ԽՍՀՄ-ի արտաքին դրությունը:

բ) Ասում են, թե բուրժուական պետությունների հետ տնտեսական կապերը բարելավելու գործում գայթակղության քարը պարտքերի հարցն է: Յես կարծում եմ, վոր սա վոչ թե պարտքերը վճարելու ոգտին փաստարկ է, այլ պատրվակ է ագրեսիվ տարրերի ձեռքում՝ ինտերվենցիոնիստական պրոպագանդայի համար: Մեր քաղաքականությունն այս բնագավառում պարզ է ու միանգամայն հիմնավորված: Մեզ վարկեր տալու պայմանով մենք համաձայն ենք վճարելու մինչպատերազմյան պարտքերի մի փոքր մասը՝ դիտելով դրանք վորպես վարկերի լրացուցիչ

տոկոս: Առանց այս պայմանի մենք չենք կարող վճարել և չպետք է վճարենք: Ավելի՞ն են պահանջում մեզանից: Ի՞նչ հիման վրա: Մի՞թե հայտնի չէ, վոր այդ պարտքերն արել եր ցարական կառավարությունը, վորին տապալել է հեղափոխությունը, և վորի պարտավորությունների համար չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել խորհրդային կառավարությունը: Խոսում են միջազգային իրավունքի մասին, միջազգային պարտավորությունների մասին: Բայց պարոն «դաշնակիցները» միջազգային ինչ իրավունքի հիման վրա ԽՍՀՄ-ից կտրեցին Բեսարաբիան և նրան ստրկության տվին ռումինական բոյարներին: Այդ ինչ միջազգային պարտավորություններով եր, վոր Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի, Ճապոնիայի կապիտալիստներն ու կառավարությունները հարձակվեցին ԽՍՀՄ-ի վրա, նրան ինտերվենցիայի յենթարկեցին, ամբողջ յերեք տարի թալանում եյին նրան ու քայքայում եյին նրա բնակչության տնտեսությունը: Յեթե սա միջազգային իրավունք ու միջազգային պարտավորություններ է կոչվում, ապա այն ժամանակ ել ինչն է, վոր թալան է կոչվում: (Ծիծաղ: Ծափահարություններ): Մի՞թե պարզ չէ, վոր այս թալանչիական գործողությունները թույլ տալով՝ պարոնայք «դաշնակիցներն» իրենց զրկեցին միջազգային իրավունքը, միջազգային պարտավորությունները վկայակոչելու իրավունքից:

Ասում են, ապա, թե «նորմալ» հարաբերությունների կարգավորմանը խանգարում է ռուսական բոլշևիկների պրոպագանդան: Պրոպագանդայի վնասակար ներգործության առաջն առնելու նպատակով պարոն բուրժուաները հենց մի գլուխ պատնեշավորվում են «կորդոններով», «լարափակոցներով»՝ «փակոցների» պահպանման պատիվը վողորմածաբար թողնելով Լեհաստանին, Ռումինիային, Ֆինլանդիային և այլն: Ասում են, թե Գերմանիայի նախանձն է շարժվում այն պատճառով, վոր իբրև թե նրան չեն ուզում հանձնել «կորդոնների» ու «լարափակոցների» պահպանումը: Արդյոք հարկ կա՞ ապացուցելու, վոր պրոպագանդայի մասին շաղակրատությունը վոչ թե փաստարկ է «նորմալ հարաբերություններ» հաստատելու համար, այլ պատրվակ ինտերվենցիոնիստական պրոպագանդայի համար: Մարդիկ, վորոնք չեն կամենում ծիծաղելի լինել, ինչպես կարող են «պատնեշավորվել» բոլշևիզմի գաղափարներից, յեթե բուն իսկ յերկրում կա հող, վորը նպաստավոր է այդ գաղափարների համար: Ցարիզմն իր ժամանակին նույնպես «պատնեշավորվում եր» բոլշևիզ-

մից, բայց, ինչպես հայտնի յե, չկարողացավ «պատնեշավորվել»: Չկարողացավ, վորովհետև բոլշևիզմն աճում է ամեն տեղ ու ամենուրեք՝ վոչ թե դրսից, այլ ներսից: Թվում է, թե չկան այնպիսի յերկրներ, վոր ավելի «պատնեշավորված լինեն» ռուսական բոլշևիկներից, քան Չինաստանը, Հնդկաստանը, Հնդկա-Չինը և այլն: Յեվ ինչ: Չնայած ամեն տեսակի «կորդոնների»՝ բոլշևիզմն այնտեղ աճում է և աճելու յե, վորովհետև, յերևի, այնտեղ կան պայմաններ, վորոնք նպաստում են բոլշևիզմին: Ել ինչ գործ ունի այստեղ ռուսական բոլշևիկների պրոպագանդան: Այ, յեթե պարոն կապիտալիստները մի կերպ կարողանային «պատնեշավորվել» տնտեսական ճգնաժամից, մասսաների թշվառությունից, գործազրկությունից, ցածր աշխատավարձից, աշխատավորությանը շահագործելուց,—այն ժամանակ ուրիշ բան եր, այն ժամանակ նրանցում բոլշևիկյան շարժում ել չեր լինի: Բայց բանն ել հենց այն է, վոր ամեն մի սրիկա առիթ է փնտրում իր թուլությունը կամ իր անընդունակությունն արդարացնել, մատնանշելով ռուսական բոլշևիկների պրոպագանդան:

Ասում են, այնուհետև, թե դաշնակցության քար է հանդիսանում մեր, խորհրդային համակարգը, կոլեկտիվացումը, պայքարը կուլակության դեմ, հակակրոնական պրոպագանդան, պայքարը «գիտության մարդկանց» թվին պատկանող վնասարարների ու հակահեղափոխականների դեմ, Բեսեդովսկիներին, Սոլոմոններին, Դմիտրիևսկիներին վռնդելը և այլն: Բայց սա արդեն բոլորովին զվարճալի բան է դառնում: Բանից յերևում է՝ նրանց դուր չի գալիս խորհրդային համակարգը: Բայց մեզ ել դուր չի գալիս կապիտալիստական համակարգը: (Ծիծաղ: Ծափահարություններ): Դուր չի գալիս, վոր նրանցում տասնյակ միլիոնավոր գործազուրկներ ստիպված են սովի մատնվել ու մուրացկանություն անել, մինչդեռ կապիտալիստների մի փոքրիկ խմբակ միլիարդավոր հարստության տեր է: Բայց քանի վոր մենք արդեն համաձայնել ենք չմիջամտել այլ յերկրների ներքին գործերին, արդյոք պարզ չէ, վոր չարժե վերադառնալ այս հարցին: Կոլեկտիվացումը, պայքարը կուլակության դեմ, պայքարը վնասարարների դեմ, հակակրոնական պրոպագանդան և այլն՝ կազմում են ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների անկապտելի իրավունքը, վորն ամրապնդված է մեր սահմանադրությամբ: ԽՍՀՄ-ի սահմանադրությունը մենք պետք է իրագործենք ու իրագործելու յենք ամենայն հետևողականու-

թյամբ: Հետևաբար, հասկանալի յե, վոր ով չի ուզում հաշվի նստել մեր սահմանադրության հետ, կարող է շարունակել ճանապարհը, չորս կողմը ճամբան բաց է: Ինչ վերաբերում է Բեսեդովսկիներին, Սոլոմոններին, Դմիտրիևսկիներին և այլոց, ապա մենք առաջիկայում ել այդպիսի մարդկանց դեն ենք շպրտելու, ինչպես խոտանված ապրանք, վորը հեղափոխության համար պետք չէ ու վնասակար է: Թող վահանի բարձրացնեն նրանց այն մարդիկ, ովքեր հատուկ համակրանք են տածում դեպի թափթփուկները: (Ծիծաղ): Մեր հեղափոխության ջաղացաքարերը լավ են աշխատում: Նրանք վերցնում են վողջ պետքականը և տալիս են խորհուրդներին, իսկ թափթփուկները դեն են շպրտում: Ասում են, թե Ֆրանսիայում, Փարիզի բուրժուաների մեջ, այս խոտանված ապրանքի մեծ պահանջ կա: Ինչ կա վոր, թող ներմուծեն այն, անուշ լինի: Ճիշտ է, այս մի քիչ կծանրաբեռնի Ֆրանսիայի առևտրական հաշվեկշռի ներմուծման հոդվածները, վորի դեմ միշտ բողոքում են պարոն բուրժուաները: Բայց այս արդեն նրանց գործն է: Յեկեք չմիջամտենք Ֆրանսիայի ներքին գործերին: (Ծիծաղ: Ծափահարություններ):

Այսպես է այն «խոչընդոտների» գործի վիճակը, վորոնք խանգարում են այլ պետությունների հետ «նորմալ» հարաբերություններ կարգավորելու:

Դուրս է գալիս, վոր այս «խոչընդոտները» կեղծ «խոչընդոտներ» են, վորոնք գործի յեն դրված հակախորհրդային պրոպագանդա անելու պատրվակ ձեռք բերելու համար:

Մեր քաղաքականությունը խաղաղության և բոլոր յերկրների հետ առևտրական կապերն ուժեղացնելու քաղաքականություն է: Այս քաղաքականության հետևանքն է մի շարք յերկրների հետ ունեցած հարաբերությունների բարելավումը և մի շարք պայմանագրերի կնքումը՝ առևտրի, տեխնիկական ոգնության վերաբերյալ և այլն: Հենց այս քաղաքականության հետևանքն է ԽՍՀՄ-ի միանալը Կելլոգի պակտին, Կելլոգի պակտի գծով հայտնի արձանագրության ստորագրումը Լեհաստանի, Ռումինիայի, Լիտվայի հետ և այլն, Թյուրքիայի հետ ունեցած բարեկամության ու չեզոքության պայմանագրի ուժը յերկարաձգելու արձանագրության ստորագրումը: Վերջապես, այս քաղաքականության հետևանքն է այն փաստը, վոր մեզ հաջողվեց պաշտպանել խաղաղությունը՝ թույլ չտալով թշնամիներին, վոր

մեզ դցեն կոնֆլիկտների մեջ, չնայած պատերազմի հրձիգների մի շարք պրովոկացիոն գործողությունների ու ավանտյուրիստական հանկարծակի հարձակումների։ Խաղաղության այս քաղաքականությունը բոլոր ուժերով, բոլոր միջոցներով վարելու յենք առաջիկայում էլ։ Ուրիշի վոչ մի թիզ հողը չենք ուզում։ Բայց մեր հողն էլ, մեր հողից վոչ մի վերշոկ վոչ վոքի չենք տա։ (Ծափահարություններ)։

Այս է մեր արտաքին քաղաքականությունը։

Խնդիրն այն է, վոր առաջիկայում էլ կիրառենք այս քաղաքականությունը բոլշևիկներին հատուկ ամբողջ հաստատակամությամբ։

II

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՃՈՂ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցնենք ԽՍՀՄ-ի ներքին դրությանը։

Ի հակադրություն կապիտալիստական յերկրների, վորտեղ այժմ տնտեսական ճգնաժամն ու աճող գործազրկությունն են թագավորում, մեր յերկրի ներքին դրությունը ժողովրդական տնտեսության աճող վերելքի և գործազրկության պրոգրեսսիվ կրճատման պատկեր է ներկայացնում։ Խոշոր արդյունաբերությունն աճել է ու արագացրել իր զարգացման տեմպերը։ Ամրապնդվել է ծանր արդյունաբերությունը։ Արդյունաբերության սոցիալիստական սեկտորը շատ առաջ է շարժվել։ Գյուղատնտեսության մեջ առաջ է յեկել նոր ուժ՝ խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները։ Յեթե մի-յերկու տարի առաջ մենք հատիկային արտադրության ճգնաժամ ունեյինք և մեր հացամթերման աշխատանքում հենվում եյինք գլխավորապես անհատական տնտեսության վրա, ապա այժմ ծանրության կենտրոնը տեղափոխվել է կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, իսկ հատիկային ճգնաժամը հիմնականում կարելի յե լուծված համարել։ Գյուղացիության հիմնական մասսաները վերջնականապես դարձել են կոլտնտեսությունների կողմը։ Կուլակության դիմադրությունը հետ է մղված։ ԽՍՀՄ-ի ներքին դրությունն էլ ավելի յե ամրացել։

Տվյալ մոմենտում այս է ԽՍՀՄ-ի ներքին դրության ընդհանուր պատկերը։

Քննարկենք կոնկրետ տվյալները։

1. ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՑՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

ա) Եթե 1926/27 թվին, այսինքն՝ կուսակցության XV համագումարի մոտերքը, ամբողջ գյուղատնտեսության գծով, ներառյալ անտառային տնտեսությունը, ձկնորսությունը և այլն, նախապատերազմյան ռուբլիներով վերցրած մենք ունեյինք 12370 միլիոն ռուբլու համախառն արտադրանք, այսինքն՝ նախապատերազմյան մակարդակի 106,6%, ապա հաջորդ տարին, այսինքն՝ 1927/28 թվին, մենք ունեյինք նախապատերազմյան մակարդակի 107,2%, 1928/29 թվին — 109,1%, իսկ ընթացիկ 1929/30 թվին, դատելով գյուղատնտեսության զարգացման ընթացքով, մենք ունենալու յենք նախապատերազմյան մակարդակի 113—114%-ից վոչ պակաս:

Առկա յե ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսության արտադրանքի անշեղ, թեկուզ և համեմատաբար դանդաղ աճում:

Եթե 1926/27 թվին, այսինքն՝ կուսակցության XV համագումարի մոտերքը, ամբողջ արդյունաբերության գծով, ինչպես մանրի, այնպես և խոշորի, հաշվելով նույնպես ալյուրաղաց արդյունաբերությունը, մենք ունեյինք նախապատերազմյան ռուբլիներով 8641 միլիոն ռուբլու գումարի համախառն արտադրանք, այսինքն՝ նախապատերազմյան մակարդակի 102,5%, ապա հաջորդ տարին, այսինքն՝ 1927/28 թվին, մենք ունեյինք նախապատերազմյան մակարդակի 122%, 1928/29 թվին — 142,5%, իսկ ընթացիկ 1929/30 թվին, դատելով արդյունաբերության զարգացման ընթացքով, ունենալու յենք նախապատերազմյան մակարդակի 180%-ից վոչ պակաս:

Առկա յե ամբողջությամբ վերցրած արդյունաբերության արտադրանքի չտեսնված արագ աճում:

բ) Եթե 1926/27 թվին, այսինքն՝ կուսակցության XV համագումարի մոտերքը, մեր յերկաթուղային ամբողջ ցանցի գծով մենք ունեյինք 81,7 միլիարդ տոնն-կիլոմետր բեռնաշրջանառություն, այսինքն՝ նախապատերազմյան մակարդակի 127%, ապա հաջորդ տարին, այսինքն՝ 1927/28 թվին, մենք ունեյինք նախապատերազմյան մակարդակի 134,2%, 1928/29 թվին — 162,4%, իսկ ընթացիկ 1929/30 թ., ըստ բոլոր տվյալների, մենք ունենալու յենք նախապատերազմյան մակարդակի 193%-ից

վոչ պակաս: Ինչ վերաբերում է յերկաթուղային նոր շինարարությանը, ապա հաշվետու ժամանակաշրջանում, այսինքն՝ հաշված 1927/28 թվից, յերկաթուղային ցանցը մեծանում է 76 հազ. կիլոմետրից մինչև 80 հազ. կիլոմետր, վոր կկազմի նախապատերազմյան մակարդակի 136,7%:

գ) Եթե յերկրի տնտեսա-միջնորդական շրջանառության վիճակը 1926/27 թվի համար ընդունենք 100 (31 միլիարդ ռուբլի), ապա դուրս է գալիս, վոր 1927/28 թվին շրջանառությունների չափերն աճել են մինչև 124,6%, 1928/29 թվին — մինչև 160,4%, իսկ ընթացիկ 1929/30 թվին, դատելով ըստ բոլոր տվյալների, շրջանառությունների չափերը կկազմեն 202%, այսինքն՝ 1926/27 թ. համեմատությամբ կկրկնապատկվեն:

դ) Եթե մեր բոլոր վարկային հիմնարկների համախառն հաշվեկշիռները 1927 թ. հոկտեմբերի 1-ի համար ընդունենք 100 (9173 միլիոն ռուբ.), ապա դուրս է գալիս, վոր առ 1-ն հոկտեմբերի 1928 թ. մենք աճում ենք ունեցել մինչև 141%, առ 1-ն հոկտեմբերի 1929 թ.—մինչև 201,1%, այսինքն՝ կրկնապատկում 1927 թ. համեմատությամբ:

ե) Եթե 1926/27 թ. պետական համախառն բյուջեն ընդունենք 100 (6371 միլիոն ռուբ.), ապա դուրս է գալիս, վոր 1927/28 թվին մենք պետական բյուջեյի աճում ենք ունեցել մինչև 125,5%, 1928/29 թվին—մինչև 146,7%, իսկ 1929/30 թվին—մինչև 204,4%, այսինքն՝ կրկնապատկում 1926/27 թ. բյուջեյի համեմատությամբ (12605 միլիոն ռուբ.):

զ) Եթե մեր արտաքին-առևտրական շրջանառությունը (էքսպորտ-իմպորտ) 1926/27 թվականին նախապատերազմյան մակարդակի 47,9% եր կազմում, ապա 1927/28 թվին մենք ունեյինք արտաքին-առևտրական շրջանառության աճում նախապատերազմյան մակարդակի մինչև 56,8%, 1928/29 թվին — մինչև 67,9%, իսկ 1929/30 թվին, ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք նախապատերազմյան մակարդակի 80%-ից վոչ պակաս:

է) Այս ամենի հետևանքով՝ հաշվետու շրջանում մենք ունենք ամբողջ ժողովրդական յեկամտի աճման հետևյալ պատկերը (1926/27 թ. անփոփոխ գներով). Պետպլանի տվյալներով՝ ժողովրդական յեկամուտը 1926/27 թվին 23 127 միլիոն ռուբլի յեր, 1927/28 թվին 25 396 միլիոն ռուբ.—աճ 9,8%. 1928/29 թվին—28 596 միլիոն ռ.,—աճ 12,6%. 1929/30 թվին, դատելով բոլոր տվյալներով, ժողովրդական յեկամուտը կազմելու յե 34 միլիարդ

ռուբլուց վոչ պակաս, ուրեմն 20% աճ մի տարում: Հետևաբար, հաշվետու 3 տարում միջին տարեկան աճը 15%-ից ավելի յե:

Յեթե նկատի ունենանք, վոր ժողովրդական յեկամտի միջին տարեկան աճն այնպիսի յերկիրներում, ինչպիսիք են ՀԱՄՆ-ը, Անգլիան, Գերմանիան, 3—8%-ից ավելի չե, ապա պետք ե ընդունել, վոր ժողովրդական յեկամտի աճման տեմպը ԽՍՀՄ-ում հիրավի ռեկորդային ե:

2. ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժողովրդական տնտեսության աճումը մեզանում վոչ թե տարերայնորեն ե ընթանում, այլ վորոշ ուղղությամբ, այն ե՝ ինդուստրացման ուղղությամբ, ինդուստրացման նշանի տակ, ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում ինդուստրիայի տեսակարար կշռի աճման նշանի տակ, մեր յերկիրն ագրարայինից ինդուստրիալ յերկրի վեր-ածվելու նշանի տակ:

ա) Ամբողջությամբ վերցրած արդյունաբերության և ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսության հարաբերակցության դինամիկան ամբողջ ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ արդյունաբերության ունեցած տեսակարար կշռի տեսակետով վերցրած՝ հաշվետու ժամանակաշրջանում հետևյալ կերպ ե պատկերվում. Նախապատերազմյան ժամանակներն արդյունաբերության բաժինը ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ 42,1% եր կազմում, գյուղատնտեսության բաժինը—57,9%. 1927/28 թվին արդյունաբերության բաժինը 45,2% եր, գյուղատնտեսականինը—54,8%. 1928/29 թվին արդյունաբերության բաժինը 48,7% եր, գյուղատնտեսականինը—51,3%, 1929/30 թվին արդյունաբերության բաժինը, ըստ բոլոր տվյալների, պետք ե կազմի 53%-ից վոչ պակաս, իսկ գյուղատնտեսության բաժինը—47%-ից վոչ ավելի:

Այս նշանակում ե, վոր արդյունաբերության տեսակարար կշիռն արդեն սկսում ե գերազանցել գյուղատնտեսության տեսակարար կշռից, և մենք գտնվում ենք ագրարային յերկրից ինդուստրիալ յերկրի վերածվելու նախորյակին: (Ծափահարություններ):

բ) Արդյունաբերության ոգտին ել ավելի խիստ գերակշռություն ե ստացվում՝ ժողովրդական տնտեսության ապրանքային արտադրանքի մեջ նրա ունեցած տեսակարար կշռի տեսակետից: Յեթե 1926/27 թվին արդյունաբերության ապրանքային

արտադրանքի բաժինը ժողովրդական տնտեսության ապրանքային արտադրության ընդհանուր հաշվեկշռում 68,8% եր կազմում, իսկ գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի բաժինը—31,2%, ապա 1927/28 թվին արդյունաբերության համար մենք ունեյինք 71,2%, գյուղատնտեսության համար—28,8%, 1928/29 թվին արդյունաբերության համար—72,4%, գյուղատնտեսության համար—27,6%, իսկ 1929/30 թ. համար, ըստ բոլոր տվյալների, մենք արդյունաբերության համար ունենալու յենք 76%, իսկ գյուղատնտեսության համար—24%:

Գյուղատնտեսության առանձնապես աննպաստ այս դրության մեջ, ի միջի այլոց, յերևան ե գալիս գյուղատնտեսության մանր-գյուղացիական ու սակավ-ապրանքային բնույթը: Ընդամենը հասկանալի յե, վոր այս դրությունը վորոշ չափով փոխվելու յե այնքան, վորքան վոր խոշորանալու յե գյուղատնտեսությունը խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների գծով, վորքան ավելանալու յե նրա ապրանքայնությունը:

գ) Բայց արդյունաբերության զարգացումն ընդհանրապես դեռևս չի տալիս ինդուստրացման տեմպի լրիվ պատկերը: Լրիվ պատկեր ստանալու համար անհրաժեշտ ե նաև վորոշել ծանր ու թեթև արդյունաբերության դինամիկայի հարաբերակցությունը: Ուստի ինդուստրացման աճման ամենացայտուն ցուցանիշը պետք ե համարել արտադրության գործիքների ու միջոցների արտադրության (ծանր արդյունաբերության) տեսակարար կշռի առաջընթաց աճումն արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ: Յեթե 1927/28 թվին արտադրության գործիքների ու միջոցների արտադրության բաժինն ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ կազմում եր 27,2%, իսկ լայն սպառման առարկաների արտադրության բաժինը—72,8%, ապա 1928/29 թվին արտադրության գործիքների ու միջոցների արտադրության բաժինը տալիս ե 28,7% ընդդեմ 71,3%-ի, իսկ 1929/30 թվին արտադրության գործիքների ու միջոցների արտադրության բաժինը, ըստ բոլոր տվյալների, արդեն կկազմի 32,7% ընդդեմ 67,3%-ի:

Իսկ յեթե վերցնենք վոչ թե ամբողջ արդյունաբերությունը, այլ միայն ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվողը, վորն ընդգրկում ե ինդուստրիայի բոլոր հիմնական ճյուղերը, ապա այստեղ արտադրության գործիքների ու միջոցների արտադրության և լայն սպառման առարկաների արտադրության հարաբերակցությունն

էլ ավելի նպաստավոր ձևով է պատկերվում, այն է՝ 1927/28 թ. արտադրության գործիքների ու միջոցների արտադրության բաժինը կազմում էր 42,7% ընդդեմ 57,3%-ի, 1928/29 թվին—44,6% ընդդեմ 55,4%-ի, իսկ 1929/30 թվին, ըստ բոլոր տվյալների, կազմելու յե 48%-ից վոչ պակաս ընդդեմ լայն սպառման առարկաների արտադրության 52%-ի։

Մեր ժողովրդական տնտեսության զարգացումն ընթանում է ինդուստրացման նշանի տակ, մեր սեփական ծանր արդյունաբերության ամրացման ու զարգացման նշանի տակ։

Այս նշանակում է, վոր մեր տնտեսական անկախության հիմքը,—մեր ծանր ինդուստրիան,—մենք արդեն բարձրացրել ենք և շարունակում ենք ծավալել։

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՇԽՈՂ ԴԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՃՄԱՆ ՏԵՄՊԸ

Մեր ժողովրդական տնտեսության զարգացումն ընթանում է ինդուստրացման նշանի տակ։ Բայց մեզ հարկավոր է վոչ ամեն տեսակ ինդուստրացում։ Մեզ հարկավոր է մի այնպիսի ինդուստրացում, վորն ապահովում է արդյունաբերության սոցիալիստական ձևերի աճող գերակշռությունը մանր-ապրանքային ու առավել ևս կապիտալիստական ձևերի վերաբերմամբ։ Մեր ինդուստրացման բնորոշ գիծն այն է, վոր նա սոցիալիստական ինդուստրացում է, մի ինդուստրացում, վորն ապահովում է արդյունաբերության հանրայնացված սեկտորի հաղթությունը մասնավոր-տնտեսական սեկտորի, մանր-ապրանքային ու կապիտալիստական սեկտորի վերաբերմամբ։

Ահա մի քանի տվյալներ կապիտալ ներդրումների ու համախառն արտադրանքի աճման մասին՝ ըստ սեկտորների։

ա) Յեթե վերցնենք կապիտալ ներդրումների աճումն արդյունաբերության մեջ ըստ սեկտորների, ապա մենք կստանանք հետևյալ պատկերը։ Հանրայնացված սեկտոր. 1926/27 թվին—1270 միլիոն ռուբ., 1927/28 թվին—1614 միլիոն ռուբ., 1928/29 թ.—3046 միլիոն ռուբ., 1929/30 թվին—4275 միլիոն ռուբլի։ Մասնավոր-տնտեսական ու կապիտալիստական սեկտոր. 1926/27 թվին—63 միլիոն ռուբ., 1927/28 թվին—64 միլիոն ռուբ., 1928/29 թվին—56 միլիոն ռուբ., 1929/30 թվին—51 միլիոն ռուբլի։

Նախ այս նշանակում է, վոր արդյունաբերության հանրայնացված սեկտորի կապիտալ ներդրումներն այս ժամանակում աճել են ավելի քան յերեք անգամ (335%)։

Յերկրորդ, այս նշանակում է, վոր մասնավոր-տնտեսական ու կապիտալիստական սեկտորի կապիտալ ներդրումներն այս ժամանակում իջել են մի հինգերորդ մասով (81%)։

Մասնավոր-տնտեսական ու կապիտալիստական սեկտորն ապրում է ի հաշիվ հին կապիտալի և գնում է դեպի իր կործանումը։

բ) Յեթե վերցնենք արդյունաբերության համախառն արտադրանքի աճումն ըստ սեկտորների, ապա մենք կստանանք հետևյալ պատկերը։ Հանրայնացված սեկտոր. 1926/27 թվին—11999 միլիոն ռուբ., 1927/28 թվին—15389 միլիոն ռուբ., 1928/29 թվին—18903 միլիոն ռուբ., 1929/30 թվին—24740 միլիոն ռուբլի։ Մասնավոր-տնտեսական ու կապիտալիստական սեկտոր. 1926/27 թվին—4043 միլիոն ռուբ., 1927/28 թվին—3704 միլիոն ռուբլի, 1928/29 թվին—3389 միլիոն ռուբ., 1929/30 թվին—3310 միլիոն ռուբլի։

Նախ այս նշանակում է, վոր արդյունաբերության հանրայնացված սեկտորի համախառն արտադրանքը յերեք տարում աճել է ավելի քան յերկու անգամ (206,2%)։

Յերկրորդ, այս նշանակում է, վոր արդյունաբերության մասնավոր-տնտեսական ու կապիտալիստական սեկտորի համախառն արտադրանքը նույն ժամանակաշրջանում իջել է գրեթե մի հինգերորդ մասով (81,9%)։

Իսկ յեթե վերցնենք վոչ թե ամբողջ արդյունաբերության, այլ միայն խոշոր (ցենզային) արդյունաբերության արտադրանքը և այն քննարկենք ըստ սեկտորների, ապա կստանանք հանրայնացված և մասնավոր-տնտեսական սեկտորների հարաբերակցությունների հետևյալ պատկերը։ Հանրայնացված սեկտորի տեսակարար կշիռը յերկրի խոշոր արդյունաբերության արտադրանքի մեջ. 1926/27 թվին—97,7%, 1927/28 թվին—98,6%, 1928/29 թվին—99,1%, 1929/30 թվին—99,3%։ Մասնավոր-տնտեսական սեկտորի տեսակարար կշիռը յերկրի խոշոր արդյունաբերության արտադրանքի մեջ. 1926/27 թվին—2,3%, 1927/28 թվին—1,4%, 1928/29 թվին—0,9%, 1929/30 թվին—0,7%։

Ինչպես տեսնում եք, կապիտալիստական տարրերը խոշոր արդյունաբերության մեջ արդեն հատակն են իջել։

Պարզ է, վոր «ով ում»-ի հարցը, այն հարցը, թե արդյու-

նաբերության մեջ արդյոք սոցիալիզմը կհաղթի կապիտալիստական տարրերին, թե նրանք կհաղթեն սոցիալիզմին, հիմնականում արդեն լուծված է հօգուտ արդյունաբերության սոցիալիստական ձևերի։ Լուծված է վերջնականապես ու անդառնալիորեն։ (Ծափահարություններ)։

գ) Առանձնապես հետաքրքրական են ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվող պետական արդյունաբերության՝ հաշվետու ժամանակաշրջանում ունեցած զարգացման տեմպի վերաբերյալ տվյալները։ Յեթե ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվող սոցիալիստական արդյունաբերության համախառն արտադրանքը 1926/27 թվի համար ընդունենք 100, ապա դուրս է գալիս, որ 1927/28 թվին այս արդյունաբերության համախառն արտադրանքն աճել է մինչև 127,4%, 1928/29 թվին—մինչև 158,6%, իսկ 1929/30 թ. նա աճում է մինչև 209,8%։

Այս նշանակում է, որ ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվող սոցիալիստական արդյունաբերությունը, վորն ընդգրկում է արդյունաբերության բոլոր հիմնական ճյուղերն ու ամբողջ ծանր արդյունաբերությունը, յերեք տարում ավելի քան երկնապատկման է հասել։

Չի կարելի չընդունել, վոր աշխարհում վոչ մի յերկիր իր խոշոր արդյունաբերության զարգացման այսպիսի կատաղի տեմպեր չգիտե։

Այս հանգամանքն է, վոր մեզ հիմք է տալիս խոսելու հնգամյակը չորս տարում կատարելու մասին։

դ) Ընկերներից վոմանք սկեպտիկորեն են նայում «հնգամյակը չորս տարում» լոզունգի վրա։ Դեռ բոլորովին նորերս էր, վոր ընկերների մի մասը խորհուրդների V համագումարի հաստատած մեր հնգամյակը գնահատում էր վորպես ֆանտաստիկա։ Էլ յես չեմ խոսում բուրժուական գրողների մասին, վորոնց աչքերը ճակատն են թռչում՝ հենց միայն «հնգամյակ» բառը լսելիս։ Իսկ իրականում ինչ ունենք մենք, յեթե հնգամյակը դիտենք այն տեսակետից, թե ինչպես է նա իրագործվել առաջին յերկու տարվա ընթացքում։ Ինչի մասին է խոսում հնգամյակի կատարման ստուգումը՝ նրա ոպտիմալ վարիանտով վերցրած։ Նա միայն այն մասին չի խոսում, թե մենք կարող ենք հնգամյակը չորս տարում կատարել։ Նա խոսում է նաև այն մասին, վոր արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերի գծով մենք կարող ենք այն կատարել յերեք ու նույնիսկ յերկու և կես տա-

րում։ Օպորտունիստական բանակի սկեպտիկներին այս կարող է անհավատալի թվալ։ Բայց այս մի փաստ է, վորը վիճարկելը հիմարություն ու ծիծաղելի կլիներ։

Ինքներդ դատեցեք։

Նավթային արդյունաբերությունը ըստ հնգամյակի պետք է տար 1932/33 թվին 977 միլիոն ռուբլու արդյունք։ Իսկ իրականում արդեն 1929/30 թվին նա տալիս է 809 միլիոն ռուբլու արտադրանք, այսինքն՝ 1932/33 թ. համար հնգամյակով ծրագրըված արտադրանքի 83%։ Ասել է թե, նավթարդյունաբերության գծով հնգամյա պլանը մենք կատարում ենք մի ինչ-վոր $2^1/_2$ տարում։

Տորֆի արդյունաբերությունից ըստ հնգամյակի մենք 1932/33 թվին պետք է ստանայինք 122 միլիոն ռուբլու արդյունք։ Իսկ իրականում արդեն 1929/30 թվին նա տալիս է 115 միլիոն ռուբլուց ավելի արդյունք, այսինքն՝ 1932/33 թվի համար հնգամյակով ծրագրված արտադրանքի 96%։ Ասել է թե, տորֆարդյունաբերության վերաբերմամբ հնգամյա պլանը մենք կատարում ենք $2^1/_2$ տարում, յեթե վոչ ավելի վաղ։

Ընդհանուր մեքենաշինությունը ըստ հնգամյակի պետք է տա 1932/33 թվին 2058 միլիոն ռուբլու արդյունք։ Իսկ իրականում արդեն 1929/30 թվին նա տալիս է 1458 միլիոն ռուբլու արդյունք, այսինքն՝ 1932/33 թվի համար հնգամյակով ծրագրված արտադրանքի 70%։ Ասել է թե, ընդհանուր մեքենաշինության գծով հնգամյա պլանը մենք կատարում ենք $2^1/_2$—3 տարում։

Գյուղատնտեսական մեքենաշինությունը ըստ հնգամյակի պետք է 1932/33 թվին տա 610 միլիոն ռուբլու արդյունք։ Իսկ իրականում արդեն 1929/30 թվին նա տալիս է 400 միլիոն ռուբլու արդյունք, այսինքն՝ 1932/33 թվի համար հնգամյակով ծրագրըված արտադրանքի 60%-ից ավելին։ Ասել է թե, գյուղատնտեսական մեքենաշինության գծով հնգամյա պլանը մենք կատարում ենք 3 տարում, յեթե վոչ ավելի վաղ։

Էլեկտրոտեխնիկական արդյունաբերությունը ըստ հնգամյակի պետք է 1932/33 թվին տա 896 միլիոն ռուբլու արտադրանք։ Իսկ իրականում արդեն 1929/30 թվին նա տալիս է 503 միլիոն ռուբլու արտադրանք, այսինքն՝ 1932/33 թվի համար հնգամյակով ծրագրված արտադրանքի 56%-ից ավելին։ Ասել է թե, էլեկ-

տեխնիկական արդյունաբերության հնգամյա պլանը մենք կատարում ենք 3 տարում։

Սրանք են մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացման չտեսնված տեմպերը։

Մենք առաջ ենք գնում արագացված տեմպով՝ տեխնիկա-տնտեսական տեսակետից հասնելով կապիտալիստական առաջավոր յերկրներին։

ե) Այս չի նշանակում, իհարկե, թե մենք արդեն հասել ենք նրանց՝ արտադրության չափերի իմաստով, թե մեր արդյունաբերությունն արդեն հասել է կապիտալիստական առաջավոր յերկրների արդյունաբերության զարգացման մակարդակին։ Ոչ, ամենևին էլ չի նշանակում։ Չի կարելի միմյանց հետ շփոթել արդյունաբերության զարգացման տեմպը և արդյունաբերության զարգացման մակարդակը։ Մեզանում շատերն են սրանք շփոթում՝ կարծելով, թե, քանի որ մենք հասել ենք արդյունաբերության զարգացման չտեսնված տեմպերի, ապա մենք դրանով իսկ արդեն հասել ենք կապիտալիստական առաջավոր յերկրների արդյունաբերության զարգացման մակարդակին։ Բայց այս արմատապես սխալ է։

Վերցնենք, օրինակ, էլեկտրոէներգիայի արտադրությունը, որտեղ մենք շատ բարձր տեմպեր ունենք։ Էլեկտրական էներգիայի արտադրության գծով 1924 թվից մինչև 1929 թ. մենք ձեռք ենք բերել գրեթե 600% ավելացում, մինչդեռ նույն այս ժամանակաշրջանում ՀԱՄՆ-ը էլեկտրոէներգիայի արտադրանքն ավելացրել են միայն մինչև 181%, Կանադան—մինչև 218%։ Գերմանիան—մինչև 241%, Իտալիան—մինչև 222%։ Ինչպես տեսնում եք, մենք այստեղ ունենք ուղղակի չտեսնված տեմպ, որը գերազանցում է բոլոր մյուս պետությունների տեմպերից։ Բայց, յեթե վերցնենք էլեկտրոէներգիայի արտադրության զարգացման մակարդակն այդ յերկրներում, օրինակ՝ 1929 թվին, և այն համեմատենք զարգացման մակարդակի հետ ԽՍՀՄ-ում, ապա կստացվի մի պատկեր, որ ամենևին էլ մխիթարական չէ ԽՍՀՄ-ի համար։ Չնայած էլեկտրոէներգիայի արտադրության զարգացման չտեսնված տեմպին՝ էլեկտրոէներգիայի արտադրանքը ԽՍՀՄ-ում 1929 թվին կազմում էր միայն 6465 միլիոն կ|ժ., մինչդեռ ՀԱՄՆ ունեյին 126000 միլիոն կ|ժ., Կանադան ուներ 17.628 միլիոն կ|ժ., Գերմանիան—33.000 միլիոն կ|ժ., Իտալիան—10850 միլիոն կ|ժ.։

Տարբերությունը, ինչպես տեսնում եք, հսկայական է։

Դուրս է գալիս, որ զարգացման մակարդակով մենք բոլոր այդ պետություններից հետ ենք կանգնած։

Կամ վերցնենք, օրինակ, թուջի արտադրությունը մեզանում։ Յեթե ընդունենք թուջի արտադրությունը 1926|27 թ. հավասար 100 (2,9 միլիոն տոնն), ապա յերեք տարում, այսինքն՝ 1927|28 թվից մինչև 1929|30 թ., մեզանում թուջի արտադրությունն ավելանում է գրեթե յերկու անգամ՝ հասնելով 190%-ի (5,5 միլիոն տոնն)։ Զարգացման տեմպը, ինչպես տեսնում եք, բավականին բարձր է։ Բայց յեթե գործին նայենք թուջի արտադրության զարգացման մակարդակի տեսակետից մեզանում և համեմատենք թուջի արտադրության չափերը ԽՍՀՄ-ում կապիտալիստական առաջավոր յերկրների արտադրության չափերի հետ, ապա կստացվի բավականին անմխիթարական պատկեր։ Սկսենք նրանից, որ թուջի արտադրության նախապատերազմյան մակարդակին հասնում ենք և կգերազանցենք նրանից միայն ընթացիկ 1929|30 թ.։ Արդեն միայն սա ասում է մեզ այն անողոք յեզրակացության, որ առանց մետաղագործության զարգացման տեմպի հետագա արագացման՝ մենք վտանգի սպառնալիքի տակ ենք դնում մեր ամբողջ արդյունաբերական արտադրության բախտը։ Ինչ վերաբերում է թուջի արդյունաբերության զարգացման մակարդակին մեզանում և Արևմուտքում, ապա մենք ունենք հետևյալ պատկերը. Թուջի արտադրությունն արտահայտվում էր 1929 թվին ՀԱՄՆ-ում 42,3 միլիոն տոնն թվով, Գերմանիայում—13,4 միլիոն տոննով, Ֆրանսիայում—10,45 միլիոն տոննով, Անգլիայում—7,7 միլիոն տոննով, իսկ ԽՍՀՄ-ում թուջի արտադրությունը 1929|30 թ. վերջին կկազմի ընդամենը միայն 5,5 միլիոն տոնն։

Տարբերությունն, ինչպես տեսնում եք, փոքր չէ։

Այսպիսով, դուրս է գալիս, որ թուջի արտադրության զարգացման մակարդակով մենք բոլոր այդ յերկրներից հետ ենք կանգնած։

Ինչի մասին է խոսում այս ամենը։

Այն մասին, որ

1) չի կարելի շփոթել արդյունաբերության զարգացման տեմպը նրա զարգացման մակարդակի հետ.

2) մեր արդյունաբերության զարգացման մակարդակի

իմաստով՝ մենք սարսափելի հետ ենք մնացել կապիտալիստական առաջավոր յերկրներից.

3) մեր արդյունաբերության զարգացման տեմպի հետագա արագացումն է միայն, վոր մեզ հնարավորություն կտա տեխնիկա-տնտեսական տեսակետից հասնելու և անցնելու կապիտալիստական առաջավոր յերկրներից.

4) այն մարդիկ, վորոնք շաղակրատում են մեր արդյունաբերության զարգացման տեմպն իջեցնելու անհրաժեշտության մասին, հանդիսանում են սոցիալիզմի թշնամիները, մեր դասակարգային թշնամիների գործակալները: (Ծափահարություններ):

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՏԻԿԱՅԻՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Վերը յես խոսեցի ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսության վիճակի մասին՝ ներառած անտառային տնտեսությունը, ձկնորսությունը և այլն՝ առանց գյուղատնտեսությունն ստորաբաժանելու նրա հիմնական ճյուղերին: Յեթե ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսությունից զատենք նրա հիմնական ճյուղերը, ինչպես, օրինակ, հատիկային տնտեսությունը, անասնաբուծությունը և տեխնիկական մշակույթները, ապա գործերի դրությունը ԽՍՀՄ-ի Պետպլանի ու Հողժողկոմատի տվյալներով հետևյալ կերպ է պատկերվում.

ա) Յեթե 1913 թվականի հատիկային մշակույթների ցանքերի տարածությունն ընդունենք 100, ապա կստանանք հատիկամշակույթների ցանքերի տարածության շարժման հետևյալ պատկերն ըստ տարիների. 1926/27 թ.—96,9%, 1927/28 թ.—94,7%, 1928/29 թ.—98,2%, իսկ ընթացիկ 1929/30 թ., ըստ բոլոր տվյալների, կկազմի նախապատերազմյան մակարդակի 105,1%:

Ուշադրավ է հատիկամշակույթների ցանքերի տարածության անկման փաստը 1927/28 թ. ընթացքում: Այս անկումը բացատրվում է վոչ թե հատիկային տնտեսության դեգրադացիայով, ինչպես այս մասին շաղակրատում եյին աջ օպորտունիստների բանակին պատկանող ոգեոները, այլ 7 700 հազ. հեկտ. տարածությամբ աշնանացանքերի փչացումով (ԽՍՀՄ-ի աշնանացանքերի 20%):

Յեթե, այնուհետև, վերցնենք 1913 թ. հատիկամշակույթների համախառն արտադրանքն իբրև 100, ապա կստանանք հետևյալ պատկերը. 1927 թ.—91,9%, 1928 թ.—90,8%, 1929 թ.—94,4%, իսկ 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ստանում ենք նախապատերազմյան նորմայի մինչև 110%-ը:

Այստեղ նույնպես ուշադրավ է հատիկամշակույթների համախառն արտադրանքի անկումը 1928 թ. ընթացքում, վոր բացատրվում է աշնանացանքերի փչացումով Ուկրաինայում ու Հյուսիսային Կովկասում:

Ինչ վերաբերում է հատիկամշակույթների համախառն արտադրանքի ապրանքային մասին (արտագյուղական շրջանառությունը), ապա մենք էլ ավելի ուսանելի պատկեր ունենք: Յեթե 1913 թ. հատիկային արտադրանքի ապրանքային մասն ընդունենք 100, ապա դուրս է գալիս, վոր 1927 թ. մենք ունեյինք 37% ապրանքային արտադրանք, 1928 թ.—36,8%, 1929 թ.—58%, իսկ ընթացիկ 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք նախապատերազմյան մակարդակի 73%-ից վոչ պակաս:

Այսպիսով դուրս է գալիս, վոր հատիկամշակույթների ցանքատարածության և համախառն արտադրանքի կողմից մենք նախապատերազմյան նորմային հասնում ու նրանից փոքր ինչ գերազանցում ենք միայն ընթացիկ 1930 թվին:

Ապա դուրս է գալիս, վոր հատիկամշակույթների ապրանքային արտադրանքի կողմից մենք ամենևին էլ դեռ չենք հասել նախապատերազմյան նորմային և տակավին այս տարի էլ նրանից հետ ենք մնալու մի 25 տոկոսի չափով:

Սրանումն է հացի մեր դժվարությունների հիմքը, դժվարություններ, վոր առանձնապես սրվեցին 1928 թվին:

Սրանումն է նույնպես հատիկային պրոբլեմի հիմքը:

բ) Մոտավորապես նույնպիսի պատկեր է բացվում, բայց ավելի տագնապալի ցուցանիշներով, անասնաբուծության բնագավառում:

Յեթե անասունների բոլոր տեսակների քանակը 1916 թ. համար ընդունենք 100, ապա ստացվում է հետևյալ պատկերն ըստ տարիների: 1916 թ. նորմայի հետ համեմատած՝ 1927 թվին կային ձիեր—88,9%, խոշոր յեղջյուրավոր անասուններ—114,3%, վոչխարներ ու այծեր—119,3%, խոզեր—111,3%. 1928 թվականին ձիեր—94,6%, խոշոր յեղջյուրավոր անասուններ—118,5%, վոչխարներ ու այծեր—126%, խոզեր—126,1%.

1929 թվականին ձիեր—96,9%, խոշոր յեղջյուրավոր անասուններ—115,6%, վոչխարներ ու այծեր—127,8%, խոզեր—103%. 1930 թվականին ձիեր—88,6%, խոշոր յեղջյուրավոր անասուններ—89,1%, վոչխարներ ու այծեր—87,1%, խոզեր—60,1%:

Ինչպես տեսնում եք, յեթե նկատի ունենանք վերջին տարվա տվյալները, ապա մենք ունենում ենք անասնաբուծության տնտեսության մեջ սկսված կրճատման ակնհայտ նշաններ:

Ե՛լ ավելի անմխիթարական պատկեր է ստացվում անասնաբուծության ապրանքային յելուքի տեսակետից, մանավանդ մսի ու կարագի կողմից: Յեթե մսի ու կարագի համախառն արտադրանքը յուրաքանչյուր տարվա համար ընդունենք 100, ապա մսի ու կարագի ապրանքային յելուքը համապատասխանորեն կազմում է. 1926 թ.—33,4%, 1927 թ.—32,9%, 1928 թ.—30,4%, 1929 թ.—29,2%:

Այսպիսով, մենք անասնաբուծության մեջ ունենք մանր ու ապրանքատակավ տնտեսության անկայունության ու տնտեսական անհուսալիության ակնհայտ նշաններ:

Դուրս է գալիս, վոր անասնաբուծության մեջ 1916 թ. նորման գերազանցելու փոխարեն վերջին տարին մենք ունենք այդ նորմայից ցած իջնելու ակնհայտ նշաններ:

Այսպիսով, հացահատիկային պրոբլեմից անմիջապես հետո, վորը հիմնականում մենք արդեն լուծում ենք հաջողությամբ, մեր առջև ծառանում է մսի պրոբլեմը, վորի սրությունն արտահայտվում է այժմ արդեն, և վորն սպասում է իր լուծմանը:

գ) Այլ պատկեր է բաց անում մեր առջև տեխնիկական մշակույթների զարգացումը, վորոնք հումք են տալիս մեր արդյունաբերությանը: Յեթե տեխնիկական մշակույթների ցանքի տարածությունը 1913 թ. համար ընդունենք 100, ապա մենք ունենում ենք բամբակի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1927 թ.—107,1%, 1928 թ.—131,4%, 1929 թ.—151,4%, 1930 թ.—217%. վուշի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1927 թ.—86,6%, 1928 թ.—95,7%, 1929 թ.—112,9%, 1930 թ.—125%. շաքարի ճակնդեղի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1927 թ.—106,6%, 1928 թ.—124,2%, 1929 թ.—125,8%, 1930 թ.—169%. ձիթաբույսերի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝

1927 թ.—179,4%, 1928 թ.—230,9%, 19.29—թ.—219,7%, 1930 թ.—260%-ից վոչ պակաս:

Հիմնականում նույնպիսի նպաստավոր պատկեր է տալիս տեխնիկական մշակույթների համախառն արտադրանքը: Յեթե 1913 թ. համախառն արտադրանքն ընդունենք 100, ապա մենք ունենում ենք. բամբակի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1928 թ.—110,5%, 1929 թ.—119%, 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 182,8%. վուշի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1928 թ.—71,6%, 1929 թ.—81,5%, 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 101,3%. շաքարի ճակնդեղի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1928 թ.—93%, 1929 թ.—58%, 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 139,4%. ձիթաբույսերի վերաբերմամբ, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ՝ 1928 թ.—161,9%, 1929 թ.—149,8%, 1930 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 220%:

Այսպիսով, տեխնիկական կուլտուրաների գծով մենք ավելի նպաստավոր պատկեր ունենք, յեթե չհաշվենք 1929 թվականը ճակնդեղի նկատմամբ, վորի բերքը փչացրած է յեղել թիթեռը:

Մենք, այստեղ էլ, տեխնիկական մշակույթների բնագավառում էլ, ապագայում հնարավոր ու հավանական են, մանր տնտեսության գերակշռման հետևանքով առաջացած, լուրջ տատանումներ ու անկայունության արտահայտություններ՝ այն տատանումների ու անկայունության արտահայտությունների օրինակով, վոր ցուցադրվում են այս թվերով վուշի ու ձիթաբեր մշակույթների վերաբերմամբ, վորոնց ամենից քիչ է դիպել կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ազդեցությունը:

Այսպիսով, մեր առջև ծառացած են գյուղատնտեսության հետևյալ պրոբլեմները.

1) տեխնիկական մշակույթների դրության ամրապնդման պրոբլեմը՝ համապատասխան շրջանները բավարար քանակությամբ եժան հացամթերքներով ապահովելու միջոցով.

2) անասնաբուծության բարձրացման ու մսի հարցի լուծման պրոբլեմը՝ համապատասխան շրջանները բավարար քանակությամբ եժան հատիկամթերքներով ու կերով ապահովելու միջոցով.

3) հատիկային տնտեսության հարցի՝ վորպես տվյալ մոմենտում գյուղատնտեսության գլխավոր հարցի՝ վերջնական լուծման պրոբլեմը։

Դուրս է գալիս, վոր հատիկային պրոբլեմը հիմնական օղակն է գյուղատնտեսության սիստեմում և վերջինիս մյուս բոլոր պրոբլեմների լուծման բանալին։

Դուրս է գալիս, վոր հատիկային պրոբլեմի լուծումը գյուղատնտեսության մյուս պրոբլեմների շարքում ըստ հերթի առաջին խնդիրն է։

Բայց լուծել հատիկային պրոբլեմը և դրանով իսկ գյուղատնտեսությունը դուրս բերել լուրջ վերելքի ճանապարհ՝ դա նշանակում է արմատապես վերացնել գյուղատնտեսության հետամնացությունը, զինել նրան տրակտորներով ու գյուղատնտեսական մեքենաներով, տալ նրան գիտական աշխատողների նոր կադրեր, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, մեծացնել ապրանքայնությունը։ Առանց այս պայմանների՝ յերազել անգամ ավելորդ է հատիկային պրոբլեմի լուծման մասին։

Արդյոք հնարավո՞ր է բոլոր այս պայմաններն իրագործել գյուղացիական մանր անհատական տնտեսության բազայի վրա։ Վո՛չ, հնարավոր չէ։ Հնարավոր չէ, վորովհետև մանր գյուղացիական տնտեսությունն անկարող է ընդունելու և յուրացնելու նոր տեխնիկան, անկարող է բավականաչափ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, անկարող է բավականաչափ մեծացնելու գյուղատնտեսության ապրանքայնությունը։ Մնում է մի ուղի, գյուղատնտեսության խոշորացման ուղին, ժամանակակից տեխնիկայով զինված խոշոր տնտեսությունների արմատավորման ուղին։ Բայց խորհրդային յերկիրը չի կարող կանգնել կապիտալիստական խոշոր տնտեսություններ կազմակերպելու ուղու վրա. նա կարող է և պետք է գնի միայն նոր տեխնիկայով զինված սոցիալիստական տիպի խոշոր տնտեսությունների կազմակերպման։ Հենց այդպիսի տնտեսություններ են հանդիսանում մեզանում խորհտնտեսությունները ու կոլտնտեսությունները։

Այստեղից՝ խորհտնտեսություններն արմատավորելու և գյուղացիական մանր տնտեսությունները կոլեկտիվ խոշոր տնտեսությունների մեջ միավորելու խնդիրը՝ վորպես ընդհանրա-

պես գյուղատնտեսության պրոբլեմի և առանձնապես հատիկային պրոբլեմի լուծման միակ ուղի։

Կուսակցությունն իր ամենորյա գործնական աշխատանքում այս ճանապարհն էլ բռնել է XV համագումարից հետո, մանավանդ հացի հարցում 1928 թ. սկզբներին յերևան յեկած լուրջ դժվարություններից հետո։

Հարկ է նշել, վոր այս արմատական՝ պրոբլեմը, վորպես գործնական խնդիր, մեր կուսակցությունն որահերթի յե դրել դեռևս XV համագումարում, յերբ մեզանում հացի լուրջ դժվարություններ դեռևս չկային։ XV համագումարի՝ «Գյուղի աշխատանքի մասին» հայտնի բանաձևի մեջ ուղղակի ասված է, վոր

«Գյուղացիական մանր անհատական տնտեսությունները միավորելու և փոխակերպելու-խոշոր կոլեկտիվներ դարձնելու խնդիրը ներկա ժամանակաշրջանում պետք է դրվի իբրև կուսակցության հիմնական խնդիր գյուղում»։

Թերևս ավելորդ չի լինի նույնպես բերել XV համագումարում Կենտկոմի արած հաշվետու զեկուցումից համապատասխան տեղը, վորտեղ նույնպես կտրուկ ու վորոշակի դրվում է գյուղատնտեսության հետամնացությունը կոլեկտիվացման հիմունքներով վերացնելու պրոբլեմը։ Ահա թե ինչ է ասված այնտեղ.

«Իսկ վո՞րտեղ է յելքը։ Յելքն այն է, վոր գյուղացիական մանր ու ցիրուցան տնտեսությունները խոշոր և հողի հանրային մշակման հիմունքով միավորված տնտեսությունների անցնեն, վոր հողը նոր, բարձրագույն տեխնիկայի բազայով կոլեկտիվորեն մշակելուն անցնեն։ Յելքն այն է, վոր աստիճանաբար, բայց անշեղորեն, վո՛չ թե ճնշման կարգով, այլ ցույց տալու և համոզելու կարգով, գյուղացիական մանր ու մանրագույն տնտեսությունները միավորենք վորպես խոշոր տնտեսություններ՝ հողի հանրային, ընկերային, կոլեկտիվ մշակման հիմունքով, գյուղատնտեսական մեքենաների ու տրակտորների գործադրումով, հողագործության ինտենսիվացման գիտական յեղանակների կիրառումով։ Ուրիշ յելք չկա»։

5. ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿՈՂՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍԱՅԻՆ-ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՊԸ

Գյուղացիության շրջադարձը դեպի կոլեկտիվացումը միանգամից չսկսվեց: Նա, այդ շրջադարձը, չէր էլ կարող միանգամից սկսվել: Ճիշտ է, կոլեկտիվացման լոզունգը կուսակցությունը հռչակել էր տակավին XV համագումարում: Բայց վորպեսզի գյուղացիությունը մասսայական շրջադարձ կատարի սոցիալիզմի կողմը, դեռևս բավական չէ լոզունգ հռչակելը: Շրջադարձի համար պահանջվում է գոնե ևս մի հանգամանք, այսինքն՝ այն, վոր գյուղացիական մասսաներն իրենք համոզվեն հռչակված լոզունգի ճիշտ լինելուն և այն ընդունեն իբրև իրենց սեփական լոզունգը: Ուստի և այդ շրջադարձն աստիճանաբար էր նախապատրաստվում: Այն նախապատրաստվում էր մեր զարգացման ամբողջ ընթացքով, մեր ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով և ամենից առաջ այն ինդուստրիայի զարգացմամբ, վորը գյուղատնտեսությանը մեքենաներ ու տրակտորներ է մատակարարում: Այն նախապատրաստվում էր կուլակության դեմ ուղղված վճռական պայքարի քաղաքականությամբ և մեր հացամթերումների ընթացքով՝ 1928 ու 1929 թ. թ. նրանց այն նոր ձևերով, վորոնք կուլակային տնտեսությունը դնում էին չքավոր-միջակ մասսաների վերահսկողության տակ: Այն նախապատրաստվում էր գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, վորն անհատական գյուղացուն ընտելացնում է գործը կոլեկտիվորեն վարելու: Այն նախապատրաստվում էր կոլտնտեսությունների ցանցի միջոցով, վորտեղ գյուղացին ստուգում էր տնտեսության կոլեկտիվ ձևերի առավելությունն անհատական տնտեսության հանդեպ: Այն, վերջապես, նախապատրաստվում էր բովանդակ ԽՍՀՄ-ում ցրված և նոր տեխնիկայով զինված խորհտնտեսությունների ցանցի միջոցով, վորտեղ գյուղացին հնարավորություն էր ստանում համոզվելու նոր տեխնիկայի ուժին ու առավելություններին: Սխալ կլիներ մեր խորհտնտեսությունների մեջ տեսնել միմիայն հացի ռեսուրսների աղբյուր: Խորհտնտեսություններն իրենց նոր տեխնիկայով, շրջապատող գյուղացիությանը ցույց տված իրենց օգնությամբ, իրենց չտեսնված տնտեսական թափով իրոք հանդիսացել են այն առաջատար

ուժը, վորը հեշտացրեց գյուղացիական մասսաների շրջադարձը և նրանց շարժեց դեպի կոլեկտիվացման ուղին:

Ահա թե ինչ հիմքի վրա յե ծագել միլիոնավոր չքավորների ու միջակների կոլտնտեսային այն մասսայական շարժումը, վորն սկսվեց 1929 թ. յերկրորդ կեսին և վորն իրենով բաց արեց մեր յերկրի կյանքում մեծ բեկման ժամանակաշրջանը:

Կենտկոմն ինչ միջոցառումների յե ձեռնարկել, վոր լիասպառապես դիմավորի ու գլխավորի այս շարժումը:

Կենտկոմի միջոցառումները յերեք գծով են ընթանում. խորհտնտեսությունները կազմակերպելու ու ֆինանսավորելու գծով, կոլտնտեսությունները կազմակերպելու ու ֆինանսավորելու գծով, վերջապես, տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների շինարարությունը կազմակերպելու և մեքենա-տրակտորային կայանների միջոցով, տրակտորաշարասյուների ու այլ միջոցներով այդ մեքենաները գյուղին մատակարարելու գծով:

ա) Դեռ 1928 թ. ապրիլին Կենտկոմի Քաղբյուրոն վորոշում ընդունեց՝ 3—4 տարվա ընթացքում կազմակերպել նոր խորհտնտեսություններ այն հաշվով, վոր նրանք, այդ խորհտնտեսությունները, այդ ժամկետի վերջերին կարողանան տալ 100 միլիոն փթից վոչ պակաս ապրանքային հաց: Հետագայում Կենտկոմի պլենումը հաստատեց այս վորոշումը: Կազմակերպվեց Հատիկտրեստ (Зернотрест), վորին հանձնարարվեց այս վորոշման կատարումը: Սրա հետ մեկտեղ վորոշում ընդունվեց՝ հին խորհտնտեսությունների ամրացման և նրանց ցանքադաշտերի ընդարձակման մասին: Կազմակերպվեց Խորհտնտեսկենտրոնը (Совхозцентр), վորին հանձնարարվեց կենսագործել այս վորոշումը:

Չի կարելի չնշել, վոր այս վորոշումը արհամարհանքով ընդունեց մեր կուսակցության օպորտունիստական մասը: Խոսակցություններ կային այն մասին, թե խորհտնտեսությունների մեջ դրված փողերը «ջրին գցված» փողեր են: Խոշոր խորհտնտեսություններ կազմակերպելու անհնարինության ու անմտության վերաբերյալ «գիտության» մարդկանց քննադատություն էլ կար, վոր պաշտպանում էին կուսակցության օպորտունիստական տարրերը: Սակայն, Կենտկոմն իր գիծն էր վարում և, չնայած վոչ մի բանի, այն հասցրեց մինչև վերջը:

1927/28 թվին խորհտնտեսությունների ֆինանսավորման համար բաց էր թողնված 65,7 միլիոն ռուբլի (չհաշված շրջանառու կարճաժամկետ վարկը): 1928/29 թ. բաց էր թողնված 185,8

միլիոն ռուբլի։ Վերջապես, ընթացիկ տարում բաց է թողնված 856,2 միլիոն ռուբլի։ Հաշվետու շրջանում խորհտնտեսությունների տնօրինությանը հանձնված է 18 հազար տրակտոր 350 հազ. ձիուժի։

Վորո՞նք են այս միջոցառումների արդյունքները։

Հատիկտրեստի ցանքատարածությունը 1928/29 թ. կազմում եր 150 հազ. հեկտ., 1929/30 թ.—1060 հազ. հեկտ., 1930/31 թ. կկազմի 4500 հազ. հեկտ., 1931/32 թ. կկազմի 9000 հազ. հեկտ., իսկ 1932/33 թ., այսինքն՝ հնգամյակի վերջերքին՝ կկազմի 14000 հազ. հեկտ.։ Խորհտնտեսկենտրոնի ցանքատարածությունը 1928/29 թ. կազմում եր 430 հազ. հեկտ., 1929/30 թ.—860 հազ. հեկտ., 1930/31 թ. կկազմի 1800 հազ. հեկտ., 1931/32 թ. կկազմի 2000 հազ. հեկտ., իսկ 1932/33 թ. կկազմի 2500 հազ. հեկտ.։ Ուկրաինայի խորհտնտմիավորման ցանքատարածությունը 1928/29 թ. կազմում եր 170 հազ. հեկտ., 1929/30 թ.—280 հազ. հեկտ., 1930/31 թ. կկազմի 500 հազ. հեկտ., իսկ 1932/33 թ. կկազմի 720 հազ.։ Տավարամիության ցանքատարածությունը (հատիկի վերաբերմամբ) 1928/29 թվին կազմում եր 780 հազ. հեկտ., 1929/30 թվին—820 հազ. հեկտ., 1930/31 թ. կկազմի 860 հազ. հեկտ., 1931/32 թ. կկազմի 980 հազ. հեկտ., իսկ 1932/33 թ. կկազմի 990 հազ. հեկտ.։

Նախ, այս նշանակում է, վոր միմիայն Հատիկտրեստը հընգամյակի վերջերքին հատիկամշակույթների նույնքան ցանքատարածություն կունենա, ինչքան վոր այժմ ունի ամբողջ Արգենտինան։ (Ծափահարություններ)։

Յերկրորդ, այս նշանակում է, վոր միասին վերցրած՝ բոլոր խորհտնտեսությունները հնգամյակի վերջերքին հատիկամշակույթների ցանքատարածություն 1 միլիոն հեկտարով ավելի կունենան, քան այժմ ունի ամբողջ Կանադան։ (Ծափահարություններ)։

Ինչ վերաբերում է խորհտնտեսությունների համախառն ու ապրանքային հատիկային արտադրանքին, ապա մենք ունենք ըստ տարիների շարժման հետևյալ պատկերը. 1927/28 թ. բոլոր խորհտնտեսություններից մենք ունեյինք 9,5 միլիոն ցենտներ համախառն արտադրանք, դրանից ապրանքային՝ 6,1 միլիոն ցենտներ. 1928/29 թ.—12,8 միլիոն ցենտներ, դրանից ապրանքային՝ 7,9 միլիոն ցենտներ. 1929/30 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 28,2 միլիոն ցենտներ, վորից ապրանքային՝ 18

միլիոն ցենտներ (108 միլիոն փութ). 1930/31 թ. ունենալու յենք 71,7 միլիոն ցենտներ, դրանից ապրանքային՝ 61 միլիոն ցենտներ (370 միլիոն փութ)։ Յեվ այլն և այլն։

Սրանք են մեր կուսակցության խորհտնտեսային քաղաքականության առկա և սպասելի արդյունքները։

Նոր խորհտնտեսություններ կազմակերպելու մասին՝ Կենտկոմի Քաղբյուրոյի 1928 թ. ապրիլին կայացրած վորոշման համաձայն դուրս եր գալիս, վոր մենք նոր խորհտնտեսություններից 1931/32 թ. պետք է ստանանք 100 միլիոն փթից վոչ պակաս ապրանքային հաց։ Իսկ իրականում այնպես է ստացվում, վոր մենք արդեն 1931/32 թ. միմիայն նոր խորհտնտեսություններից կունենանք 200 միլիոն փթից ավելի։ Ստացվում է ծրագրի կրկնակի գերակատարում։

Դուրս է գալիս, վոր մարդիկ, վորոնք ծիծաղում եյին Կենտկոմի Քաղբյուրոյի վորոշման վրա, չարաչար ծիծաղել են իրենք իրենց վրա։

Խորհուրդների համագումարի հաստատած հնգամյա պլանով՝ հնգամյակի վերջերքին բոլոր սիստեմների խորհտնտեսությունների գծով մենք պետք է ունենայինք 5 միլիոն հեկտ. ցանքատարածություն։ Իսկ իրականում արդեն այս տարի մենք ունենք խորհտնտեսությունների 3,8 միլիոն հեկտ. ցանքատարածություն, իսկ յեկող տարի, այսինքն՝ հնգամյակի յերրորդ տարում, մենք ունենալու յենք 8 միլիոն հեկտ. ցանքատարածություն։

Այս նշանակում է, վոր խորհտնտեսային շինարարության հնգամյա ծրագիրը մենք կատարում ու գերակատարում ենք 3 տարում։

Ըստ հնգամյա պլանի՝ հնգամյակի վերջերքին խորհտնտեսությունների գծով մենք պետք է ունենայինք հատիկամշակույթների 54,3 միլիոն ցենտներ համախառն արտադրանք։ Իսկ իրականում արդեն այս տարի մենք ունենք խորհտնտեսություններից հատիկամշակույթների 28,2 միլիոն ցենտներ համախառն արտադրանք, իսկ յեկող տարի ունենալու յենք 71,7 միլիոն ցենտներ։

Այս նշանակում է, վոր հատիկամշակույթների համախառն արտադրանքի վերաբերմամբ հնգամյակը մենք կատարում ու գերակատարում ենք 3 տարում։

Հնգամյակը 3 տարո՛ւմ։

160—4.

Թող այժմ շաղակրատեն բուրժուական գրչակներն ու նրանց ոպորտունիստական ձայնակիցները, թե չի կարելի 3 տարում կատարել ու գերակատարել խորհտնտեսային շինարարության հնգամյակը։

բ) Ինչ վերաբերում է կոլտնտեսային շինարարությանը, ապա մենք ունենք էլ ավելի նպաստավոր պատկեր։

Դեռ 1928 թ. հուլիսին Կենտկոմի պլենումը կոլտնտեսային շինարարության մասին ընդունել է հետևյալ վորոշումը.

«Անշեղորեն կենսագործել XV համագումարի դրած խնդիրը՝ «միավորել ու խոշոր կոլեկտիվների փոխակերպել գյուղացիական մանր անհատական տնտեսությունները», իբրև կամավոր միավորումներ, վորոնք կառուցված են նոր տեխնիկայի բազայի վրա և հանդիսանում են հատիկային տնտեսության բարձրագույն ձևը՝ ինչպես գյուղատնտեսության սոցիալիստական փոխակերպման իմաստով, այնպես էլ նրա արտադրողականության ու ապրանքայնության արմատական բարձրացումն ապահովելու իմաստով» (տես Կենտկոմի հուլիսյան պլենումի բանաձևը՝ «Հացամթերումների քաղաքականության մասին՝ տնտեսական ընդհանուր դրության կապակցությամբ», 1928 թ.)։

Հետագայում այս վորոշումն իր հաստատումն ստացավ կուսակցության XVI կոնֆերենցիայի բանաձևերում և Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի՝ կոլտնտեսային շարժման վերաբերյալ հատուկ բանաձևում։ 1929 թ. յերկրորդ կեսին, յերբ ուրվագծվեց գյուղացիության արմատական շրջադարձը կոլտնտեսությունների կողմը, և յերբ միջակը մասսայորեն մտավ կոլտնտեսություն, Կենտկոմի Քաղբյուրոն ընդունեց 1930 թ. հունվարի 5-ի հատուկ վորոշումը՝ «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետական ոգնություն ցույց տալու միջոցների մասին»։

Այս բանաձևում Կենտկոմը

1) հավաստեց կոլտնտեսությունների կողմը գյուղացիների արած մասսայական շրջադարձի առկայությունը և կոլտնտեսային շինարարության հնգամյա պլանը 1930 թ. գարնանը գերակատարելու հնարավորությունը.

2) հավաստեց նյութական և այլ պայմանների առկայությունը, վորոնք անհրաժեշտ են կուլակային արտադրությունը կոլտնտեսությունների արտադրությամբ փոխարինելու համար, վորի

կապակցությամբ հռչակեց կուլակության՝ վորպես դասակարգի՝ սահմանափակման քաղաքականությունից նրա վերացման քաղաքականությանն անցնելու անհրաժեշտությունը.

3) տվեց այն բանի հեռանկարը, թե հանրայնացված հիմունքներով մշակված ցանքատարածությունն արդեն 1930 թ. գարնանը նշանակալիորեն կանցնի 30 միլիոն հեկտարից.

4) ԽՍՀՄ-ն բաժանեց 3 խումբ շրջանների՝ սահմանելով նրանցից յուրաքանչյուրի համար կոլեկտիվացումը հիմնականում ավարտելու որիենտիր ժամկետներ.

5) վերանայեց հողաշինարարության մեթոդը հօգուտ կոլտնտեսությունների և գյուղատնտեսության ֆինանսավորման ձևերը՝ վորոշելով կոլտնտեսություններին 1929/30 թ. համար տալ 500 միլիոն ռուբլուց վոչ պակաս վարկ.

6) վորոշեց կոլտնտեսային շարժման արտելային ձևը՝ վորպես կոլտնտեսային սիստեմի հիմնական ողակ տվյալ մոմենտում.

7) հակահարված տվեց կուսակցության ոպորտունիստական տարրերին, վորոնք փորձում էյին մեքենաների ու տրակտորների պակասության պատճառով արգելակել կոլտնտեսային շարժումը։

8) վերջապես, նախազգուշացրեց կուսակցական աշխատողներին հնարավոր խոտորումներից կոլտնտեսային շարժման մեջ և կոլտնտեսային շինարարությունը վերևից դեկրետագրելու վտանգից, մի վտանգ, վորը կոլտնտեսային իսկական ու մասսայական շարժումը կոլեկտիվախաղի նենգափոխելու սպառնալիք է ստեղծում։

Հարկ է նշել, վոր Կենտկոմի այս վորոշումը մեր կուսակցության ոպորտունիստական տարրերի կողմից ավելի քան անբարյացակամ ընդունելություն գտավ։ Խոսակցություններ ու փսփսոցներ յեղան այն մասին, թե Կենտկոմը ֆանտաստիկայի յե անձնատուր յեղել, թե նա ժողովրդական փողերը «վատնում է» «գոյություն չունեցող» կոլտնտեսությունների վրա։ Աջ տարրերը շփում էյին ձեռքերը՝ կանխաճաշակելով «ապահովված» տապալումը։ Սակայն Կենտկոմն իր գիծն ամենայն հաստատակամությամբ եր վարում և հասցրեց այն մինչև վերջը՝ չնայած վոչ մի բանի, չնայած աջերի քաղքենիական քրքիջներին, չնայած «ձախերի» խոտորումներին ու գլխապտույտին։

1927/28 թվին կոլտնտեսությունների ֆինանսավորման համար բաց է թողնված յեղել 76 միլիոն ռուբլի, 1928/29 թվին —

170 միլիոն ռուբ., վերջապես ընթացիկ տարում բաց է թողնված 473 միլիոն ռուբլի։ Բացի դրանից՝ 65 միլիոն ռուբլի էլ բաց է թողնված կոլեկտիվացման ֆոնդի համար։ Վորոշված են կոլտնտեսությունների արտոնությունները, վորոնք բարձրացրին կոլտնտեսությունների ֆինանսական միջոցները 200 միլիոն ռուբլով։ Ապահովված է կոլտնտեսությունների համար՝ ապակուլակացված կուլակների տնտեսական գույքն՝ ավելի քան 400 միլիոն ռուբլու արժողությամբ։ Ապահովված է կոլտնտեսային դաշտերում օգտագործելու համար 30 հազարից վոչ պակաս տրակտոր՝ ավելի քան 400 հազ. ձիուժի կարողությամբ, չհաշված Տրակտորկենտրոնի 7 հազ. տրակտորները, վորոնք սպասարկում են կոլտնտեսություններին, և չհաշված այն օգնությունը տրակտորներով, վոր ցույց է տալիս կոլտնտեսություններին խորհտնտեսությունների սիստեմը։ Այս տարի կոլտնտեսություններին տրված է 10 միլիոն ցենտներ (61 միլիոն փութ) հացահատիկ՝ վորպես սերմացուով փոխատվություն և սերմացուով օգնություն։ Վերջապես, կոլտնտեսություններին ցույց է տրված կազմակերպական անմիջական օգնություն՝ մեքենա-ձիական բազաներ ստեղծելու գործում, վորոնց թիվը անցնում է 7 հազարից՝ նրանց մեջ օգտագործելով 1300 հազարից վոչ պակաս ձի։

Վորո՞նք են այս միջոցառումների արդյունքները։

Կոլտնտեսությունների ցանքատարածությունը 1927 թ. կազմում եր 0,8 միլիոն հեկտար, 1928 թ. — 1,4 միլիոն հեկտ., 1929 թ. — 4,3 միլիոն հեկտ., 1930 թ. — 36 միլիոն հեկտարից վոչ պակաս, հաշված գարնանացան ու աշնանացան հողաշերտերը։

Նախ, այս նշանակում է, վոր 3 տարվա ընթացքում կոլտնտեսային ցանքատարածությունն աճել է ավելի քան 40 անգամ։ (Ծափահարություններ)։

Յերկրորդ, այս նշանակում է, վոր մեր կոլտնտեսություններն այժմ նույնքան ցանքատարածություն ունեն, վորքան Ֆրանսիան ու Իտալիան միասին վերցրած։ (Ծափահարություններ)։

Ինչ վերաբերում է հատիկամշակույթների համախառն արտադրանքին և նրանց ապրանքային մասին, ապա մենք ունենք հետևյալ պատկերը։ 1927 թ. կոլտնտեսություններից մենք ունեցել ենք 4,9 միլիոն ցենտներ, վորից ապրանքային՝ 2 միլիոն ցենտներ. 1928 թ. — 8,4 միլիոն ցենտներ, վորից ապրանքային՝ 3,6 միլիոն ցենտներ. 1929 թ. — 29,1 միլիոն ցենտներ, վորից ապրանքային՝ 12,7 միլիոն ցենտներ. 1930 թ., ըստ բոլոր

տվյալների, ունենալու յենք 256 միլիոն ցենտներ (1550 միլիոն փութ), վորից ապրանքային՝ 82 միլիոն ցենտներից վոչ պակաս (500 միլիոն փթից ավելի)։

Պետք է ընդունել, վոր ընդհանուր առմամբ բավականին արագացված տեմպով զարգացող մեր արդյունաբերության վոչ մի ճյուղը դեռ չի տվել վերելքի այնպիսի չտեսնված տեմպեր, ինչպես կոլտնտեսային շինարարությունը։

Ինչի՞ մասին են խոսում այս բոլոր թվերը։

Ամենից առաջ, նրանք խոսում են այն մասին, վոր հատիկամշակույթների համախառն արտադրանքը կոլտնտեսություններում 3 տարվա ընթացքում աճել է ավելի քան 50 անգամ, իսկ ապրանքայինը՝ ավելի քան 40 անգամ։

Յերկրորդ, նրանք խոսում են այն մասին, վոր մենք հնարավորություն ունենք կոլտնտեսություններից այս տարի ստանալու յերկրի հացահատիկի ապրանքային ամբողջ արտադրանքի կեսից ավելին։

Յերրորդ, նրանք խոսում են այն մասին, վոր գյուղատնտեսության ու նրա հիմնական պրոբլեմների բախտն այսուհետև վորոշելու յեն վո՛չ թե անհատական գյուղացիական տնտեսությունները, այլ կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները։

Չորրորդ, նրանք խոսում են այն մասին, վոր կուլակության՝ վորպես դասակարգի վերացման պրոցեսը մեզանում առաջ է ընթանում ամբողջ թափով։

Նրանք, վերջապես, խոսում են այն մասին, թե յերկրում արդեն տնտեսական այնպիսի տեղաշարժեր են տեղի ունեցել, վորոնք լիակատար հիմք են տալիս պնդելու, վոր մեզ հաջողվեց գյուղը դարձնել դեպի նոր ուղի, կոլեկտիվացման ուղին, դրանով իսկ ապահովելով սոցիալիզմի հաջող կառուցումը վո՛չ միայն քաղաքում, այլև գյուղում։

1930 թվի հունվարի 5-ի իր վորոշմամբ Կենտկոմի Քաղբյուրոն հանրայնացված հիմունքներով մշակված կոլտնտեսային ցանքատարածության ծրագիրը 1930 թ. գարնան համար սահմանել եր 30 միլիոն հեկտ.։ Իսկ իրականում մենք ունենք 36 միլիոն հեկտ.։ Ստացվում է Կենտկոմի ծրագրի գերակատարում։

Դուրս է գալիս, վոր այն մարդիկ, վորոնք ծիծաղում եյին Կենտկոմի վորոշման վրա, չարաչար ծիծաղել են իրենք իրենց վրա։ Մեր կուսակցության օպորտունիստական շաղակրատներին

չոգնեցին վո՛չ մանր-բուրժուական տարերքը, վո՛չ ել խոտորումները կոլտնտեսային շարժման մեջ։

Ըստ հնգամյա պլանի՝ կոլտնտեսությունների գծով հնգամյակի վերջերքին մենք պետք ե ունենայինք 20,6 միլիոն հեկտ. ցանքատարածություն։ Իսկ իրականում մենք արդեն այս տարի ունենք կոլտնտեսությունների ցանքատարածություն 36 միլիոն հեկտ.։

Այս նշանակում ե, վոր կոլտնտեսային շինարարության հնգամյա ծրագիրը մենք 2 տարվա ընթացքում արդեն գերակատարել ենք ավելի քան $1\frac{1}{2}$ անգամ։ (Ծափահարություններ)։

Ըստ հնգամյա պլանի կոլտնտեսությունների գծով հնգամյակի վերջերքին մենք պետք ե ունենայինք հատիկամշակույթների 190,5 միլիոն ցենտներ համախառն արտադրանք։ Իսկ իրականում՝ կոլտնտեսությունների գծով արդեն այս տարի մենք ունենալու յենք հատիկամշակույթների 256 միլիոն ցենտներ համախառն արտադրանք։

Այս նշանակում ե, վոր հացահատիկի կոլտնտեսային արտադրանքի հնգամյա ծրագիրը մենք 2 տարվա ընթացքում արդեն գերակատարում ենք ավելի քան 30%-ով։

Հնգամյակը 2 տարում։ (Ծափահարություններ)։

Թող այժմ շաղակրատեն ոպորտունիստական սանամերները, թե կոլտնտեսային շինարարության հնգամյակը չի կարելի կատարել ու գերակատարել 2 տարում։

6. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Այսպիսով, դուրս ե գալիս, վոր հանրայնացված սեկտորի առաջընթաց աճումն ինչպես արդյունաբերության բնագավառում, այնպես և գյուղատնտեսության բնագավառում մի փաստ ե, վոր վոչ մի կասկածի յենթակա չե։

Աշխատավորության նյութական դրության տեսակետից այս ինչ կարող ե նշանակել։

Այս նշանակում ե, վոր դրանով իսկ արդեն դրված են բանվորների ու գյուղացիների նյութական ու կուլտուրական դրության արմատական բարելավման հիմքերը։

Ինչու, ինչ կերպ։

Նախ, այն պատճառով, վոր հանրայնացված սեկտորի աճումն ամենից առաջ նշանակում ե քաղաքի ու գյուղի շահագործողական տարրերի կրճատում, նրանց տեսակարար կշռի անկում ժողովրդական տնտեսության մեջ։ Իսկ այս նշանակում ե, թե բանվորների ու գյուղացիների բաժինը յերկրի ժողովրդական յեկամտի մեջ անխուսափելիորեն աճելու յե շահագործողական դասակարգերի բաժնի հաշվին։

Յերկրորդ, այն պատճառով, վոր հանրայնացված սեկտորն աճելիս՝ ժողովրդական յեկամտի այն մասը, վորը մինչև այժմ գնում եր շահագործող դասակարգերին ու նրանց սպասավորներին (челядь) կերակրելու վրա, այսուհետև պետք ե մնա հենց արտադրության մեջ՝ արտադրությունն ընդլայնելու, նոր ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու, աշխատավորության կենցաղը բարելավելու համար։ Իսկ այս նշանակում ե, վոր բանվոր դասակարգի քանակն ու ուժը պետք ե աճեն, իսկ գործազրկությունը՝ կրճատվի ու տարծծվի։

Վերջապես, այն պատճառով, վոր հանրայնացված սեկտորի աճումը, վորքան վոր այդ աճումը տանում ե դեպի բանվոր դասակարգի նյութական դրության բարվոքումը, նշանակում ե ներքին շուկայի տարողության առաջընթաց աճում, նշանակում ե արդյունաբերության պրոդուկտների պահանջարկի մեծացում բանվորների ու գյուղացիների կողմից։ Իսկ այս նշանակում ե, վոր ներքին շուկայի աճումը պետք ե շարունակ անցնի արդյունաբերության աճումից և նրան մղի դեպի առաջ, դեպի անընդհատ ընդլայնում։

Բոլոր այս ու նման հանգամանքները տանում են դեպի բանվորների ու գյուղացիների նյութական ու կուլտուրական դրության անշեղ բարելավումը։

ա) Սկսենք բանվոր դասակարգի թվական աճման և գործազրկության կրճատման հարցից։

Յեթե վարձու աշխատանքով զբաղված անձերի քանակը (առանց գործազուրկների) 1926/27 թ. կազմում եր 10990 հազ., ապա 1927/28 թ. մենք ունեյինք 11456 հազ., 1928/29 թ.— 11997 հազ., իսկ 1929/30 թ., ըստ բոլոր տվյալների, ունենալու յենք 13 129 հազարից վոչ պակաս։ Նրանցից՝ ֆիզիկական աշխատանքով զբաղված անձերը (ներառած գյուղատնտեսական բանվորներին ու սեզոնային բանվորներին) 1926/27 թ. 7 069 հազ. եյին, 1927/28 թ.— 7 404 հազ., 1928/29 թ.— 7 758 հազ., 1929/30 թ.— 8 533 հազար։ Նրանցից՝ խոշոր արդյունաբերու-

թյան բանվորներ (առանց ծառայողների)՝ 1926/27 թ. — 2 439 հազ., 1927/28 թ. — 2 632 հազ., 1928/29 թ. — 2 858 հազար, 1929/30 թ. — 3 029 հազար։

Այս նշանակում է, վոր մենք ունենք բանվոր դասակարգի քանակի հետևողական աճման պատկեր, ըստորում՝ յեթե վարձու աշխատանքով զբաղված անձերի տոկոսը 3 տարվա ընթացքում 19,5 է յեղել, իսկ ֆիզիկական աշխատանքով զբաղված անձերինը — 20,7, ապա արդյունաբերական բանվորների աճման տոկոսը 24,2 է։

Անցնենք գործազրկության հարցին։ Պետք է ասել, վոր այս բնագավառում մեծ խառնաշփոթություն է տիրում ինչպես Աշխժողկոմատում, այնպես էլ ՀԱՄԿԽ-ում։ Մի կողմից՝ այդ հիմնարկների տվյալներով դուրս է գալիս, վոր մենք ունենք մոտ մի միլիոն գործազուրկներ, վորոնցից նվազագույնորեն վորակյալները կազմում են ընդամենը 14,3%, իսկ մոտ 73% կազմում են այսպես կոչված՝ ինտելիգենտական աշխատանքով զբաղված անձերն ու անորակները, ըստորում՝ վերջիններից հսկայական մեծամասնությունը կազմում են այն կանայք ու դեռահասները, վորոնք առնչություն չեն ունեցել արդյունաբերական արտադրության հետ։ Մյուս կողմից՝ ըստ նույն այդ տվյալների, մենք վորակյալ աշխատուժի սոսկալի սով ենք ապրում, աշխատանքի բորսաները մի 80 տոկոսով չեն բավարարում մեր ձեռնարկությունների աշխատուժի պահանջարկը, և մենք, այսպիսով, հարկադրված ենք շտապ, տառացի կերպով վոտի վրա, սովորեցնել բոլորովին անորակ մարդկանց և նրանցից պատրաստել վորակյալ մարդիկ՝ մեր ձեռնարկությունների թեկուզ նվազագույն պահանջները բավարարելու համար։ Ապա փորձեցեք բան հասկանալ այս խառնաշփոթությունից։ Համենայն դեպս, պարզ է, վոր այս գործազուրկները չեն կազմում մեր արդյունաբերության գործազուրկների վոչ պահեստային, վոչ էլ, մանավանդ, մշտական բանակը։ Յեվ ինչ։ Մինչև անգամ Աշխժողկոմատի տվյալներով դուրս է գալիս, վոր վերջին ժամանակներս գործազուրկների քանակն անցյալ տարվա համեմատությամբ կրճատվել է ավելի քան 700 հազար հոգով։ Այդ նշանակում է, վոր գործազուրկների թիվն առ 1-ն մայիսի սույն թվի կրճատվել է ավելի քան 42%-ով։

Ահա ձեզ սոցիալիստական սեկտորի աճելու մի արդյունքն ևս մեր ժողովրդական տնտեսության մեջ։

բ) Ե՛լ ավելի ապշեցուցիչ հետևանք է ստացվում, յեթե հարցը քննենք ժողովրդական յեկամուտն ըստ դասակարգերի բաշխելու տեսակետից։ Ժողովրդական յեկամուտն ըստ դասակարգերի բաշխելու հարցը՝ բանվորների ու գյուղացիների նյութական ու կուլտուրական դրության տեսակետից՝ արմատական հարց է։ Զուր չէ, վոր Գերմանիայի, Անգլիայի, ՀԱՄՆ-ի բուրժուական տնտեսագետներն աշխատում են այդ հարցը խճճել հոգուտ բուրժուազիայի՝ հենց մի գլուխ հրապարակելով իրենց «միանգամայն ոբյեկտիվ» հետազոտություններն այս մասին։

Համագերմանական վիճակագրական վարչության տվյալներով՝ աշխատավարձի բաժինը Գերմանիայի ժողովրդական յեկամտի մեջ 1929 թ. 70% եր կազմում, իսկ բուրժուազիայի բաժինը—30%։ Ֆեդերալ առևտրական հանձնաժողովի և Տնտեսագիտական հետազոտությունների ազգային բյուրոյի տվյալներով՝ բանվորների բաժինը ՀԱՄՆ-ի ժողովրդական յեկամտի մեջ 1923 թվականին 54%-ից ավելի յե կազմել, իսկ կապիտալիստների բաժինը—45%-ից քիչ ավելի։ Վերջապես, տնտեսագետներ Բոլեյի ու Ստեմպի տվյալներով՝ բանվոր դասակարգի բաժինն Անգլիայի ժողովրդական յեկամտի մեջ 1924 թ. կազմում եր 50%-ից փոքր ինչ պակաս, իսկ կապիտալիստների բաժինը—Անգլիայի ժողովրդական յեկամտի 50%-ից փոքր ինչ ավելի։

Հասկանալի յե, վոր չի կարելի հավատ ընծայել այդ հետազոտությունների արդյունքներին։ Չի կարելի, վորովհետև այդ հետազոտությունների մեջ բացի զուտ տնտեսագիտական կարգի մեղանչումներից կան և այլ կարգի մեղանչումներ, վորոնց նպատակն է մասամբ թագցնել կապիտալիստների յեկամուտներն ու պակասեցնել նրանք, մասամբ էլ ուռցնել ու մեծացնել բանվոր դասակարգի յեկամուտները՝ բանվորների թվին ավելացնելով այն պաշտոնյաներին, վորոնք ահագին ռոճիկներ են ստանում։ Ել յես չեմ խոսում այն մասին, վոր այս հետազոտությունների մեջ հաճախ չեն հաշվառվում ֆերմերների ու առհասարակ գյուղական կապիտալիստների յեկամուտները։

Ընկ. Վարգան այս տվյալները քննադատական վերլուծության յենթարկեց։ Յեվ ահա թե նա ինչ ստացավ։ Դուրս է գալիս, վոր քաղաքի ու գյուղի՝ ուրիշի աշխատանքը չշահագործող բանվորների և այլ աշխատավորների բաժինը կազմել է՝ Գեր-

մանիայում ժողովրդական եկամտի 55%, ՀԱՄՆ-ում — 54%, Անգլիայում — 45%, իսկ կապիտալիստների բաժինը՝ Գերմանիայում — 45%, ՀԱՄՆ-ում — 46%, Անգլիայում — 55%:

Այսպես է գործի դրությունը կապիտալիստական խոշորագույն երկրներում:

Իսկ ինչպես է գործի դրությունը ԽՍՀՄ-ում:

Ահա ձեզ Պետպլանի տվյալները: Դուրս է գալիս, որ

ա) Բանվորների և ուրիշի աշխատանքը չօգտագործող աշխատավոր գյուղացիների բաժինը միգանում 1927/28 թ. կազմում էր ամբողջ ժողովրդական եկամտի 75,2% (այդ թվում քաղաքային ու գյուղական բանվորների բաժինը — 33,3%), 1928/29 թ. — 76,5% (այդ թվում քաղաքային ու գյուղական բանվորների բաժինը — 33,2%), 1929/30 թ. — 77,1% (այդ թվում քաղաքային ու գյուղական բանվորների բաժինը — 33,5%:

բ) Կուլակների և քաղաքային կապիտալիստների բաժինը կազմում էր՝ 1927/28 թ. — 8,1%. 1928/29 թ. — 6,5%, 1929/30 թ. — 1,8%:

գ) Տնայնագործների բաժինը, որոնց մեծամասնությունն աշխատավորական տարր է, կազմում էր՝ 1927/28 թ. — 6,5%, 1928/29 թ. — 5,4%, 1929/30 թ. — 4,4%:

դ) Պետական սեկտորի բաժինը, որի եկամուտները բանվոր դասակարգի և առհասարակ աշխատավորական մասսաների եկամուտն են, կազմում էր՝ 1927/28 թ. — 8,4%, 1928/29 թ. — 10,0%, 1929/30 թ. — 15,2%:

ե) Վերջապես, այսպես կոչված՝ այլոց (նկատի յէն առնված կենսաթոշակները) բաժինը կազմում էր՝ 1927/28 թ. — 1,8%, 1928/29 թ. — 1,6%, 1929/30 թ. — 1,5%:

Այսպիսով դուրս է գալիս, որ այն ժամանակ, երբ կապիտալիստական առաջավոր երկրներում շահագործող դասակարգերի բաժինը ժողովրդական եկամտի մեջ կազմում է մոտ 50%, նույնիսկ դրանից էլ ավելի, մեզանում, ԽՍՀՄ-ում, շահագործող դասակարգերի բաժինը ժողովրդական եկամտի 2%-ից ավելի չէ:

Իսկապես սրանով էլ բացատրվում է այն ապշեցուցիչ փաստը, որ, ամերիկյան բուրժուական գրող Դեննիի ասելով, 1922 թ. ՀԱՄՆ-ում «սեփականատերերի 1%-ն իր ձեռքում էր կենտրոնացրել ազգային ամբողջ հարստության 59%-ը», իսկ Անգլիայում, նույն այդ Դեննիի ասելով, 1920/21 թ. «սեփականատերերի ամբողջ թվի 2%-ից պակասն ազգային ամբողջ հարստության 64%-ի տերն էր» (տես Դեննիի «Ամերիկան նվաճում է Բրիտանիային» գրքույկը):

Նման փաստեր արդյոք կարող են տեղի ունենալ մեզանում, ԽՍՀՄ-ում, խորհուրդների երկրում: Պարզ է, որ չեն կարող: ԽՍՀՄ-ում վաղուց արդեն չկան և չեն կարող լինել այդպիսի «սեփականատերեր»:

Բայց եթե ԽՍՀՄ-ում 1929/30 թ. ժողովրդական եկամտի ընդամենը մոտ միայն 2%-ն է շահագործող դասակարգերին բաժին ընկնում, ապա ինչ է լինում ժողովրդական եկամտի մնացած մասսան:

Պարզ է, որ այն մնում է բանվորների ու աշխատավոր գյուղացիների ձեռքում:

Ահա թե որտեղ է բանվոր դասակարգի ու գյուղացիության միլիոնների մեջ խորհրդային իշխանության ունեցած ուժի ու հեղինակության աղբյուրը:

Ահա թե որտեղ է ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների նյութական բարեկեցության սիստեմատիկ աճման հիմքը:

զ) Վճռողական այս փաստերի լույսի տակ միանգամայն հասկանալի յէն դառնում՝ բանվորների ռեալ աշխատավարձի սիստեմատիկ մեծացումը, բանվորների սոցիալական ապահովագրման բյուջեի աճումը, գյուղացիության չքավորական ու միջակ տնտեսություններին ցույց տրվող օգնության ուժեղացումը, բանվորական բնակարանային շինարարության, բանվորների կենցաղի բարելավման, մայրության ու մանկության համար արվող հատկացումների ավելացումը և սրա կապակցությամբ ԽՍՀՄ-ի ազգաբնակության առաջընթաց աճումը՝ մահացության, մանավանդ երեխաների մահացության կրճատումով հանդերձ:

Հայտնի յէ, օրինակ, որ բանվորների ռեալ աշխատավարձը, հաշված սոցապահովագրությունը և բանվորների կենցաղի բարելավման ֆոնդի համար շահույթներից արված հատկացումները, նախապատերազմյան մակարդակի վերաբերմամբ աճել է մինչև 167%: Բանվորների միմիայն սոցիալական ապահովագրության բյուջեն վերջին յերեք տարում աճել է 1927/28 թվականի 980 միլիոն ռուբլուց մինչև 1400 միլիոն ռ. 1929/30 թ.: Մայրության ու մանկության պաշտպանության վրա վերջին 3 տարում (1927/28 — 1929/30 թ. թ.) գնացել է 494 միլիոն

ռուբլի։ Նախադպրոցական կրթության վրա (մանկապարտեզներ, հրապարակներ և այլն) նույն այդ ժամանակաշրջանում գնացել է 204 միլիոն ռուբլի։ Բանվորական բնակարանաշինարարության վրա—1880 միլիոն ռուբլի։

Այս, իհարկե, չի նշանակում, թե ռեալ աշխատավարձի լուրջ ավելացման համար ամեն անհրաժեշտ բան արված է, թե չէր կարելի ռեալ աշխատավարձը հասցնել ավելի բարձր աստիճանի։ Յեվ յեթե այս չի արված, ապա սրա մեղավորը մեր մատակարարման ապարատի բյուրոկրատիզմն է ընդհանրապես, սպառողական կոոպերացիայի բյուրոկրատիզմն ամենից առաջ և առանձնապես։ Ըստ Պետպլանի տվյալների՝ հանրայնացված սեկտորը ներքին առևտրում 1929/30 թ. ընդգրկում է մեծածախի 99%-ից ավելին և մանրածախի 89%-ից ավելին։ Այս նշանակում է, վոր կոոպերացիան սիստեմատիկորեն հաղթում է մասնավոր սեկտորին և մոնոպոլիստ է դառնում առևտրի բնագավառում։ Այս, իհարկե, լավ է։ Բայց վատն այն է, վոր այս մենաշնորհը մի շարք դեպքերում ի վնաս սպառողների յե լինում։ Դուրս է գալիս, վոր, չնայած իր գրեթե մենաշնորհային դիրքին առևտրի մեջ, կոոպերացիան գերադասում է բանվորներին մատակարարել ավելի «յեկամտաբեր» այնպիսի ապրանքներ, վորոնք մեծ շահույթներ են տալիս (արդուզարդի իրեր և այլն), և խուսափում է նրանց մատակարարել ավելի պակաս «յեկամտաբեր», թեկուզ և բանվորների համար ավելի անհրաժեշտ ապրանքներ (գյուղատնտեսական մթերքներ)։ Բանվորները սրա կապակցությամբ ստիպված են գյուղատնտեսական մթերքների իրենց պահանջմունքների մոտ 25%-ը բավարարել մասնավոր շուկայում՝ բարձր գներ վճարելով։ Ել յես չեմ խոսում այն մասին, վոր կոոպերացիայի ապարատն ամենից ավելի հոգ է տանում հաշվեկշռի մասին, վորի պատճառով էլ, չնայած ղեկավար կենտրոնների կատեգորիկ դիրեկտիվներին, չափազանց դանդաղ է դիմում մանրածախ գների իջեցման։ Դուրս է գալիս, վոր տվյալ դեպքում կոոպերացիան գործում է վոչ թե իբրև սոցիալիստական սեկտոր, այլ իբրև մի յուրատեսակ սեկտոր, վորը վարակված է ինչ-վոր նեպմանական վոգով։ Հարց է ծագում, թե ո՞ւմ է հարկավոր այսպիսի կոոպերացիան, և ի՞նչ ոգուտ բանվորներին նրա մենաշնորհից, յեթե նա չի իրագործում բանվորների ռեալ աշխատավարձի լուրջ բարելավման խնդիրը։

Յեվ յեթե, չնայած դրան, մեզանում ռեալ աշխատավարձը

տարեցտարի այնուամենայնիվ անշեղորեն բարձրանում է, ապա այդ նշանակում է, վոր մեր հասարակակարգը, ժողովրդական յեկամտի բաշխման սիստեմը և աշխատավարձի գծով ունեցած ամբողջ դիրքավորումն այնպիսի յեն, վոր նրանք հնարավորություն ունեն չեզոքացնելու և գերածածկելու կոոպերացիայից յեկող բոլոր և ամեն տեսակի մինուսները։

Յեթե այս հանգամանքին ավելացնենք մի շարք այլ գործոններ, ինչպիսիներն են՝ հասարակական սննդի դերի մեծացումը, բնակարանների եժանացումը բանվորների համար, հսկայական քանակությամբ թոշակները բանվորների ու նրանց յերեխաների համար, կուլտուրական սպասարկումը և այլն, ապա կարելի յե համարձակորեն ասել, վոր բանվորների աշխատավարձի ավելացումը շատ ավելի մեծ տոկոս կկազմի, քան այդ ցույց է տրվում մեր միքանի հիմնարկների վիճակագրության մեջ։

Այս ամենը միասին վերցրած՝ պլյուս 830 հազարից ավելի արդյունաբերական բանվորների (33,5%) 7-ժամյա աշխատորվա փոխադրելը, պլյուս $1^1/_2$ միլիոնից ավելի արդյունաբերական բանվորների (63,4%) հնգորյա շաբաթվա փոխադրելը, պլյուս բանվորների համար յեղած հանգստյան տների, սանատորիաների ու կուրորտների լայն ցանցի առկայությունը, վորոնցից վերջին 3 տարում ոգտվել են 1700 հազ. ավելի բանվորներ,— այս ամենը բանվոր դասակարգի աշխատանքի ու կենցաղի այնպիսի իրադրություն է ստեղծում, վորը մեզ հնարավորություն է տալիս աճեցնելու առողջ ու կենսուրախ, Խորհրդային յերկրի հզորությունը պատշաճ բարձունքի հասցնելու և թշնամիների վոտնձգություններից նրան իրենց կրծքով պաշտպանելու ընդունակ բանվորների նոր սերունդ (Ծափահարություններ)։

Ինչ վերաբերում է ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվացած գյուղացիներին ոգնելուն, նկատի ունենալով նույնպես չքավորությանն ոգնելը, ապա այդ ոգնությունը վերջին 3 տարում (1927/28—1929/30 թ. թ.) արտահայտվել է 4 միլիարդ ռուբլուց վոչ պակաս մի գումարով, վոր բաց է թողնված վարկի ու պետական բյուջեյի գծով։ Հայտնի յե, վոր այս 3 տարում գյուղացիներին միմիայն սերմացուով ոգնելու համար տրված է վոչ պակաս քան 154 միլիոն փութ հացահատիկ։

Զարմանալի չե, վոր բանվորներն ու գյուղացիները մեզանում ընդհանրապես վատ չեն ապրում, բնակչության մահացությունը նախապատերազմյան ժամանակի հետ համեմատած պա-

կասել է ընդհանուր գծով $36^{0}/_{0}$-ով և յերեխաների գծով՝ $42,5^{0}/_{0}$-ով, իսկ բնակչության տարեկան աճը մեզանում կազմում է 3 միլիոն հոգուց ավելի։ (Ծափահարություններ)։

Ինչ վերաբերում է բանվորների ու գյուղացիների կուլտուրական դրությանը, ապա այս բնագավառումն էլ ունենք վորոշ նվաճումներ, վորոնք, սակայն, մեզ վոչ մի դեպքում չեն կարող բավարարել՝ նրանց աննշան լինելու պատճառով։ Յեթե չհաշվենք ամեն տեսակի բանվորական ակումբները, խրճիթ-ընթերցարանները, գրադարաններն ու անգրագիտության վերացումը, վորն այս տարի ընդգրկում է $10^{1}/_{2}$ միլիոն մարդ, ապա կուլտուր-կրթական գործի դրությունը հետևյալ կերպ է ներկայանում։ Տարրական կրթության դպրոցներն ընթացիկ տարում ընդգրկում են 11638 հազ. սովորող. II աստիճանի դպրոցները—1945 հազար. ինդուստրիալ-տեխնիկական, տրանսպորտային, գյուղատնտեսական դպրոցներն ու մասսայական վորակավորման արտադրական դասընթացները—333,1 հազար. տեխնիկումները և նրանց հավասար արհեստագիտական դպրոցները—238,7 հազար. բուհերը և տեխբուհերը—190,4 հազար։ Այս ամենը հնարավորություն տվեց ԽՍՀՄ-ում գրագիտությունը հասցնելու մինչև $62,6^{0}/_{0}$-ի՝ ընդդեմ նախապատերազմյան ժամանակի $33^{0}/_{0}$-ի։

Այժմ գլխավորը՝ տարրական պարտադիր ուսուցման անցնելն է։ Յես ասում եմ՝ «գլխավորը», վորովհետև մի այսպիսի անցում վճռողական քայլ կնշանակեր կուլտուրական հեղափոխության գործում։ Իսկ վաղուց ժամանակ է, վոր անցնենք այդ գործին, վորովհետև մենք այժմ ունենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է տարրական ընդհանուր կրթության գործը ԽՍՀՄ-ի շրջանների ճնշող մեծամասնության մեջ կազմակերպելու համար։ Մինչև այժմ մենք հարկադրված եյինք «խնայողություն անել ամեն բանում, մինչև անգամ դպրոցների գործում», վորպեսզի «փրկենք, վերականգնենք ծանր արդյունաբերությունը» (Լենին)։ Սակայն, վերջին ժամանակներս մենք արդեն վերականգնել ենք ծանր արդյունաբերությունը և այն շարժում ենք առաջ։ Հետևաբար, հասել է ժամանակը, յերբ մենք պետք է ձեռնամուխ լինենք տարրական ընդհանուր պարտադիր կրթության կազմակերպմանը։

Յես կարծում եմ, վոր համագումարը ճիշտ կվարվի, յեթե նա ընդունի սրա վերաբերյալ վորոշակի ու միանգամայն կատեգորիկ վճիռ։ (Ծափահարություններ)։

7. ԱՃՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԿՌԻՎԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆ ԱՄԲՈՂՋ ՃԱԿԱՏՈՎ

Յես խոսեցի ժողովրդական տնտեսության զարգացման գործում մեր ունեցած նվաճումների մասին։ Յես խոսեցի՝ արդյունաբերության բնագավառում, գյուղատնտեսության բնագավառում, ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցման բնագավառում սոցիալիզմի հիմունքներով կատարված նվաճումների մասին։ Յես խոսեցի, վերջապես, բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման գծով կատարված նվաճումների մասին։

Բայց սխալ կլիներ կարծել, թե մենք այս նվաճումները ձեռք ենք բերել «հեշտ ու հանգիստ», այսպես ասած՝ ինքնահոսի կարգով, առանց հատուկ ջանքերի ու կամքի լարման, առանց պայքարի ու ցնցումի։ Այդպիսի նվաճումներն ինքնահոսի կարգով չեն տրվում։ Այդ նվաճումներն իրականում մենք ձեռք ենք բերել վճռական պայքարով ընդդեմ դժվարությունների, լուրջ ու տևական պայքարով՝ դժվարությունները հաղթահարելու համար։

Դժվարությունների մասին մեզանում բոլորն են խոսում։ Բայց բոլորը չէ, վոր իրենց հաշիվ են տալիս այդ դժվարությունների բնույթի մասին։ Այնինչ՝ դժվարությունների պրոբլեմը մեզ համար լրջագույն նշանակություն ունի։

Այստեղից էլ հարց է ծագում. վորո՞նք են մեր դժվարությունների բնորոշ գծերը, թշնամական ի՞նչ ուժեր են թաքնված նրանց հետևում, և մենք ինչպես ենք հաղթահարում նրանց։

ա) Մեր դժվարությունները բնորոշելիս պետք է նկատի ունենալ գոնե հետևյալ հանգամանքները։

Ամենից առաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, վոր մեր ներկա դժվարությունները վերակառուցման ժամանակաշրջանի դժվարություններ են։ Ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է, վոր նրանք արմատապես տարբերվում են մեր տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի դժվարություններից։ Յեթե վերականգնման ժամանակաշրջանում խոսքը հին գործարանները լիարժենելու և գյուղատնտեսությանը նրա հին բազայի վրա ոգնություն ցույց տալու մասին եր, ապա այժմ բանն այն մասին է, վոր արմատապես վերաշինենք, վերակառուցենք թե արդյունաբերությունը, թե գյուղատնտեսությունը՝

փոխելով նրանց տեխնիկական բազան, զինելով նրանց ժամանակակից տեխնիկայով։ Այս նշանակում ե, վոր մեր առջև ծառացած ե ժողովրդական տնտեսության տեխնիկական ամբողջ բազայի վերաշինման խնդիրը։ Իսկ այս պահանջում ե ժողովրդական տնտեսության մեջ անել նոր, ավելի սուղ ներդրումներ, պահանջում ե նոր, ավելի փորձված կադրեր, վոր ընդունակ լինեն տիրապետելու նոր տեխնիկային և այն առաջ մղելու։

Յերկրորդ, պետք ե նկատի ունենալ այն հանգամանքը, վոր մեզանում ժողովրդական տնտեսության վերակառուցումը չի սահմանափակվում նրա տեխնիկական բազայի վերաշինմամբ, այլ, ընդհակառակը, միաժամանակ պահանջում ե վերակառուցել սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Յես այստեղ նկատի ունեմ գլխավորապես գյուղատնտեսությունը։ Արդյունաբերության մեջ, վորն արդեն միավորված ու սոցիալիզացիայի յե յենթարկված, տեխնիկական վերակառուցումը հիմնականում արդեն ունի պատրաստի սոցիալ-տնտեսական բազա։ Վերակառուցման խնդիրն այստեղ այն ե, վոր արդյունաբերության մեջ ուժեղացնենք կապիտալիստական տարրերի արտամղման պրոցեսը։ Գյուղատնտեսության մեջ բանն այսպես պարզ չե։ Գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերակառուցումն, իհարկե, նույն այդ նպատակներն ե հետապնդում։ Բայց գյուղատնտեսության առանձնահատկությունը մեզանում այն ե, վոր նրանում տակավին գերակշռում ե մանր-գյուղացիական տնտեսությունը, վոր մանր տնտեսությունը զուրկ ե նոր տեխնիկան յուրացնելու հնարավորությունից, վոր, այս պատճառով, գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերաշինումն անհնարին ե՝ առանց հին սոցիալ-տնտեսական կացութաձևը միաժամանակ վերակառուցելու, առանց մանր տնտեսությունները խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ միավորելու, առանց արմատախիլ անելու կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ։

Հասկանալի յե, վոր այս հանգամանքները չեն կարող չբարդացնել մեր դժվարությունները, չեն կարող չբարդացնել այդ դժվարությունները հաղթահարելու մեր աշխատանքը։

Յերրորդ, պետք ե նկատի ունենալ այն հանգամանքը, վոր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման վերաբերյալ մեր աշխատանքը, վորը կտրատում ե կապիտալիզմի տնտեսական կապերը և գլխիվայր ե շուռ տալիս հին աշխարհի բոլոր ուժերը, չի կարող այդ ուժերի կողմից կատաղի դիմադրություն չառաջացնել։ Ինչպես հայտնի յե, այդ այդպես ել ե։ Բուրժուական ինտելիգենցիայի վերնախավի չարամիտ վնասարարությունը մեր արդյունաբերության բոլոր ճյուղերում, կուլակության գազանային պայքար տնտեսության կոլեկտիվ ձևերի դեմ գյուղում, խորհրդային իշխանության միջոցառումների սաբոտաժ ապարատի բյուրոկրատական տարրերի կողմից, վորոնք դասակարգային թշնամու գործակալությունն են հանդիսանում,—առայժմ սրանք են մեր յերկրի մահացող դասակարգերի դիմադրության գլխավոր ձևերը։ Պարզ ե, վոր այս հանգամանքները չեն կարող ծառայել ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու մեր աշխատանքը հեշտացնելուն։

Չորրորդ, պետք ե նկատի ունենալ այն հանգամանքը, վոր մեր յերկրի մահացող դասակարգերի դիմադրությունը վոչ թե արտաքին աշխարհից մեկուսացված ե տեղի ունենում, այլ աջակցություն ե գտնում կապիտալիստական շրջապատման կողմից։ Կապիտալիստական շրջապատումը հասարակ աշխարհագրական հասկացողություն չե։ Կապիտալիստական շրջապատում—այդ նշանակում ե, թե ԽՍՀՄ-ի շուրջը կան դասակարգային թշնամի ուժեր, վորոնք պատրաստ են աջակցելու մեր դասակարգային թշնամիներին ԽՍՀՄ-ի ներսում՝ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես, թե՛ ֆինանսական բլոկադայի միջոցով, թե՛, դեպքը բերելիս, ռազմական ինտերվենցիայի միջոցով։ Ապացուցված ե, վոր մեր մասնագետների վնասարարությունը, կուլակության հակախորհրդային յելույթները, մեր ձեռնարկությունների ու կառուցումների հրկիզումներն ու պայթեցումները դրամապես ոժանդակվում ու ներշնչվում են դրսից։ Իմպերիալիստական աշխարհը շահագրգռված չե, վոր ԽՍՀՄ վոտքի կանգնի ու հնարավորություն ստանա հասնելու և անցնելու կապիտալիստական առաջավոր յերկրներից։ Այստեղից ել՝ նրա ոգնությունը հին աշխարհի ուժերին ԽՍՀՄ-ում։ Հասկանալի յե, վոր այս հանգամանքը նույնպես չի կարող ծառայել մեր վերակառուցման աշխատանքը հեշտացնելուն։

Բայց մեր դժվարությունների բնութագիրը լրիվ չի լինի, յեթե նկատի չունենանք ևս մի հանգամանք։ Խոսքը մեր դժվարությունների հատուկ բնույթի մասին ե։ Խոսքն այն մասին ե, վոր մեր դժվարությունները վոչ թե անկման դժվարություններ կամ լճացման դժվարություններ են, այլ աճման դժվարություններ, վերելքի դժվարություններ, առաջշարժման դժվարություններ են։ Այս նշանակում ե, վոր մեր դժվարություններն արմատապես

տարբերվում են կապիտալիստական յերկրների դժվարություններից: Յերբ ՀԱՄՆ-ում խոսում են դժվարությունների մասին, նկատի ունեն անկման դժվարությունները, վորովհետև Ամերիկան ներկայումս ճգնաժամ, այսինքն՝ տնտեսության անկում է ապրում: Յերբ Անգլիայում խոսում են դժվարությունների մասին, նկատի ունեն լճացման դժվարությունները, վորովհետև արդեն միքանի տարի յե, վոր Անգլիան լճացում, այսինքն՝ առաջշարժման դադարում է ապրում: Իսկ յերբ մենք ենք խոսում մեր դժվարությունների մասին, նկատի ունենք վո՛չ թե անկում և վո՛չ թե լճացում զարգացման գործում, այլ մեր ուժերի աճումը, մեր ուժերի վերելքը, մեր էկոնոմիկայի առաջշարժումը: Քանի՞ կետ առաջ շարժվենք մինչև այս-ինչ ժամկետը, քանի՞ տոկոս ավելի արդյունք արտադրենք, քանի՞ միլիոն հեկտար ավելի ցանենք, քանի՞ ամսով շուտ կառուցենք գործարանը, ֆաբրիկան, յերկաթուղին, — ահա թե մեզանում ինչ հարցեր են նկատի ունենում, յերբ դժվարությունների մասին են խոսում: Հետևաբար, մեր դժվարություններն, ի տարբերություն, ասենք, Ամերիկայի կամ Անգլիայի դժվարություններից, աճման դժվարություններ են, առաջշարժման դժվարություններ:

Իսկ ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, վոր մեր դժվարություններն այնպիսի դժվարություններ են, վորոնք իրենք իրենց մեջ են պարունակում իրենց հաղթահարման հնարավորությունը: Այս նշանակում է, վոր մեր դժվարությունների տարբերիչ գիծն այն է, վոր նրանք իրենք են մեզ բազա տալիս իրենց հաղթահարման համար:

Իսկ ի՞նչ է բղխում այս ամենից:

Ամենից առաջ, սրանից այն է բղխում, վոր մեր դժվարությունները վո՛չ թե մանր ու պատահական «անհարթությունների» դժվարություններ են, այլ դասակարգային կռվի դժվարություններ:

Յերկրորդ, սրանից այն է բղխում, վոր մեր դժվարությունների հետևում թագնված են մեր դասակարգային թշնամիները, վոր այդ դժվարությունները բարդանում են մեր յերկրի մահացող դասակարգերի կատաղի դիմադրությամբ, այդ դասակարգերին դրսից ցույց տրվող աջակցությամբ, բյուրոկրատական տարրերի առկայությամբ մեր սեփական հիմնարկներում, անվստահության ու անշարժության առկայությամբ մեր կուսակցության միքանի միջնախավերում:

Յերրորդ, սրանից այն է բղխում, վոր դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է, ամենից առաջ, հետ մղել կապիտալիստական տարրերի գրոհները, ճնշել նրանց դիմադրությունը և, այսպիսով, մաքրել ճանապարհն արագ առաջշարժման համար:

Վերջապես, սրանից այն է բղխում, վոր աճման դժվարություններ հանդիսացող մեր դժվարությունների հենց բնույթը մեզ այնպիսի հնարավորություններ է տալիս, վորոնք անհրաժեշտ են դասակարգային թշնամիներին ճնշելու համար:

Բայց վորպեսզի օգտագործենք այս հնարավորությունները և նրանք իրականություն դարձնենք, վորպեսզի ճնշենք դասակարգային թշնամիների դիմադրությունը և հասնենք դժվարությունների հաղթահարման, դրա համար միայն մի միջոց գոյություն ունի. կազմակերպել հարձակումը կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ճակատով և մեկուսացնել մեր սեփական շարքերում օպորտունիստական տարրերին, վորոնք խանգարում են հարձակմանը, խուճապահար դես ու դեն են ընկնում և կուսակցության մեջ անվստահություն են մտցնում հաղթության վերաբերմամբ: (Ծափահարություններ):

Այլ միջոցներ չկան:

Միայն իրենց գլուխը կորցրած մարդիկ կարող են յելք վորոնել ընկ. Բուխարինի այն յերեխայական ֆորմուլայում, ըստ վորի, իբր թե, կապիտալիստական տարրերը խաղաղ կերպով կներաճեն սոցիալիզմի մեջ: Զարգացումը մեզանում ընթացել է և շարունակում է ընթանալ վո՛չ ընկ. Բուխարինի ֆորմուլայով: Զարգացումն ընթացել է և շարունակում է ընթանալ Լենինի՝ «ով ում» ֆորմուլայով: Արդյոք մե՞նք կճզմենք ու կճնշենք նրանց, շահագործողներին, թե՞ նրանք կճզմեն ու կճնշեն մեզ, ԽՍՀՄ-ի բանվորներիս ու գյուղացիներիս,—հարցն այսպես է դրված, ընկերներ:

Այսպես, սոցիալիզմի հարձակման կազմակերպումն ամբողջ ճակատով,—ահա թե ինչպիսի հարց ծառացավ մեր առջև՝ ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման աշխատանքը ծավալելիս:

Կուսակցությունը հենց այսպես էլ ըմբռնել է իր միսիան՝ հարձակում կազմակերպելով մեր յերկրի կապիտալիստական տարրերի դեմ:

բ) Բայց արդյոք թույլատրելի՞ յե առհասարակ հարձակու-

մը և ընդամենը՝ ամբողջ ճակատով հարձակումը նեպի գոյության պայմաններում:

Վոմանք կարծում են, թե հարձակումն անհամատեղելի յե նեպի հետ, թե նեպն, ըստ բանի եյության, նահանջ է, թե քանի վոր նահանջը վերջացել է, նեպը պետք է վերացվի: Այս, իհարկե, հիմարություն է: Մի հիմարություն, վորը կամ տրոցկիստներից է գալիս, վորոնք լենինիզմից վոչինչ չեն հասկացել և ուզում են «մի ակնթարթում» նեպը «վերացնել», կամ աջ ոպորտունիստներից, վորոնք լենինիզմից նույնպես վոչինչ չեն հասկացել և «նեպի վերացման սպառնալիքի» մասին շաղակրատելով՝ ուզում են սակարկելով հաջողեցնել հարձակումից հրաժարվելը: Յեթե նեպը նահանջով սպառվեր, կուսակցության XI համագումարում, յերբ նեպը մեզանում կիրառվում եր ամենայն հետևողականությամբ, Լենինը չեր ասի, թե «նահանջը վերջացած է»: Խոսելով նահանջի վերջացման մասին՝ Լենինը միթե դրա հետ մեկտեղ չեր հայտարարում, թե մենք ուզում ենք կիրառել «նեպը լրջորեն ու յերկար ժամանակով»: Բավական է միայն այս հարցը դնել, վորպեսզի հասկանանք հարձակման հետ նեպի անհամատեղելի լինելու վերաբերյալ շաղակրատության ամբողջ անհարիրությունը: Իրոք՝ նեպը յենթադրում է վոչ միայն նահանջ և մասնավոր առևտրի աշխուժացման թույլատրում, կապիտալիզմի աշխուժացման թույլատրում՝ պահպանելով հանդերձ պետության կարգավորող դերը (նեպի սկզբնական ստադիան): Իրոք՝ զարգացման վորոշ ստադիայում նեպը սրա հետ միասին յենթադրում է սոցիալիզմի հարձակում կապիտալիստական տարրերի վրա, մասնավոր առևտրի գործունեյության դաշտի նեղացում, կապիտալիզմի հարաբերական ու բացարձակ կրճատում, հանրայնացված սեկտորի աճող գերակշռում չհանրայնացված սեկտորից, սոցիալիզմի հաղթանակ ընդդեմ կապիտալիզմի (նեպի այժմյան ստադիան): Նեպը մտցված է սոցիալիզմի հաղթության համար ընդդեմ կապիտալիստական տարրերի: Ամբողջ ճակատով հարձակման անցնելով՝ մենք նեպը դեռ չենք վերացնում, վորովհետև դեռևս մնում են մասնավոր առևտուրն ու կապիտալիստական տարրերը, դեռևս մնում են ապրանքաշրջանառությունն ու դրամական տնտեսությունը,—բայց մենք անշուշտ վերացնում ենք նեպի սկզբնական ստադիան՝ ծավալելով նրա հաջորդ ստադիան, նեպի ներկա ստադիան, վորը նեպի վերջին ստադիան է:

Ահա թե ինչ եր ասում Լենինը 1922 թ., նեպը մտցնելուց մի տարի հետո.

«Մենք այժմ նահանջում ենք, ասես թե՝ հետ ենք նահանջում, բայց մենք այս բանն անում ենք, վոր սկզբում նահանջենք, իսկ հետո թափ առնենք և ավելի ուժեղ առաջ ցատկենք: Այս մի պայմանով է միայն, վոր մենք հետ նահանջեցինք մեր նոր տնտեսական քաղաքականության կիրառման գործում: Մենք դեռ չգիտենք, թե այժմ մենք վորտեղ և ինչպես պետք է շարափոխվենք, հարմարվենք, վերակազմակերպվենք, վորպեսզի նահանջից հետո սկսենք ամենահամառ հարձակումը դեպի առաջ: Վորպեսզի այս բոլոր գործողությունները նորմալ կարգով իրականացնենք, հարկավոր է, ինչպես առածն է ասում, նախքան վճռելը չափել վոչ թե տասը, այլ հարյուր անգամ» (հատոր XXVII, եջ 361—362):

Թվում է, թե պարզ է:

Բայց ահա մի հարց. արդյոք հասե՞լ է արդեն ժամանակը, վորպեսզի հարձակման անցնենք, արդյոք հասունացե՞լ է արդեն մոմենտը հարձակման համար:

Լենինը մի այլ տեղում, նույն այդ 1922 թ., խոսում եր այն մասին, վոր անհրաժեշտ է

«Զոդվել գյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ ու սկսել առաջ շարժվել անչափ, անսահման ավելի դանդաղ, քան յերազում եյինք մենք, բայց դրա փոխարեն՝ այնպես, վոր ամբողջ մասսան իրոք վոր շարժվի մեզ հետ»... վոր «այն ժամանակ այս շարժման այնպիսի արագացում կգա իր պահին, վորի մասին մենք այժմ յերազել անգամ չենք կարող» (հ. XXVII, եջ 231—232):

Յեվ ահա ելի նույն հարցը. արդյոք հասե՞լ է արդեն ժամանակը շարժման մի այդպիսի արագացման համար, մեր զարգացման տեմպն արագացնելու համար, արդյոք մենք ճի՞շտ ենք ընտրել մոմենտը՝ 1929 թ. յերկրորդ կեսին ամբողջ ճակատով վճռական հարձակման անցնելով:

Կուսակցությունն այս հարցին արդեն տվել է պարզ ու վորոշակի պատասխան:

Այո՛, այդպիսի մոմենտն արդեն հասել է:

Այո, կուսակցությունը ճիշտ է ընտրել մոմենտը՝ ամբողջ ճակատով անցնելով հարձակման։

Սրա մասին են խոսում բանվոր դասակարգի աճող ակտիվությունն ու կուսակցության հեղինակության չտեսնված աճումն աշխատավորության միլիոնավոր մասսաների մեջ։

Սրա մասին են խոսում չքավոր-միջակ մասսաների աճող ակտիվությունը և այդ մասսաների արմատական շրջադարձը կոլտնտեսային շինարարության կողմը։

Սրա մասին են խոսում մեր նվաճումներն ինչպես ինդուստրիայի զարգացման բնագավառում, այնպես էլ խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների շինարարության բնագավառում։

Սրա մասին է խոսում այն փաստը, որ մենք այժմ հնարավորություն ունենք կուլակային արտադրությունը ոչ միայն փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ, այլև միքանի անգամ գերածածկելու այն։

Սրա մասին է խոսում այն փաստը, որ մենք արդեն կարողացել ենք հիմնականում լուծել հացի պրոբլեմը և կուտակել հացի որոշ պաշարներ՝ հացի ապրանքային արտադրանքի ծանրության կենտրոնն անհատական արտադրության բնագավառից փոխադրելով կոլտնտեսային-խորհտնտեսային արտադրության բնագավառը։

Ահա թե որն է ապացույցն այն բանի, որ կուսակցությունը ճիշտ է ընտրել մոմենտը՝ ամբողջ ճակատով անցնելով հարձակման և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու լոզունգը հռչակելով։

Ի՞նչ կլիներ, յեթե մենք լսեյինք ընկ. Բուխարինի խմբին պատկանող աջ օպորտունիստներին, յեթե հրաժարվեյինք հարձակումից, կծկեյինք ինդուստրիայի զարգացման տեմպը, կասեցնեյինք կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների զարգացումը և հիմնվեյինք գյուղացիական անհատական տնտեսության վրա։

Մենք անշուշտ կվիժեցնեյինք մեր ինդուստրիան, կկործանեյինք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը, առանց հացի կմնայինք և մաքրած կլինեյինք ճանապարհը կուլակության բռնացման (засилие) համար։ Մենք նստած կլինեյինք կոտրած տաշտակի առաջ։

Ի՞նչ կլիներ, յեթե մենք լսեյինք Տրոցկու—Զինովյեվի խմբին պատկանող «ձախ» օպորտունիստներին և հարձակումն սկսեյինք 1926/27 թ., յերբ մենք ոչ մի հնարավորություն չունեյինք կուլակային արտադրությունը փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ։

Մենք հաստատապես տապալված կլինեյինք այս գործում, ցուցադրած կլինեյինք մեր թուլությունը, ուժեղացրած կլինեյինք կուլակության ու առհասարակ կապիտալիստական տարրերի դիրքերը, միջակին հրած կլինեյինք կուլակության գիրկը, վիժեցրած կլինեյինք մեր սոցիալիստական շինարարությունը և մնացած կլինեյինք առանց հացի։ Մենք նստած կլինեյինք կոտրած տաշտակի առաջ։

Արդյունքները նույնն են։

Բանվորները մեզանում զուր տեղը չեն ասում՝ «գնաս «ձախ»—կգաս աջ»։ (Ծափահարություններ)։

Ընկերներից ոմանք կարծում են, թե սոցիալիզմի հարձակման մեջ գլխավորը ռեպրեսիաներն են, իսկ յեթե ռեպրեսիաները չեն աճում, ապա չկա նաև հարձակում։

Արդյոք ճիշտ է այս։ Այս, իհարկե, ճիշտ չէ։

Ռեպրեսիաները հարձակման անհրաժեշտ տարրն են, բայց օժանդակ, և ոչ թե գլխավոր տարրը։ Սոցիալիզմի հարձակման մեջ գլխավորը, մեր արդի պայմաններում, մեր արդյունաբերության զարգացման տեմպն ուժեղացնելն է, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների զարգացման տեմպն ուժեղացնելը, քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերին տնտեսապես արտամղելու տեմպն ուժեղացնելը, սոցիալիստական շինարարության շուրջը մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելը, մասսաներին կապիտալիզմի դեմ մոբիլիզացիայի յենթարկելը։ Դուք կարող եք ձերբակալել ու աքսորել տասնյակ ու հարյուր հազարավոր կուլակներ, բայց յեթե սրա հետ միաժամանակ դուք չանեք այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի արագացնեք տնտեսության նոր ձևերի կառուցումը, փոխարինեք տնտեսության հին, կապիտալիստական ձևերը նոր ձևերով, խարխլեք ու վերացնեք գյուղի կապիտալիստական տարրերի տնտեսական գոյության ու զարգացման արտադրական աղբյուրները,—միևնույն է՝ կուլակությունը կվերակենդանանա ու կաճի։

Ուրիշները կարծում են, թե սոցիալիզմի հարձակումը հառաջխաղացում է՝ առանց համապատասխան նախապատրաստման, առանց հարձակման ընթացքում ուժերը վերախմբա-

վորելու, առանց նվաճված դիրքերն ամրացնելու, առանց ռեզերվները հաջողությունների զարգացման համար օգտագործելու. իսկ յեթե նշաններ յերևացին, վոր, ասենք, գյուղացիների մի մասը հետ է քաշվում կոլտնտեսություններից, ապա այդ նշանակում է, վոր արդեն «հեղափոխության տեղատվություն», շարժման անկում, հարձակման դադարեցում ունենք։

Արդյոք ճիշտ է այս։ Այս, իհարկե, ճիշտ չէ։

Նախ, վոչ մի հարձակում, թեկուզ ամենահաջողը, չի լինում առանց վորոշ ճեղքվածքների ու գերցատկումների (засcoков) առանձին ճակատամասերում։ Այս հիման վրա խոսել հարձակման դադարեցման կամ տապալման մասին՝ նշանակում է չհասկանալ հարձակման եյությունը։

Յերկրորդ, չի յեղել և չի կարող լինել հաջող հարձակում առանց ուժերը հենց հարձակման ընթացքում վերախմբավորելու, առանց գրաված դիրքերն ամրացնելու, առանց ռեզերվները հաջողությունների ծավալման համար օգտագործելու և հարձակումը մինչև վերջը հասցնելու։ Հախուռն առաջխաղացման պարագայում, այսինքն՝ առանց այս պայմանները պահելու՝ հարձակումն անխուսափելիորեն պետք է ներքնապես սպառվի ու տապալվի։ Հախուռն առաջխաղացումը մահ է հարձակման համար։ Այս մասին է խոսում մեր քաղաքացիական պատերազմի հարուստ փորձը։

Յերրորդ, ինչպես կարելի յե անալոգիա անցկացնել «հեղափոխության տեղատվության», վորը սովորաբար ծագում է շարժման անկման բազայի վրա, և կոլտնտեսություններից գյուղացիների մի մասի տեղատվության միջև, վորը ծագել է շարժման շարունակվող վերելքի բազայի վրա, մեր սոցիալիստական ամբողջ շինարարության,—թե արդյունաբերական, թե կոլտնտեսային շինարարության,—շարունակվող վերելքի բազայի վրա, մեր հեղափոխության շարունակվող վերելքի բազայի վրա։ Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել այս յերկու միանգամայն այլասեռ յերևույթների միջև։

գ) Ի՞նչն է բոլշևիկյան հարձակման եյությունը մեր, արդի պայմաններում։

Բոլշևիկյան հարձակման եյությունն, ամենից առաջ, այն է, վոր մոբիլիզացիայի յենթարկենք մասսաների դասակարգային զգաստությունը և հեղափոխական ակտիվությունը մեր յերկրի կապիտալիստական տարրերի դեմ. մոբիլիզացիայի յենթարկենք

մասսաների ստեղծագործական ձեռներեցությունը և ինքնագործունեությունը մեր հիմնարկների ու կազմակերպությունների բյուրոկրատիզմի դեմ, վորը ծածկոցի տակ է պահում մեր հասարակակարգի ընդերքում թաքնված հսկայական ռեզերվները և թույլ չի տալիս, վոր նրանց օգտագործենք. կազմակերպենք մասսաների մրցակցությունն ու աշխատանքային վերելքը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, սոցիալիստական շինարարության ծավալման համար։

Յերկրորդ, բոլշևիկյան հարձակման եյությունն այն է, վոր կազմակերպենք արհմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և ամեն տեսակ այլ մասսայական կազմակերպությունների գործնական ամբողջ աշխատանքի վերակառուցումը՝ ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանի պահանջմունքների համապատասխան. ամենից ավելի ակտիվ ու հեղափոխական աշխատողներից միջուկ ստեղծենք նրանց մեջ՝ հետ վանելով ու մեկուսացնելով օպորտունիստական, տրեդ-յունիոնիստական, բյուրոկրատական տարրերին. նրանցից դուրս քշենք խորթ ու այլասերված տարրերին և ցածից նոր աշխատողներ առաջ քաշենք։

Այնուհետև, բոլշևիկյան հարձակման եյությունն այն է, վոր միջոցների առավելագույնը մոբիլիզացիա անենք՝ մեր ինդուստրիան ֆինանսավորելու գործի համար, մեր խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները ֆինանսավորելու գործի համար և այս ամբողջ գործի ծավալման համար ուղարկենք մեր կուսակցության լավագույն մարդկանց։

Վերջապես, բոլշևիկյան հարձակման եյությունն այն է, վոր մոբիլիզացիայի յենթարկենք բուն իսկ կուսակցությունը՝ հարձակման ամբողջ գործը կազմակերպելու համար. ամրապնդենք ու սրենք կուսակցական կազմակերպությունները՝ վտարելով այնտեղից բյուրոկրատիզմի ու վերասերման տարրերը. մեկուսացնենք ու հետ վանենք լենինյան գծից աջ ու «ձախ» թեքումների արտահայտիչներին՝ առաջին պլանը քաշելով իսկական, կայուն լենինականներին։

Սրանք են տվյալ մոմենտում բոլշևիկյան հարձակման հիմունքները։

Կուսակցությունն ինչպես է իրագործել հարձակման այս պլանը։

Դուք գիտեք, վոր կուսակցությունն այս պլանն ամենայն հետևողականությամբ է իրագործել։

Բանը նրանից սկսվեց, որ կուսակցությունը լայն **ինքնաքննադատություն** ծավալեց՝ կենտրոնացնելով մասսաների ուշադրությունը մեր շինարարության թերությունների վրա, մեր կազմակերպությունների ու հիմնարկների թերությունների վրա։ Դեռևս XV համագումարում հռչակվեց ինքնաքննադատության ուժեղացման անհրաժեշտությունը։ Ինքնաքննադատությանը հետագա զարկ տվին մի կողմից՝ Շախտիի գործը և վնասարարությունն արդյունաբերության տարբեր ճյուղերում, վորոնք հայտաբերեցին հեղափոխական հոտառության բացակայությունը կուսակցության առանձին օղակներում, մյուս կողմից՝ պայքարը կուլակության դեմ և գյուղական մեր կազմակերպությունների հայտաբերված թերությունները։ Կենտկոմը 1928 թ. հունիսի 2-ի իր դիմումի մեջ տվեց հանուն ինքնաքննադատության մղվող պայքարի վերջնական ձևավորումը՝ կոչ անելով կուսակցության ու բանվոր դասակարգի բոլոր ուժերին՝ ինքնաքննադատություն ծավալելու «վերից վար ու վարից վեր», «նկատի չունենալով անձերին»։ Սահմանածրվելով տրոցկիստական «քննադատությունից», վորը բարիկադի այն կողմից է գալիս և նպատակ ունի վարկաբեկել ու թուլացնել խորհրդային իշխանությունը, կուսակցությունը հայտարարեց, վոր ինքնաքննադատության խնդիրն է՝ անողոք կերպով բաց անել մեր աշխատանքի թերությունները՝ մեր շինարարությունը **բարելավելու** համար, խորհրդային իշխանությունն **ամրապնդելու** համար։ Հայտնի յե, վոր կուսակցության կոչը բանվոր դասակարգի ու գյուղացիության մասսաների մեջ ամենակենդանի արձագանք առաջացրեց։

Կուսակցությունն, այնուհետև, լայն կամպանիա կազմակերպեց **բյուրոկրատիզմի** դեմ պայքարելու համար, լոզունգ տալով զտելու կուսակցական, արհմիութենական, կոոպերատիվ ու խորհրդային կազմակերպություններն անհարազատ ու բյուրոկրատացած տարրերից։ Այս կամպանիայի շարունակությունն է հանդիսանում Կենտկոմի ու ԿՎՀ-ի՝ 1930 թ. մարտի 16-ի վորոշումն այն մասին, վոր պետք է բանվորներին պետապարատի աշխատանքին առաջ քաշել և խորհրդային ապարատի վրա բանվորական մասսայական վերահսկողություն ունենալ (գործարանների շեֆությունը)։ Հայտնի յե, վոր այս կամպանիան առաջացրեց բանվորական մասսաների մեծագույն վերելքն ու ակտիվությունը։ Այս կամպանիայի հետևանք են կուսակցության հեղինակության հսկայական բարձրացումը աշխատավորական մասսաների մեջ, դեպի կուսակցությունը բանվոր դասակարգի տածած վստահության աճումը, նոր հարյուր հազարավոր բանվորների մտնելը կուսակցության մեջ, բանվորների բանաձևերը՝ ամբողջ ցեխերով ու գործարաններով կուսակցության մեջ մտնելու ցանկության մասին։ Վերջապես, այս կամպանիայի հետևանք է մեր կազմակերպությունների ազատվելը մի շարք քարացած ու բյուրոկրատական տարրերից, ՀԱՄԿԽ-ի ազատվելը օպորտունիստական հին ղեկավարությունից։

Կուսակցությունն, այնուհետև, կազմակերպել է սոցիալիստական լայն **մրցակցություն** ու մասսայական **ակտիվության** **վերելք** ֆաբրիկաներում ու գործարաններում։ Մրցակցության մասին կուսակցության XVI կոնֆերենցիայի կոչը ռելսերի վրա դրեց գործը։ Այն շարունակում են առաջ շարժել հարվածային բրիգադները։ Մրցակցության ու հարվածայնության գործը վճռողական հաջողություններով են պսակում լենինյան կոմյերիտմիությունն ու նրա ղեկավարած բանվոր յերիտասարդությունը։ Պետք է ընդունել, վոր այս գործում մեր հեղափոխական յերիտասարդությունը բացառիկ դեր խաղաց։ Այժմ արդեն կասկած չի կարող լինել, վոր մեր շինարարության ամենակարևոր փաստերից մեկը, յեթե վոչ ամենակարևոր փաստը, տվյալ մոմենտում ֆաբրիկաների ու գործարանների սոցիալիստական մրցակցությունն է, հարյուր հազարավոր բանվորների մրցականչը մրցակցության մեջ ձեռք բերված արդյունքների մասին, **հարվածայնության** լայն զարգացումը։ Միայն կույրերը չեն տեսնում, վոր մասսաների հոգեբանության և դեպի աշխատանքն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ տեղի յե ունեցել հսկայական բեկում, վորն արմատապես փոխել է մեր գործարանների ու ֆաբրիկաների դեմքը։ Դեռ շատ ժամանակ չե, վոր մեզանում ձայներ եյին հնչում մրցակցության ու հարվածայնության «հնարովիության» ու «սնանկության» մասին։ Այժմ այդ «իմաստուն» մարդկանց նույնիսկ ծաղրի չեն արժանացնում,—նրանց պարզապես համարում են իրենց դարն անցրած «իմաստուններ»։ Այժմ մրցակցության ու հարվածայնության գործը նվաճված ու ամրապնդված գործ է։ Փաստ է սա, վոր մեզանում սոցիալիստական մրցակցությամբ ընդգրկված են յերկու միլիոնից վոչ պակաս բանվորներ, իսկ հարվածային բրիգադներն են ներգրավված միլիոնից ավելի բանվորներ։

Մրցակցության մեջ ամենանշանավորն այն է, վոր նա աշ-

խատանքի մասին մարդկանց ունեցած հայացքների մեջ արմատական հեղաշրջում է առաջացնում, վորովհետև նա աշխատանքն ամոթաբեր ու ծանր լծից, վորպիսին նա համարվում էր առաջներում, դարձնում է պատվի գործ, փառքի գործ, արիության ու հերոսության գործ։ Կապիտալիստական յերկիրներում չկա և չի կարող լինել նման վոչ մի բան։ Այնտեղ, նրանցում, կապիտալիստների մոտ, ամենաբաղձալի գործը, վորը հասարակական հավանության է արժանանում,—ռենտա ունենալը, տոկոսներով ապրելը, աշխատանքից ազատ լինելն է, աշխատանքից, վորն արհամարհելի զբաղմունք է համարվում։ Մեզանում, ԽՍՀ Միությունում, ընդհակառակը, ամենաբաղձալի գործը, վորը հասարակական հավանության է արժանանում, դառնում է աշխատանքի հերոս լինելու հնարավորությունը, հարվածայնության հերոս լինելու հնարավորությունը, մի հերոս, վորը միլիոնավոր աշխատավորության մեջ շրջապատված է մեծարանքի լուսապսակով։

Մրցակցության մեջ պակաս նշանավոր չպետք է համարել այն փաստը, վոր նա սկսում է գյուղումն էլ տարածվել՝ արդեն համակելով մեր խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները։ Բոլորին հայտնի յեն աշխատանքային իսկական խանդավառության բազմաթիվ փաստերը խորհտնտեսականների ու կոլտնտեսականների միլիոնավոր մասսաներում։

Մրցակցության ու հարվածայնության այսպիսի հաջողությունների մասին ո՞վ կարող էր յերազել մի-յերկու տարի առաջ։

Կուսակցությունն, այնուհետև, մոբիլիզացիայի յե յենթարկել յերկրի ֆինանսական ռեսուրսները՝ խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների գործի ծավալման համար, լավագույն կազմակերպիչներ է տվել խորհտնտեսություններին, կոլտնտեսություններին ոգնելու համար տվել է 25 հազար առաջավոր բանվորներ, կոլտնտեսությունները ղեկավարելու գործի համար կոլտնտեսային գյուղացիներից առաջ է քաշել լավագույն մարդկանց, կազմակերպել է կոլտնտեսականների դասընթացների ցանցը՝ այսպիսով դնելով կոլտնտեսային շարժման համար տոկուն ու փորձված կադրեր պատրաստելու հիմքերը։

Վերջապես, կուսակցությունը մարտական ձևով վերակառուցեց իր սեփական շարքերը, վերազինեց մամուլը, կազմակերպեց պայքարը յերկու ճակատով, ջախջախեց տրոցկիզմի մնացորդները, գլխովին ջարդեց աջ ուկլոնիստներին, մեկուսացրեց

հաշտվողականներին, այսպիսով ապահովեց իր շարքերի միասնականությունը լենինյան գծի բազայի վրա,—միասնականություն, վորն անհրաժեշտ է հաջող հարձակման համար,—և կենսագործեց հարձակման ճիշտ ղեկավարումը՝ թափ տալով ու իրենց տեղը դնելով կոլտնտեսային շարժման բնագավառի ինչպես աստիճանականներին (постепеновцев) աջերի բանակից, այնպես էլ «ձախ» խոտորիչներին։

Սրանք են կուսակցության հիմնական միջոցառումները, վոր նա անց է կացրել ի կատարումն ամբողջ ճակատով հարձակման։

Ամենքին հայտնի յե, վոր մեր աշխատանքի բոլոր բնագավառներում այս հարձակումը հաջողությամբ պսակվեց։

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր մեզ հաջողվեց հաղթահարել մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման ժամանակաշրջանի մի ամբողջ շարք դժվարությունները։

Ահա վորտեղ է այն բանի պատճառը, վոր մենք կարողանում ենք հաջողությամբ հաղթահարել մեր շինարարության ամենամեծ դժվարությունը, գյուղացիության հիմնական մասսաների շրջադարձը սոցիալիզմի կողմն ապահովելու դժվարությունը։

Ոտարերկրացիները յերբեմն հարցնում են ԽՍՀՄ-ի ներքին դրության մասին։ Բայց միթե կարող է կասկած լինել այն մասին, վոր ԽՍՀՄ-ի ներքին դրությունը հաստատուն ու անսասան է։ Նայեցեք կապիտալիստական յերկիրներին, ճգնաժամի ու գործազրկության աճմանն այդ յերկիրներում, գործադուլներին ու լոկաուտներին, հակակառավարական ցույցերին,—ինչ համեմատություն կարող է լինել այս յերկիրների ներքին դրության և ԽՍՀՄ-ի ներքին դրության միջև։

Պետք է ընդունել, վոր խորհրդային իշխանությունն աշխարհում գոյություն ունեցող բոլոր իշխանությունների մեջ ամենից հաստատուն իշխանությունն է այժմ։ (Ծափահարություններ)։

8. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ, ԹԵ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ

Այսպիսով, մենք ունենք ԽՍՀՄ-ի ներքին դրության պատկերը։

Մենք, սրա հետ միասին, ունենք կապիտալիստական ամենագլխավոր յերկիրների ներքին դրության պատկերը։

Այժմ հարց է ծագում. իսկ ի՞նչ արդյունքներ կստանանք, յեթե միմյանց հետ զուգադրելու լինենք և համեմատենք այս յերկու պատկերը։

Այս հարցն ավելի ևս հետաքրքրական է այն պատճառով, վոր բոլոր յերկիրների բուրժուական գործիչները, ամեն աստիճանի ու կարգի բուրժուական մամուլը, սկսած վառ կապիտալիստականներից մինչև մենշևիկա-տրոցկիստականները, միաբերան բղավում են կապիտալիստական յերկիրների «ծաղկման» մասին, ԽՍՀՄ-ի «կործանման» մասին, ԽՍՀՄ-ի «ֆինանսական ու տնտեսական կրախի» մասին և այլն։

Այսպես ուրեմն, վորո՞նք են դրության վերլուծման արդյունքները մեզանում, ԽՍՀՄ-ում, և նրանցում, կապիտալիստական յերկիրներում։

Նշենք գլխավոր, հանրածանոթ փաստերը։

Նրանցում, կապիտալիստների մոտ, տնտեսական ճգնաժամ ու արտադրության անկում ինչպես արդյունաբերության բնագավառում, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, տնտեսական վերելք ու արտադրության աճում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Նրանցում, կապիտալիստների մոտ, աշխատավորության նյութական դրության վատթարացում, բանվորների աշխատավարձի իջեցում ու գործազրկության աճում։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, աշխատավորության նյութական դրության վերելք, բանվորների աշխատավարձի բարձրացում ու գործազրկության կրճատում։

Նրանցում, կապիտալիստների մոտ, գործադուլների ու ցույցերի աճում, վորը տանում է դեպի միլիոնավոր աշխատօրերի կորուստ։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, գործադուլների բացակայություն և բանվորների ու գյուղացիների աշխատանքային վերելքի աճում, վորը մեր հասարակակարգին միլիոնավոր լրացուցիչ աշխատօրեր է տալիս։

Նրանցում, կապիտալիստների մոտ, ներքին դրության սրում ու բանվոր դասակարգի հեղափոխական շարժման աճում՝ ընդդեմ կապիտալիստական ռեժիմի։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, ներքին դրության ամրապնդում ու

բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների համախմբում խորհրդային իշխանության շուրջը։

Նրանցում, կապիտալիստների մոտ, ազգային հարցի սրում և ազգային-ազատագրական շարժման աճում Հնդկաստանում, Հնդկա-Չինում, Ինդոնեզիայում, Ֆիլիպպյան կղզիներում և այլն, վոր փոխվում է ազգային պատերազմի։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, ազգային յեղբայրության հիմքերի ամրապնդում, ապահովված ազգային խաղաղություն և ԽՍՀՄ-ի ժողովուրդների միլիոնավոր մասսաների համախմբում խորհրդային իշխանության շուրջը։

Նրանցում, կապիտալիստների մոտ, գլխակորույսություն և դրության հետագա վատթարացման հեռանկար։

Մեզանում, ԽՍՀՄ-ում, հավատ դեպի մեր ուժերը և դրության հետագա բարելավման հեռանկար։

Շաղակրատում են ԽՍՀՄ-ի «կործանման», կապիտալիստական յերկիրների «ծաղկման» և այլնի մասին։ Արդյոք ավելի ճիշտ չի՞ լինի խոսել նրանց անխուսափելի կործանման մասին, ովքեր այնքան «անսպասելիորեն» ընկան տնտեսական ճգնաժամի ջրապտույտը և դեռևս չեն կարողանում դուրս գալ անկման ճահճուտից։

Վորո՞նք են այնքան լուրջ փլուզման պատճառները նրանցում, կապիտալիստների մոտ, և լուրջ հաջողությունների պատճառները մեզանում, ԽՍՀՄ-ում։

Ասում են, թե ժողովրդական տնտեսության կացությունը շատ բանով կախված է կապիտալների առատությունից կամ պակասությունից։ Այս, իհարկե, ճիշտ է։ Ճգնաժամը կապիտալիստական յերկիրներում և վերելքը ԽՍՀՄ-ում արդյոք չե՞ն բացատրվում կապիտալների առատությամբ մեզանում ու կապիտալների պակասությամբ նրանց մոտ։ Վո՛չ, իհարկե, վոչ։ Ամենքին հայտնի յե, վոր ԽՍՀՄ-ում շատ ավելի քիչ կապիտալներ կան, քան կապիտալիստական յերկիրներում։ Յեթե տվյալ դեպքում հարցը լուծվեր կուտակման վիճակով, մենք ճգնաժամ կունենայինք, իսկ կապիտալիստական յերկիրները՝ վերելք։

Ասում են, թե տնտեսության վիճակը շատ բանով կախված է տնտեսական կադրերի տեխնիկական ու կազմակերպական կոփվածությունից։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Կապիտալիստական յերկիրների ճգնաժամը և ԽՍՀՄ-ի վերելքը չե՞ն բացատրվում արդյոք տեխնիկական կադրերի պակասությամբ նրանց մոտ և

դրանց առատությամբ մեզ մոտ։ Ո՛չ, իհարկե, ո՛չ։ Ամեն մեկին հայտնի է, որ տեխնիկապես փորձված կադրեր կապիտալիստական յերկրներում ավելի շատ կան, քան մեզանում, ԽՍՀՄ-ում։ Մենք յերբեք չենք թաքցրել և մտադիր չենք թաքցնելու, որ տեխնիկայի բնագավառում մենք հանդիսանում ենք գերմանացիների, անգլիացիների, ֆրանսիացիների, իտալացիների և, ամենից առաջ ու գլխավորապես, ամերիկացիների աշակերտները։ Ո՛չ, հարցն այստեղ տեխնիկական կադրերի առատությամբ կամ պակասությամբ չի լուծվում, թեև կադրերի պրոբլեմը լուրջ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության զարգացման համար։

Գուցե հարցի լուծումն այն է, որ կուլտուրական դրության մակարդակը մեզանում ավելի բարձր է, քան կապիտալիստական յերկրներում։ Դարձյալ ո՛չ։ Ամեն մեկին հայտնի է, որ մասսաների ընդհանուր կուլտուրական մակարդակը մեզանում ավելի ցածր է, քան ՀԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում և այլն։ Ո՛չ, բանը մասսաների կուլտուրականությունը չէ, թեև նա ժողովրդական տնտեսության զարգացման համար հսկայական նշանակություն ունի։

Գուցե այստեղ պատճառը կապիտալիստական յերկրների ղեկավարների անձնական հատկություններն են։ Դարձյալ ո՛չ։ Ճգնաժամերը ծնունդ են առել կապիտալիզմի տիրապետության սկսվելու հետ միասին։ Ահա արդեն հարյուր տարուց ավելի է, ինչ տեղի յեն ունենում կապիտալիզմի պարբերական տնտեսական ճգնաժամեր՝ կրկնվելով յուրաքանչյուր 12 — 10 — 8 ու ավելի պակաս տարին մեկ անգամ։ Կապիտալիզմի բոլոր կուսակցությունները, կապիտալիզմի փոքրիշատե ականավոր բոլոր գործիչները «ամենահանճարեղներից» մինչև ամենամիջակները, փորձել են իրենց ուժերը ճգնաժամը «կանխելու» կամ «ոչնչացնելու» գործում։ Բայց նրանք բոլորն էլ պարտություն են կրել։ Ել այստեղ ի՞նչ զարմանալու բան կա, որ Հուվերն իր խմբով նույնպես պարտություն կրեց։ Ո՛չ, բանն այստեղ կապիտալիզմի ղեկավարները կամ կուսակցությունները չեն, թեև կապիտալիզմի թե՛ ղեկավարները և թե՛ կուսակցություններն այստեղ փոքր նշանակություն չունեն։

Այն ժամանակ էլ ինչո՞ւմն է բանը։

Ի՞նչն է այն բանի պատճառը, որ ԽՍՀՄ-ն, չնայած նրա կուլտուրական հետամնացությանը, չնայած կապիտալների պակասությանը, չնայած տեխնիկորեն կրթված տնտեսական կադրերի պակասությանը՝ գտնվում է տնտեսական աճող վերելքի վիճակում և տնտեսական շինարարության ճակատում նվաճողական հաջողություններ ունի, իսկ առաջավոր կապիտալիստական յերկրները, չնայած կապիտալների առատությանը, տեխնիկական կադրերի առատությանը և կուլտուրականության ավելի բարձր մակարդակին՝ գտնվում են աճող տնտեսական ճգնաժամի վիճակում և տնտեսական զարգացման բնագավառում պարտություն պարտության հետևից են կրում։

Պատճառը տնտեսության եկոնոմիկական սիստեմի տարբերությունն է մեզանում և կապիտալիստների մոտ։

Պատճառը տնտեսության կապիտալիստական սիստեմի սնանկությունն է։

Պատճառը տնտեսության խորհրդային սիստեմի առավելություններն են կապիտալիստական սիստեմի հանդեպ։

Ի՞նչ բան է տնտեսության խորհրդային սիստեմը։

Տնտեսության խորհրդային սիստեմը նշանակում է, որ

1) կապիտալիստների դասակարգի իշխանությունը տապալված է և փոխարինված է բանվոր դասակարգի իշխանությամբ.

2) արտադրության գործիքներն ու միջոցները, հողը, ֆաբրիկաները, գործարանները և այլն, վերցված են կապիտալիստներից և սեփականություն են տրված բանվոր դասակարգին ու գյուղացիության աշխատավորական մասսաներին.

3) արտադրության զարգացումը յենթարկված է ո՛չ թե մրցության ու կապիտալիստական շահույթ ապահովելու սկզբունքին, այլ պլանային ղեկավարման և աշխատավորության նյութական ու կուլտուրական մակարդակը սիստեմատիկորեն բարձրացնելու սկզբունքին.

4) ժողովրդական յեկամտի բաշխումը կատարվում է ո՛չ թե հօգուտ շահագործող դասակարգերի և նրանց բազմաթիվ մակաբույծ սպասավորների հարստացման, այլ հօգուտ բանվորների ու գյուղացիների նյութական դրության սիստեմատիկ բարձրացման և սոցիալիստական արտադրության ընդլայնման՝ քաղաքում ու գյուղում.

5) աշխատավորության նյութական դրության սիստեմատիկ բարելավումը և նրանց պահանջմունքների (գնողունակության) անընդհատ աճումը, լինելով արտադրության ընդլայնման մշտապես աճող աղբյուրը, ապահովում են բանվոր դասակարգը գեր-

արտադրության ճգնաժամերից, գործազրկության աճումից և այլն.

6) երկրի տերը բանվոր դասակարգն է, որն աշխատում է ոչ թե կապիտալիստների համար, այլ իր սեփական դասակարգի համար։

Ի՞նչ բան է տնտեսության կապիտալիստական սիստեմը։

Տնտեսության կապիտալիստական սիստեմը նշանակում է, որ

1) իշխանությունը երկրում կապիտալիստներին է պատկանում.

2) արտադրության գործիքներն ու միջոցները կենտրոնացված են շահագործողների ձեռքում.

3) արտադրությունը յենթարկված է ոչ թե աշխատավոր մասսաների նյութական դրությունը բարելավելու սկզբունքին, այլ կապիտալիստական բարձր շահույթ ապահովելու սկզբունքին.

4) ժողովրդական յեկամտի բաշխումը կատարվում է ոչ թե հօգուտ աշխատավորության նյութական դրության բարելավման, այլ հօգուտ շահագործողների մաքսիմում շահույթների ապահովման.

5) կապիտալիստական ռացիոնալացումն ու արտադրության արագ տեմպը, որոնց նպատակն է կապիտալիստների բարձր շահույթների ապահովումը, իրեն իրենց արգելքի դեմ են առնում աշխատավորների միլիոնավոր մասսաների թշվառ դրությանն ու նյութական ապահովվածության իջեցմանը, աշխատավորներ, որոնք միշտ չեն, որ հնարավորություն ունեն բավարարելու իրենց պահանջմունքները՝ նույնիսկ ծայրահեղ մինիմումի սահմաններում, ինչը որ անհրաժեշտորեն հող է ստեղծում գերարտադրության անխուսափելի ճգնաժամերի համար, գործազրկության աճման համար և այլն.

6) բանվոր դասակարգը հանդիսանում է շահագործվող դասակարգ, որն աշխատում է ոչ թե իրեն համար, այլ օտար դասակարգի համար, շահագործողների դասակարգի համար։

Սրանք են տնտեսության [illegible] սիստեմի առավելությունները կապիտալիստական սիստեմի հանդեպ։

Սրանք են տնտեսության սոցիալիստական կազմակերպման առավելությունները կապիտալիստական կազմակերպման հանդեպ։

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր մեզանում,

ԽՍՀՄ-ում, տնտեսական աճող վերելք է, իսկ նրանցում, կապիտալիստների մոտ, տնտեսական աճող ճգնաժամ։

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր մեզանում, ԽՍՀՄ-ում, մասսաների սպառման (գնողունակության) աճումը շարունակ անցնում է արտադրության աճումից՝ մղելով նրան առաջ, իսկ նրանցում, կապիտալիստների մոտ, ընդհակառակը, մասսաների սպառման (գնողունակության) աճումը յերբեք չի հասնում արտադրության աճմանը և շարունակ նրանից հետ է մնում՝ արտադրությունը հենց մի գլուխ ճգնաժամերի դատապարտելով։

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր նրանցում, կապիտալիստների մոտ, միանգամայն նորմալ է համարվում ճգնաժամերի պահին ապրանքների «հավելուրդը» վոչնչացնելը և գյուղատնտեսական արդյունքների «ավելցուկն» այրելը՝ բարձր գները պահելու և բարձր շահույթներն ապահովելու համար, մինչդեռ մեզանում, ԽՍՀՄ-ում, այդպիսի հանցագործությունների պատճառ հանդիսացողներին գժանոց կուղարկեյին։ [illegible]

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր նրանցում, կապիտալիստների մոտ, բանվորները գործադուլ ու ցույց են անում հեղափոխական պայքար կազմակերպելով ընդդեմ գոյություն ունեցող կապիտալիստական իշխանության, մինչդեռ մեզանում, ԽՍՀՄ-ում, մենք ունենք միլիոնավոր բանվորների ու գյուղացիների աշխատանքային մեծ մրցակցության պատկերը, բանվորների ու գյուղացիների, վորոնք պատրաստ են իրենց կրծքով պաշտպանելու խորհրդային իշխանությունը։

Ահա թե վորտեղ է ԽՍՀՄ-ի ներքին դրության կայուն ու հաստատուն լինելու և կապիտալիստական յերկիրների ներքին դրության անկայուն ու խախուտ լինելու պատճառը։

Պետք է ընդունել, վոր տնտեսության այն սիստեմը, վորը չգիտե, թե ինչ պետք է անի իր արտադրության «ավելցուկը», և վորն ստիպված է այն այրել մի այնպիսի ժամանակ, յերբ մասսաների մեջ թագավորում են կարիքն ու գործազրկությունը, սովն ու ավերվածությունը, — տնտեսության այդպիսի սիստեմն ինքն է իր մահվան դատավճիռը կարդում։

Վերջին տարիները տնտեսության յերկու հակադիր սիստեմները, — խորհրդային և կապիտալիստական սիստեմները, — գործնականում փորձարկելու, քննության յենթարկելու ժամանակաշրջան

են յեղել: Այս տարիների ընթացքում ավելի քան բավականաչափ մարգարեյություններ են յեղել խորհրդային սիստեմի «կործանման» ու «կրախի» մասին: Խոսքեր ու գովերգություններ կապիտալիզմի «ծաղկման» մասին — էլ ավելի: Յեվ ինչ: Այս տարիները մի ավելորդ անգամ ցույց տվին, որ տնտեսության կապիտալիստական սիստեմը **սնանկ** սիստեմ է, որ տնտեսության խորհրդային սիստեմն այնպիսի **առավելություններով** է օժտված, վորոնց մասին չի համարձակվում յերազել բուրժուական վոչ մի պետություն, թեկուզ նա լինի ամենից «դեմոկրատականը», «համաժողովրդականը» և այլն:

1921 թ. մայիսին ՀամԿ(բ)Կ կոնֆերենցիայում արտասանած իր ճառում Լենինն ասում էր.

«Այժմ մեր գլխավոր ներգործությունը միջազգային հեղափոխության վրա մենք անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ: Բոլորը Ռուսաստանյան Խորհրդային հանրապետությանն են նայում, առանց վորևէ բացառության և առանց վորևէ չափազանցության՝ աշխարհի բոլոր յերկրների բոլոր աշխատավորները: Այս բանին մենք հասել ենք: Կապիտալիստները չեն կարող վոչ մի բան լռության տալ, թաքցնել, այդ պատճառով նրանք ամենից ավելի բռնում են մեր տնտեսական սխալներն ու մեր թուլությունը: Պայքարն այս ասպարեզն է փոխադրված համաշխարհային մասշտաբով: Յեթե մենք այդ խնդիրը լուծենք, այն ժամանակ մենք հաստատապես ու վերջնականորեն շահած կլինենք միջազգային մասշտաբով» (հ. XXVI, եջ 410 — 411):

Պետք է ընդունել, վոր Լենինի դրած խնդիրը մեր կուսակցությունը կատարում է հաջողությամբ:

9. ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա) ԸՆԴՀԱՆՈՒՐՆԵՐԸ

1) **Ամենից առաջ՝ արդյունաբերությունը ԽՍՀՄ-ում ինչ կերպով տեղադրելու պրոբլեմը:** Մենք ինչպես էլ վոր զարգացնելու լինենք ժողովրդական տնտեսությունը, չի կարելի յոլա գնալ առանց այն հարցի, թե ինչպես պետք է ճիշտ կերպով տեղադրել արդյունաբերությունը, վորպես ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղ: Այժմ բանն այնպես է, վոր մեր արդյունաբերությունը, ինչպես և մեր ժողովրդական տնտեսությունը, հիմնականում հենվում է Ուկրաինայի ածխա-մետաղագործական բազայի վրա: Հասկանալի յե, վոր առանց այսպիսի բազայի աներևակայելի յե յերկրի ինդուստրացումը: Յեվ ահա մեզանում մի այսպիսի բազա յե հանդիսանում ուկրաինական վառելիքա-մետաղագործական բազան: Բայց միմիայն այդ բազան արդյոք կարող է հետագայում բավարարել թե հարավին, թե ԽՍՀՄ-ի կենտրոնական մասին, թե հյուսիսին, թե հյուսիս-արևելքին, թե Հեռավոր Արևելքին, թե Թուրքեստանին: Բոլոր տվյալները մեզ այն են ասում, վոր չի կարող: Մեր ժողովրդական տնտեսության զարգացման մեջ նորը, ի միջի այլոց, այն է, վոր այդ բազան արդեն անբավարար է դարձել մեզ համար: Նորն այն է, վոր հետագայում էլ ամեն կերպ զարգացնելով այդ բազան՝ միաժամանակ սկսենք անհապաղ ստեղծել յերկրորդ ածխամետաղագործական բազան: Այդ բազան պետք է լինի Ուրալո-Կուզնեցկի կոմբինատը, Կուզնեցկի կոքսացող ածխի միացումը ուրալյան հանքանյութի հետ: (**Ծափահարություններ**): Ավտո-գործարանի կառուցումը Նիժնիում, տրակտորային գործարանինը՝ Չելյաբինսկում, մեքենաշինական գործարանինը՝ Սվերդլովսկում, կոմբայնի գործարաններինը՝ Սարատովում ու Նովոսիբիրսկում. անգույն մետաղագործության առկայությունը Սիբիրում ու Կազակստանում, մետաղագործություն, վորը պահանջում է ստեղծել վերանորոգման արհեստանոցների ցանց և մի շարք հիմնական մետաղագործարաններ արևելքում. վերջապես, Նովոսիբիրսկում ու Թուրքեստանում տեքստիլ գործարաններ կառուցելու վճիռը, — այս ամենը հրամայաբար պահանջում է անհապաղ ձեռնամուխ լինել յերկրորդ ածխա-մետաղագործական բազայի կազմակերպման գործին Ուրալում:

Դուք գիտեք, վոր մեր կուսակցության Կենտկոմն իր բանաձևում Ուրալմետի մասին հենց այս վոգով էլ արտահայտվել է:

2) **Այնուհետև գյուղատնտեսության հիմնական ճյուղերը ԽՍՀ Միությունում ինչ կերպով տեղադրելու պրոբլեմը, մեր մարզերն ըստ գյուղատնտեսական մշակույթների ու ճյուղերի մասնագիտացնելու պրոբլեմը:** Հասկանալի յե, վոր մանր գյուղացիական տնտեսության պայմաններում մասնագիտացման լուրջ կենսագործում անհնարին է: Անհնարին է, վորովհետև մանր տնտեսությունը, վորպես անհրաժեշտ ռեզերվներից զուրկ անկայուն տնտեսություն, հարկադրված է իրենում բուծել բոլոր ու ամեն տեսակի մշակույթներ, վորպեսզի մշակույթներից վորևէ մեկի մեջ անհաջողության

ունենալու դեպքում կարելի լինի մյուսներով ծայրը ծայրին հասցնել: Նույնպես հասկանալի յե, վոր առանց պետության ձեռքում հացահատիկի վորոշ ռեզերվներ ապահովելու անհնարին ե կազմակերպել մասնագիտացման գործը: Այժմ, յերբ մենք անցել ենք խոշոր տնտեսության և պետության ձեռքում ապահովել հացահատիկի ռեզերվներ, մենք կարող ենք և պետք ե մեր առջև խնդիր դնենք ճշտորեն կազմակերպելու մասնագիտացման գործն ըստ մշակույթների ու ճյուղերի: Ընդսմին՝ այս գործի յեղակետը հատիկային պրոբլեմի վերջնական լուծումն ե: Յես ասում եմ «յեղակետը», վորովհետև առանց հատիկային պրոբլեմը լուծելու, առանց հատիկային պահեստների հարուստ ցանց կազմակերպելու անասնաբուծական, բամբակագործական, ճակնդեղագործական, վուշագործական, ծխախոտագործական շրջաններում՝ անհնարին ե առաջ շարժել անասնաբուծությունն ու տեխնիկական մշակույթները, անհնարին ե ապահովել մեր մարզերի մասնագիտացման կազմակերպումն ըստ մշակույթների ու ճյուղերի:

Խնդիրն այն ե, վոր ոգտագործենք ստեղծված հնարավորությունները և առաջ շարժենք այս գործը:

3) Ապա գալիս ե կադրերի պրոբլեմը՝ ինչպես արդյունաբերության բնագավառում, այնպես ել գյուղատնտեսության բնագավառում: Բոլորին հայտնի յե մեր տնտեսական կադրերի, մեր մասնագետների, տեխնիկների ու տնտեսական աշխատողների տեխնիկական թույլ կոփվածությունը: Բանը բարդանում ե նրանով, վոր մասնագետների մի մասը, վորը կապված ե նախկին տերերի հետ և խթանվում ե արտասահմանից, վնասարարական գործի գլուխ կանգնած դուրս յեկավ: Բանն ավելի յե բարդանում այն հանգամանքով, վոր մեր մի ամբողջ շարք տնտեսավար-կոմունիստներն ընդսմին յերևան չբերին հեղափոխական զգաստություն և հաճախ գտնվել են վնասարար տարրերի հոգևոր գերության մեջ: Այնինչ՝ մեր առջև ծառացած են ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման վիթխարի խնդիրները, վորոնք պահանջում են նոր տեխնիկային տիրապետելու ընդունակ մեծ քանակությամբ նոր կադրեր: Այս կապակցությամբ կադրերի պրոբլեմը մեզանում դարձել ե հիրավի հրատապ մի պրոբլեմ:

Այս պրոբլեմի լուծումը մեզանում ընթանում ե հետևյալ միջոցառումների գծով. 1) վճռական պայքար վնասարարների դեմ. 2) առավելագույն հոգատարություն ու նրբազգացություն մասնագետների ու տեխնիկների հսկայական մեծամասնության

վերաբերմամբ, վորոնք սահմանազատվել են վնասարարներից (յես նկատի ունեմ վոչ թե Ուստրյալովի տիպի ճոռոմախոսներին ու կոտրատվողներին, այլ իսկապես գիտական այն աշխատողներին, վորոնք, առանց չար կամակորության, միատեղ աշխատում են բանվոր դասակարգի հետ). 3) արտասահմանից տեխնիկական ոգնություն ստանալու կազմակերպումը. 4) սովորելու և առհասարակ տեխնիկայի մեջ փորձառություն ձեռք բերելու համար մեր տնտեսավարներին արտասահման ուղարկելը. 5) տեխնիկական ուսումնական հիմնարկները համապատասխան տնտեսական կազմակերպություններին հանձնելը՝ բանվոր դասակարգի մարդկանցից ամենաարագ կերպով բավականաչափ քանակությամբ տեխնիկներ ու մասնագետներ պատրաստելու համար:

Խնդիրն այն ե, վոր աշխատանք ծավալենք այս միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ:

4) Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու պրոբլեմը: Բյուրոկրատիզմի վտանգն, ամենից առաջ, այն ե, վոր նա ծածկոցի տակ ե պահում մեր հասարակակարգի ընդերքում թաղնված հսկայական ռեզերվները, թույլ չտալով ոգտագործել նրանց, աշխատում ե մասսաների ստեղծագործական ձեռներեցությունն ի դերև հանել, կաշկանդելով նրան գրասենյակայնությամբ (канцелярщиной) և գործը տանում ե այնպիսի ուղղությամբ, վոր կուսակցության յուրաքանչյուր նոր ձեռնարկումը դարձնի մանր և անպետք կծծիություն: Յերկրորդ, բյուրոկրատիզմի վտանգն այն ե, վոր նա չի հանդուրժում կատարման ստուգում և փորձում ե ղեկավար կազմակերպությունների հիմնական ցուցումները վերածել կենդանի կյանքից կտրված դատարկ մի թղթի: Վտանգ են ներկայացնում վոչ միայն և վոչ այնքան մեր հիմնարկներում նստած մնացած հին բյուրոկրատները, այլև — մանավանդ — նոր բյուրոկրատները, խորհրդային բյուրոկրատները, վորոնց մեջ «կոմունիստ» բյուրոկրատներն ամենևին ել վերջին դերը չեն խաղում: Յես այն «կոմունիստներին» նկատի ունեմ, վորոնք գրասենյակային կարգադրություններով ու «դեկրետներով», վորոնց զորությանը նրանք հավատում են՝ ինչպես ֆետիշի, աշխատում են նենգափոխել բանվոր դասակարգի ու գյուղացիության միլիոնավոր մասսաների ստեղծագործական ձեռներեցությունն ու ինքնագործունեությունը:

Խնդիրն այն ե, վոր ջախջախենք բյուրոկրատիզմը մեր հիմնարկներում ու կազմակերպություններում, վերացնենք բյուրո-

կրատական «բարքերն» ու սովորույթները» և մաքրենք ճանապարհը մեր հասարակակարգի ռեզերվներն ոգտագործելու համար, մասսաների ստեղծագործական ձեռներեցությունն ու ինքնագործունեությունը ծավալելու համար։

Հեշտ խնդիր չե այս։ Այն «մի ակնթարթում» չի լուծվի։ Բայց հարկավոր ե այն լուծել՝ ինչպես ուզում ե լինի, յեթե մենք կամենում ենք իսկապես սոցիալիզմի հիմունքներով փոխակերպել մեր յերկիրը։

Բյուրոկրատիզմի դեմ մղած պայքարում կուսակցության աշխատանքը՝ չորս գծով ե ընթանում. ինքնաքննադատության ծավալման գծով, կատարման ստուգման գործը կազմակերպելու գծով, ապարատի զտման գծով և, վերջապես, բանվոր դասակարգի մարդկանցից ներքևից աշխատողներ ապարատի մեջ ցածից առաջ քաշելու գծով։

Խնդիրն այն ե, վոր մեր բովանդակ ուժերը գործադրենք՝ բոլոր այս միջոցառումները կատարելու համար։

5) Աշխատանքի արտադրողականության աճման պրոբլեմը։ Առանց աշխատանքի արտադրողականության սիստեմատիկ աճման ինչպես արդյունաբերության բնագավառում, այնպես և գյուղատնտեսության բնագավառում՝ մենք չենք կարող լուծել վերակառուցման խնդիրները, չենք կարող վոչ միայն հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր յերկրներից, այլև նույնիսկ չենք կարող պաշտպանել մեր ինքնուրույն գոյությունը։ Այս պատճառով՝ աշխատանքի արտադրողականության աճման պրոբլեմը մեզ համար առաջնակարգ նշանակություն ունի։

Կուսակցության՝ այս պրոբլեմի լուծման վերաբերյալ միջոցառումները յերեք գծով են ընթանում. աշխատավորության նյութական դրության սիստեմատիկ բարելավման գծով, արդյունաբերության ու գյուղատնտեսության ձեռնարկություններում աշխատանքի ընկերական կարգապահությունն արմատավորելու գծով, վերջապես, սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության կազմակերպման գծով։ Այս ամենը՝ բարելավված տեխնիկայի ու աշխատանքի ռացիոնալ կազմակերպման բազայի վրա։

Խնդիրն այն ե, վոր էլ ավելի ծավալենք այս միջոցառումների իրականացման մասսայական կամպանիան։

6) Մատակարարման պրոբլեմը։ Սրան վերաբերում են քաղաքի ու գյուղի աշխատավորությանն անհրաժեշտ արդյունքներ

բավականաչափ մատակարարելու հարցը, կոոպերատիվ ապարատը բանվորների ու գյուղացիների կարիքներին հարմարեցնելու հարցը, բանվորների ռեալ աշխատավարձը սիստեմատիկորեն ավելացնելու հարցը, արդյունաբերական ապրանքների ու գյուղատնտեսական մթերքների գների իջեցման հարցը։ Սպառողական կոոպերացիայի թերությունների մասին յես արդեն խոսեցի։ Անհրաժեշտ ե վերացնել այդ թերությունները և հասնել գների իջեցման քաղաքականության կենսագործմանը։ Ինչ վերաբերում ե ապրանքների պակասին (ապրանքի սով), ապա մենք ներկայումս հնարավորություն ունենք թեթև արդյունաբերության հումքային բազա ծավալելու և մասսայական սպառման քաղաքային ապրանքների արտադրությունն առաջ շարժելու։ Հացի մատակարարումը կարելի յե արդեն ապահոված համարել։ Ավելի դժվար ե միս, կաթնամթերք ու բանջարեղեն մատակարարելու բանը։ Ցավոք սրտի՝ այս դժվարությունը մի քանի ամսում չի կարող վերացվել։ Այս դժվարությունը հաղթահարելու համար գոնե մի տարի յե անհրաժեշտ։ Մի տարի հետո մենք հնարավորություն կունենանք, շնորհիվ, ամենից առաջ, այս բանի համար կազմակերպված խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների՝ լիովին ապահովելու միս, կաթնամթերքներ ու բանջարեղեն մատակարարելու գործը։ Իսկ ինչ ե նշանակում այս արդյունքները մատակարարելու գործին տիրապետել, յերբ մենք արդեն մեր ձեռքում ունենք հացի ռեզերվներ, ճոթեղեն, բանվորների համար կատարվող բնակարանային ուժեղացրած շինարարություն ու կոմունալ էժան սպասարկումներ։ Սա նշանակում ե տիրապետել հիմնական այն բոլոր գործոններին, վորոնք վորոշում են բանվորի բյուջեն և նրա ռեալ աշխատավարձը։ Սա նշանակում ե հաստատապես ու վերջնականապես ապահովել բանվորների ռեալ աշխատավարձի արագ աճման գործը։

Խնդիրն այն ե, վոր այս ուղղությամբ ծավալենք մեր բոլոր կազմակերպությունների աշխատանքը։

7) Վարկի ու փողային շրջանառության պրոբլեմը։ Վարկային գործի ռացիոնալ կազմակերպումը և փողային ռեզերվներով ճիշտ մանևրելը լուրջ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության զարգացման համար։ Կուսակցության միջոցառումներն այս պրոբլեմի լուծման ուղղությամբ յերկու գծով են ընթանում. կարճաժամկետ վարկի ամբողջ գործը Պետբանկում կենտրոնացնելու գծով և հանրայնացված սեկտորում անկանխիկ հաշ-

վարկ կազմակերպելու գծով։ Սրանով իսկ, նախ, Պետբանկը դառնում է արտադրության հաշվառման ու արդյունքների բաշխման հաշվառման համապետական ապարատ, յերկրորդ՝ շրջանառությունից ազատվում են փողի ամբողջ մասսաներ։ Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր այս միջոցառումները կհանգեն (նրանք արդեն հանգում են) վարկային ամբողջ գործի կարգավորմանն ու մեր չերվոնեցի ամրացմանը։

8) **Ռեզերվների** պրոբլեմը։ Արդեն միքանի անգամ ասվել է և կարիք չկա կրկնելու, վոր պետությունն ընդհանրապես, մեր պետությունն առանձնապես առանց ռեզերվների չի կարող յոլա գնալ։ Մենք ունենք հացի, ապրանքների, վալյուտայի վորոշ ռեզերվներ։ Մեր ընկերները հնարավորություն են ունեցել այս ժամանակում զգալու այս ռեզերվների բարերար ազդեցությունը։ Բայց «վորոշ» ռեզերվները մեզ բավական չեն։ Մեզ հարկավոր են ավելի ստվար ռեզերվներ բոլոր գծերով։

Այստեղից էլ խնդիրը՝ ռեզերվներ կուտակել։

բ) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) Գլխավոր պրոբլեմը՝ **սև մետալուրգիայի** արագացրած զարգացումն է։ Նկատի ունեցեք, վոր մենք չուգունի արտադրության մինչպատերազմյան նորմային հասանք և այն գերազանցում ենք միայն ընթացիկ 1929/30 թվականին։ Սա մի մեծ սպառնալիք է մեր ամբողջ ժողովրդական տնտեսության համար։ Վորպեսզի այս սպառնալիքը վերացնենք, պետք է կարգավորենք սև մետալուրգիայի արագացված զարգացումը։ Հնգամյակի վերջերքին մեզ հարկավոր է վոչ թե 10 միլիոն տոնն չուգուն, ինչպես այդ պահանջում է հնգամյակը, այլ 17 միլիոն տոնն։ Յեթե մեր յերկրի ինդուստրացման գործը կամենում ենք ինչպես հարկն է ծավալել, մենք պետք է՝ ինչպես էլ վոր լինի՝ այս խնդիրն իրագործենք։

Բոլշևիկները պետք է ցույց տան, վոր իրենք կարող են գլուխ բերել այս գործը։

Այս, իհարկե, չի նշանակում, թե մենք պետք է յերեսի վրա թողնենք **թեթև** ինդուստրիան։ Վոչ, չի նշանակում։ Մինչև այժմ մենք տնտեսում էինք ամեն ինչում, այս թվում նաև թեթև ինդուստրիայի մեջ, վորպեսզի վերականգնենք ծանր ինդուստրիան։ Բայց մենք արդեն վերականգնել ենք ծանր ին-

դուստրիան։ Միայն պետք է շարունակել ծավալել այն։ Մենք այժմ կարող ենք մեր յերեսը դարձնել դեպի թեթև ինդուստրիան և այն առաջ շարժել արագացրած տեմպով։ Նորը մեր արդյունաբերության զարգացման մեջ, ի միջի այլոց, այն է, վոր մենք այժմ հնարավորություն ունենք արագացրած տեմպով զարգացնելու թե ծանր, թե թեթև ինդուստրիան։ Բամբակի, վուշի ու շաքարի ճակնդեղի ցանքերի պլանների գերակատարումն այս տարի, քենդիրի ու արհեստական մետաքսի պրոբլեմի հաջող լուծումը,—այս ամենն այն մասին է խոսում, վոր մենք հնարավորություն ունենք իսկապես առաջ շարժելու թեթև արդյունաբերությունը։

2) **Ռացիոնալացման, ինքնարժեքի իջեցման** և արտադրանքի **վորակի լավացման** պրոբլեմը։ Այլևս չի կարելի հանդուրժել ռացիոնալացման բնագավառում յեղած պատռվածքները, ինքնարժեքի իջեցման պլանը չկատարելը և մեր մի շարք ձեռնարկությունների արտադրանքի այլանդակ վորակը։ Այս պատռվածքներն ու թերությունները ճնշում են մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը և թույլ չեն տալիս, վոր նա առաջ շարժվի։ Ժամանակն է, վաղուց ժամանակն է, վոր վերջ տանք այս խայտառակ բծին։

Բոլշևիկները պետք է ցույց տան, վոր իրենք կարող են գլուխ բերել այս գործը։

3) **Միանձնյա ղեկավարության** պրոբլեմը։ Անհանդուրժելի յեն դառնում նույնպես միանձնյա ղեկավարության կենսագործման բնագավառում յեղած խախտումները ձեռնարկություններում։ Բանվորները հենց մի գլուխ գանգատվում են՝ «գործարանում տեր չկա», «աշխատանքի մեջ կարգ ու կանոն չկա»։ Այլևս չի կարելի հանդուրժել, վոր մեր ձեռնարկություններն արտադրական օրգանիզմներից վերածվեն պառլամենտների։ Պետք է, վերջապես, մեր կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները հասկանան, վոր առանց միանձնյա ղեկավարություն ապահովելու և աշխատանքի ընթացքի համար խիստ պատասխանատվություն սահմանելու՝ մենք չենք կարող լուծել արդյունաբերության վերակառուցման խնդիրները։

գ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) **Անասնապահության** և **տեխնիկական մշակույթների** պրոբլեմը։ Այժմ, յերբ արդեն հիմնականում լուծել ենք հատիկային

պրոբլեմը, մենք կարող ենք ձեռնամուխ լինել միաժամանակ լուծելու թե անասնաբուծության պրոբլեմը, որը տվյալ մոմենտում հանդիսանում է հրատապ պրոբլեմ, և թե տեխնիկական մշակույթների պրոբլեմը։ Այս պրոբլեմները լուծելիս մենք պետք է շարժվենք նույն այն ճանապարհով, որով ընթանում էինք հացահատիկային պրոբլեմի լուծման բնագավառում։ Այսինքն՝ մեր քաղաքականության հենակետերը հանդիսացող խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների կազմակերպման միջոցով աստիճանաբար փոխակերպենք այժմյան մանր-գյուղացիական անասնաբուծության ու տեխնիկական մշակույթների տեխնիկական ու տնտեսական հիմքը։ «Անասնաբույծ», «Ոչխարաբույծ», «Խոզաբույծ», «Յուղկաթի տրեստ»՝ պլյուս կոլտնտեսությունները անասնաբուծության բնագավառում, գոյություն ունեցող խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները տեխնիկական մշակույթների բնագավառում,— սրանք են մեր առջև ծառացած պրոբլեմների լուծման մեկնակետերը։

2) **Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների շինարարության հետագա ծավալման** պրոբլեմը։ Հազիվ թե անհրաժեշտ է ընդարձակաբանել այն մասին, որ այս պրոբլեմը գյուղում կատարվող մեր ամբողջ շինարարության **առանցքային** պրոբլեմն է հանդիսանում մեզ համար։ Այժմ կույրերն անգամ տեսնում են, որ կատարված է գյուղացիության հսկայական, արմատական շրջադարձ հնից դեպի նորը, կուլակային ստրկացումից դեպի կոլտնտեսային ազատ կյանքը։ Այլևս դարձ չկա դեպի հինը։ Կուլակությունը դատապարտված է և կվերացվի։ Մնում է միայն մի ուղի՝ կոլտնտեսությունների ուղին։ Իսկ կոլտնտեսությունների ուղին արդեն անհայտ և չփորձված ուղի չէ։ Նա հազարավոր կերպերով փորձված ու ստուգված է իրենց, գյուղացիական մասսաների կողմից։ Փորձված ու գնահատված է իբրև այն նորը, որը գյուղացիներին ազատություն է բերում կուլակային ստրկացումից, կարիքից, խավարից։ Այս է մեր նվաճումների հիմքը։

Ինչպե՞ս է շարունակելու ծավալվել նոր շարժումը գյուղում։ Առաջից կգնան խորհտնտեսությունները, որպես գյուղի հին կացութաձևի վերակերտման ողնաշարը։ Նրանց հետևից կձըգվեն բազմաթիվ կոլտնտեսությունները, որպես նոր շարժման հենակետերը գյուղում։ Այս երկու սիստեմի միացյալ աշխատանքը պայմաններ է ստեղծում ԽՍՀՄ-ի բոլոր մարզերի լիակատար կոլեկտիվացման համար։

Կոլտնտեսային շարժման ամենաուշագրավ նվաճումներից մեկն այն է, որ նա արդեն կարողացել է առաջ քաշել կոլտնտեսային գործի հազարավոր **կազմակերպիչներ** և առանձնակի հազարավոր **ագիտատորներ հենց իրենց**՝ գյուղացիների միջից։ Այժմ արդեն ոչ թե միայն մենք, որակյալ բոլշևիկներս, այլ իրենք կոլտնտեսությունների գյուղացիները, կոլտնտեսային գործի առանձնակի հազարավոր գյուղացի-կազմակերպիչներն ու ագիտատորներն առաջ են տանելու կոլեկտիվացման դրոշը։ Իսկ գյուղացի-ագիտատորները կոլտնտեսային շարժման չքնաղ ագիտատորներ են, որովհետև հօգուտ կոլտնտեսությունների նրանք կգտնեն գյուղացիների մնացած մասսայի համար հասկանալի ու ընդունելի այնպիսի փաստարկներ, որոնց մասին մենք, որակյալ բոլշևիկներս, չերազել անգամ չենք կարող։

Տեղ-տեղ ձայներ են հնչում համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից հրաժարվելու անհրաժեշտության մասին։ Տեղեկություններ կան, որ նույնիսկ մեր կուսակցության մեջ այդ «գաղափարի» կողմնակիցներ կան։ Բայց այդպես կարող են խոսել միայն այն մարդիկ, որոնք, կամա թե ակամա, զոդվել են կոմունիզմի թշնամիների հետ։ Համատարած կոլեկտիվացման մեթոդն այն անհրաժեշտ մեթոդն է, առանց որի անհնարին է կատարել ԽՍՀՄ-ի բոլոր մարզերի կոլեկտիվացման հնգամյա պլանը։ Ինչպե՞ս կարելի յե նրանից հրաժարվել՝ դավաճանած չլինելով կոմունիզմին, դավաճանած չլինելով բանվոր դասակարգի ու գյուղացիության շահերին։

Սա, իհարկե, չի նշանակում, թե կոլտնտեսային շարժման բնագավառում ամեն ինչ մեզանում «հարթ» ու «սահուն» կընթանա։ Կոլտնտեսությունների ներսում տատանումներ դեռևս կլինեն։ Մակընթացություններ ու տեղատվություններ դեռևս կլինեն։ Բայց սա չի կարող և չպետք է շփոթի կոլտնտեսային շարժման կառուցողներին։ Սա ևս առավել չի կարող լուրջ արգելք ծառայել կոլտնտեսային շարժման հուժկու զարգացման համար։ Մի այնպիսի առողջ շարժում, ինչպիսին, անկասկած, կոլտնտեսային շարժումն է, միևնույն է, կհասնի իր նպատակին՝ չնայած ոչ մի բանի, չնայած առանձին արգելքներին ու դժվարություններին։

Խնդիրն այն է, որ կոլտնտեսային շարժման հետագա ծավալման համար ուժեր պատրաստենք և գործը կարգի գցենք։

3) **Ապարատը շրջաններին ու գյուղերին** ամենամեծ չափով

մոտեցնելու պրոբլեմը։ Կասկած չի կարող լինել, վոր մենք չէինք կարողանա գյուղատնտեսության վերակերտման ու կոլտնտեսային շարժման զարգացման հսկայական աշխատանքը բարձր հիմքերի վրա դնել, յեթե չիրականացնեինք ռայոնացումը։ Գավառակների խոշորացնելն ու նրանց փոխակերպելը շրջանների, նահանգների վոչնչացնելն ու նրանց փոխակերպելը փոքր միավորների (օկրուգների), վերջապես, մարզեր ստեղծելը, վորպես կենտկոմի անմիջական հենակետեր,—սա յե շրջանացման ընդհանուր տեսքը։ Շրջանացման նպատակն է՝ կուսակցական-խորհրդային և տնտեսական կոոպերատիվ ապարատը մոտեցնել շրջանին ու գյուղին, վորպեսզի հնարավորություն ստանանք ժամանակին լուծելու գյուղատնտեսության, նրա վերելքի, նրա վերակառուցման ցավոտ հարցերը։ Այս իմաստով, կրկնում եմ, շրջանացումը մեր ամբողջ շինարարության հսկայական պլյուս տվեց։

Բայց արդյոք ամեն ինչ է արված, վորպեսզի իսկապես մոտեցնենք և ինչպես հարկն է մոտեցնենք ապարատը շրջաններին ու գյուղերին։ Վո՛չ, ամեն ինչ չի արված։ Կոլտնտեսային շինարարության ծանրության կենտրոնը ներկայումս փոխադրված է շրջանային կազմակերպությունները։ Այստեղ են հավաքվում կոլտնտեսային շինարարության ու գյուղում կատարվող ամեն մի ուրիշ տնտեսական աշխատանքի թելերը՝ թե կոոպերացիայի գծով, թե խորհուրդների գծով, թե վարկի գծով, թե մթերումների գծով։ Շրջանային կազմակերպություններն արդյոք բավականաչափ օժտված են հարկավոր և անհրաժեշտ աշխատողներով, վորպեսզի կատարեն այս ամբողջ բազմազան աշխատանքը։ Կասկած չի կարող լինել, վոր նրանք չափազանց անբավարար կերպով են օժտված աշխատողներով։ Իսկ վորտեղ է յելքը։ Ի՞նչ է հարկավոր անել, վորպեսզի ուղղենք այս թերությունը և մեր աշխատանքի բոլոր ճյուղերի ուղղությամբ բավարար քանակի հարկավոր աշխատողներով ապահովենք շրջանային կազմակերպությունները։ Սրա համար պետք է, գոնե, յերկու բան անել. 1) վերացնել օկրուգները (ծափահարություններ), վորոնք մարզի ու շրջանների արանքում անպետք միջնապատ են դառնում, և ի հաշիվ օկրուգային ազատված աշխատողների ուժեղացնել շրջանային կազմակերպությունները. 2) շրջանային կազմակերպություններն անմիջականորեն կապել մարզի հետ (յերկրկոմի, ազգ. կենտկոմի հետ)։ Հենց սա էլ կլինի շրջանացման

գործը մինչև վերջը հասցնել, ապարատը շրջաններին ու գյուղերին մոտեցնելու գործը մինչև վերջը հասցնել։

Այստեղ ծափահարեցին օկրուգները վերացնելու հեռանկարի առթիվ։ Իհարկե, օկրուգները պետք է վերացնել։ Բայց սխալ կլիներ կարծել, թե այս հանգամանքը մեզ իրավունք է տալիս վատաբանելու օկրուգները, ինչպես այդ թույլ են տալիս ընկերներից վոմանք «Правда»-յի էջերում։ Չպետք է մոռանալ, վոր օկրուգներն իրենց ուսերին հսկայական աշխատանք են տարել և իր ժամանակին պատմական մեծ դեր են խաղացել (Ծափահարություններ)։ Կարծում եմ նաև, վոր սխալ կլիներ օկրուգների վերացման գործում չափազանց շտապողականություն ցուցաբերել։ Կենտկոմը վճիռ է կայացրել օկրուգների վերացման մասին։ Բայց նա բնավ չի կարծում, թե այդ գործը պետք է անհապաղ իրականացնել։ Ակներև է, վոր հարկ կլինի, նախքան օկրուգները վերացնելը, նախապատրաստական անհրաժեշտ աշխատանք կատարել։

դ) ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջապես, տրանսպորտի պրոբլեմը։ Անհրաժեշտություն չկա ընդարձակաբանելու ամբողջ ժողովրդական տնտեսության համար տրանսպորտի ունեցած հսկայական նշանակության մասին։ Յեվ վոչ միայն ժողովրդական տնտեսության համար։ Ինչպես հայտնի յե, տրանսպորտը լրջագույն նշանակություն ունի նաև յերկրի պաշտպանության համար։ Յեվ ահա, չնայած տրանսպորտի հսկայական նշանակությանը, տրանսպորտի տնտեսությունը, այդ տնտեսության վերակառուցումը դեռևս հետ է մնում զարգացման ընդհանուր տեմպից։ Արդյոք էլ հարկ կա ապացուցելու, վոր յերբ դրությունն այս է, տրանսպորտը յենթարկում ենք ժողովրդական տնտեսության «նեղ տեղի» վերածվելու վտանգին, վորը կարող է արգելակել մեր առաջխաղացումը։ Արդյոք ժամանակը չէ վերջ տալու այսպիսի դրությանը։

Առանձնապես վատ է գետային տրանսպորտի բանը։ Փաստ է սա, վոր Վոլգայի նավագնացությունը հազիվ է հասել մինչպատերազմյան ժամանակի $60^{0}/_{0}$-ին, իսկ Դնեպրինը՝ $40^{0}/_{0}$-ին։ Մինչպատերազմյան ժամանակի 60 և $40^{0}/_{0}$—սա այն ամենն է, ինչ կարող է իր «նվաճումների» ցուցակի մեջ մտցնել գետային տրանսպորտը։ Ինչ խոսք, մեծ «նվաճում» է։ Արդյոք ժամա-

նակը չի՞ վերջ տալու այս խայտառակությանը։ (Ձայներ—«Ժամանակն է»)։

Խնդիրն այն է, որ, վերջապես, բոլշևիկորեն ձեռնամուխ լինենք տրանսպորտի գործին և այն առաջ շարժենք։

* * *

Սրանք են կուսակցության հերթական խնդիրները։

Ի՞նչ է պահանջվում, որպեսզի իրագործենք այս խնդիրները։

Սրա համար պահանջվում է, ամենից առաջ և գլխավորապես, այն, որ շարունակենք ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատով և այն հասցնենք իր վախճանին։

Այս է մեր քաղաքականության կենտրոնն ու հիմքը տվյալ ժամանակում։ (Ծափահարություններ)

III

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Անցնում եմ կուսակցության հարցին։

Յես վերը խոսեցի տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունների մասին կապիտալիստական սիստեմի հանդեպ։ Խոսեցի այն վիթխարի հնարավորությունների մասին, որ մեզ ընձեռում է մեր հասարակակարգը՝ սոցիալիզմի լիակատար հաղթության համար մղվող պայքարի գործում։ Խոսեցի այն մասին, որ առանց այդ հնարավորությունների, առանց այդ հնարավորություններն օգտագործելու մենք չէինք կարողանա այն հաջողությունները ձեռք բերել, ինչ մենք նվաճել ենք անցած ժամանակաշրջանում։

Բայց ահա մի հարց. կուսակցությունն արդյոք կարողացե՞լ է ճշտորեն օգտագործել այն հնարավորությունները, որ մեզ ընձեռում է խորհրդային հասարակակարգը. արդյոք նա այդ հնարավորությունները չի՞ պահել ծածկոցի տակ, այսպիսով խանգարելով բանվոր դասակարգին, որ նա մինչև վերջը ծավալի իր ամբողջ հեղափոխական հզորությունը. ...ոք նա կարողացե՞լ է այդ հնարավորություններից քամել այն ամենը, ինչ կարելի յեր քամել, որպեսզի ամբողջ ճակատով ծավալենք սոցիալիստական շինարարությունը։

Սոցիալիզմի լիակատար հաղթության համար խորհրդային հասարակակարգը վիթխարի հնարավորություններ է տալիս։ Բայց հնարավորությունը դեռևս իրականություն չէ։ Հնարավորությունն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ են մի ամբողջ շարք պայմաններ, որոնց թվում կուսակցության գիծն ու այդ գծի ճիշտ կենսագործումն ամենևին էլ վերջին դերը չեն խաղում։

Մի քանի օրինակ։

Աջ օպորտունիստները պնդում են, թե նեպը մեզ համար ապահովում է սոցիալիզմի հաղթանակը,—հետևաբար, կարելի յե չանհանգստանալ ինդուստրացման տեմպի, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների զարգացման վերաբերմամբ և այլն, վորովհետև հաղթության գալը, մեկ է, ապահովված է, այսպես ասած՝ ինքնահոսի կարգով: Այդ, իհարկե, սխալ է և հիմարություն: Այդպես ասել՝ նշանակում է ժխտել կուսակցության դերը սոցիալիզմի կառուցման մեջ, ժխտել կուսակցության պատասխանատվությունն այդ կառուցման համար: Լենինը բնավ չի ասել, թե նեպն ապահովում է մեզ համար սոցիալիզմի հաղթությունը: Լենինն այն է ասել միայն, վոր «նեպը տնտեսապես ու քաղաքականորեն լիովին ապահովում է մեզ համար սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորությունը»: Բայց հնարավորությունը դեռևս իրականություն չէ: Հնարավորությունն իրականություն դարձնելու համար՝ ամենից առաջ հարկավոր է դեն շպրտել ինքնահոսի թեորիան, պետք է վերակառուցել (ռեկոնստրուկցիայի յենթարկել) ժողովրդական տնտեսությունը և վճռական հարձակում գործել քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ:

Այնուհետև, աջ օպորտունիստները պնդում են, թե մեր հասարակակարգում բանվոր դասակարգի ու գյուղացիության պառակտման համար հիմքեր չեն դրված,—հետևաբար, կարելի յե չանհանգստանալ գյուղի սոցիալական խմբերի վերաբերմամբ ճիշտ քաղաքականություն մշակելու նկատմամբ, վորովհետև, մեկ է, կուլակը կներաճի սոցիալիզմի մեջ, իսկ բանվորների ու գյուղացիների դաշինքն ապահովված կլինի՝ այսպես ասած՝ ինքնահոսի կարգով: Սա նույնպես սխալ է և հիմարություն: Այսպես կարող են ասել միայն այն մարդիկ, վորոնք չեն հասկանում, վոր կուսակցության քաղաքականությունը, այն էլ այնպիսի կուսակցության քաղաքականությունը, վոր իշխանության գլուխ է կանգնած, այստեղ հանդիսանում է հիմնական մոմենտ, վորը վորոշում է բանվորների ու գյուղացիների դաշինքի գործի բախտը: Լենինը բնավ բացառված չի համարել պառակտման վտանգի հնարավորությունը բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև: Լենինը խոսում էր այն մասին, վոր «մեր սոցիալական հասարակակարգում այդպիսի պառակտման համար անհրաժեշտորեն չեն դրված հիմքեր», բայց «չկա» այդ դասակարգերի միջև դասակարգային լուրջ տարաձայնություն-

ներ ծագեն, այն ժամանակ պառակտումն անխուսափելի կլինի»: Այս կապակցությամբ Լենինը գտնում էր, վոր

> «Մեր ԿԿ-ի և ԿՎՀ-ի, ինչպես և ամբողջությամբ վերցրած մեր կուսակցության, գլխավոր խնդիրն այն է, վոր ուշադիր հետևենք այն հանգամանքներին, վորոնցից պառակտում կարող է բղխել, և կանխենք նրանց, վորովհետև մեր հանրապետության բախտը վերջին հաշվով կախված է լինելու այն բանից, թե գյուղացիական մասսան արդյոք կգնա բանվոր դասակարգի հետ՝ պահպանելով իր հավատարմությունը նրա հետ ունեցած դաշինքին, թե նա թույլ կտա «նեպմաններին», այսինքն՝ նոր բուրժուազիային՝ իրեն անջատելու բանվորներից, իրեն պառակտելու նրանցից»:

Հետևաբար, բացառված չէ պառակտումը բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև, բայց նա բնավ պարտադիր չէ, վորովհետև այդ պառակտման առաջն առնելու և բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքն ամրապնդելու հնարավորություն է դրված մեր հասարակակարգում: Իսկ ինչ է պահանջվում այդ հնարավորությունն իրականություն դարձնելու համար: Պառակտման առաջն առնելու հնարավորությունն իրականություն դարձնելու համար ամենից առաջ հարկավոր է թաղել ինքնահոսի թեորիան, պետք է կապիտալիզմի արմատները դուրս քաշել՝ կազմակերպելով կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, և կուլակության շահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականությունից անցնել կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը:

Այսպիսով, դուրս է գալիս, վոր փաստորեն պետք է տարբերել մեր հասարակակարգում գոյություն ունեցող հնարավորությունները այդ հնարավորությունների օգտագործումից, այդ հնարավորություններն իրականություն դարձնելուց:

Դուրս է գալիս, վոր միանգամայն հնարավոր են դեպքեր, յերբ հաղթության հնարավորություններ կան, իսկ կուսակցությունը չի տեսնում այդ հնարավորությունները կամ չի կարողանում նրանց ճշտությամբ օգտագործել, վորի պատճառով հաղթության փոխարեն կարող է պարտություն ստացվել:

Յեվ ահա ելի նույն հարցը. կուսակցությունն արդյոք կարողացել է ճշտորեն օգտագործել այն հնարավորությունները ու

առավելությունները, վոր մեզ խորհրդային հասարակակարգն ե ընձեռում. արդյոք նա արել ե ամեն ինչ, վորպեսզի այդ հնարավորությունները իրականություն դարձնի և, այսպիսով, մեր շինարարության համար ապահովի հաջողությունների մաքսիմումը։

Այլ կերպ ասած՝ կուսակցությունը և նրա Կենտկոմն անցած ժամանակաշրջանում արդյոք ճիշտ են ղեկավարել սոցիալիզմի կառուցման գործը։

Մեր արդի պայմաններում ի՞նչ ե պահանջվում կուսակցության ճիշտ ղեկավարության համար։

Կուսակցության ճիշտ ղեկավարության համար, բացի նշված ամեն ինչից, անհրաժեշտ ե, վոր ճիշտ լինի կուսակցության գիծը, վոր մասսաները հասկանան կուսակցական գծի ճիշտ լինելը և ակտիվորեն պաշտպանեն այդ գիծը, վոր կուսակցությունը չսահմանափակվի գլխավոր գիծը մշակելով, այլ որեցոր ղեկավարի նրա կենսագործումը, վոր կուսակցությունը վճռական պայքար մղի գլխավոր գծից կատարվող թեքումների և դեպի այդ թեքումները ցուցաբերվող հաշտվողականության դեմ, վոր կուսակցությունը թեքումների դեմ մղած պայքարում պահպանի իր շարքերի միասնականությունն ու յերկաթե կարգապահությունը։

Ի՞նչ են արել կուսակցությունն ու նրա Կենտկոմն այս պայմանների իրագործման համար։

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԸ

ա) Կուսակցության հիմնական դիրքավորումը տվյալ մոմենտում այն ե, վոր սոցիալիզմի՝ տնտեսական ֆրոնտի առանձին ճակատամասերում կատարած հարձակումից անցնենք հարձակման ամբողջ ճակատով թե՛ արդյունաբերության բնագավառում, թե՛ գյուղատնտեսության բնագավառում։ XIV համագումարը գերազանցապես ինդուստրացման համագումար եր։ XV համագումարը գերազանցապես կոլեկտիվացման համագումար եր։ Սա ընդհանուր հարձակման նախապատրաստումն եր։ Ի տարբերություն անցած ետապներից՝ XVI համագումարին նախորդող ժամանակաշրջանը սոցիալիզմի՝ ամբողջ ճակատով ընդհանուր հարձակման անցնելու ժամանակաշրջան ե, սոցիալիզմի ուժգին կառուցման ժամանա-

կաշրջանը՝ թե՛ արդյունաբերության բնագավառում, թե՛ գյուղատնտեսության բնագավառում։ XVI համագումարը սոցիալիզմի՝ ամբողջ ճակատով ծավալուն հարձակման անցնելու, կուլակության՝ վորպես դասակարգ վերացնելու և համատարած կոլեկտիվացումը կենսագործելու համագումարն ե։

Ահա ձեզ յերկու խոսքով մեր կուսակցության գլխավոր գծի եությունը։

Արդյոք ճի՞շտ ե այս գիծը։

Այո, ճիշտ ե։ Փաստերն ասում են, վոր մեր կուսակցության գլխավոր գիծը միակ ճիշտ գիծն ե։ (Ծափահարություններ)։

Սրա մասին են վկայում այն հաջողություններն ու նվաճումները, վոր մենք ունենք սոցիալիստական շինարարության ճակատում։ Չի յեղել և չի կարող լինել, վոր սխալ քաղաքականության հետևանք լինի այն վճռական հաղթությունը, վոր տարել ե կուսակցությունն անցած ժամանակաշրջանում քաղաքի ու գյուղի սոցիալիստական շինարարության ճակատում։ Միայն ճիշտ գլխավոր գիծը մեզ կարող եր այդպիսի հաղթություն տալ։

Սրա մասին ե վկայում մեր կուսակցության քաղաքականության դեմ յեղած այն կատաղի վոռնոցը, վոր վերջերս բարձրացրել են մեր դասակարգային թշնամիները, կապիտալիստներն ու նրանց մամուլը, պապը և ամեն տեսակի յեպիսկոպոսները, սոցիալ-դեմոկրատները և Աբրամովիչի ու Դանի տիպի «ռուսական» մենշևիկները։ Կապիտալիստներն ու նրանց լակեյները հայհոյում են մեր կուսակցությանը,— նշանակում ե մեր կուսակցության գլխավոր գիծը ճիշտ ե։ (Ծափահարություններ)։

Սրա մասին ե վկայում տրոցկիզմի՝ այժմ բոլորին հայտնի ճակատագիրը։ Տրոցկիստների բանակին պատկանող պարոնները շաղակրատում եյին խորհրդային իշխանության «վերասերման» մասին, «տերմիդորի» մասին, տրոցկիզմի «անխուսափելի հաղթանակի» մասին և այլն։ Իսկ իրականում ի՞նչ ստացվեց։ Ստացվեց տրոցկիզմի կազմալուծում, վախճան։ Ինչպես հայտնի յե, տրոցկիստների մի մասը խզեց կապերը տրոցկիզմի հետ և իր ներկայացուցիչների բազմաթիվ հայտարարություններով ընդունեց կուսակցության իրավացի լինելը՝ ստորագրելով տրոցկիզմի հակահեղափոխական լինելը։ Տրոցկիստների մյուս մասը, իրոք վոր, վերասերվեց մանր-բուրժուական տիպիկ հակահեղափոխա-

կոնների՝ Իրականում դառնալով ՀամԿ(բ)Կ գործերի վերաբերյալ կապիտալիստական մամուլի տեղեկատու բյուրո։ Իսկ խորհըրդային իշխանությունը, որը պետք է «վերասերվեր» (կամ «արդեն վերասերվել է»), շարունակում է վողջ-առողջ ապրել ու սոցիալիզմ կառուցել՝ հաջողությամբ ջարդելով մեր յերկրի կապիտալիստական տարրերի ու նրանց մանր-բուրժուական ձայնապահների վողնաշարը։

Սրա մասին է վկայում աջ ուկլոնիստների այժմ բոլորին հայտնի ճակատագիրը։ Նրանք շաղակրատում ու բղավում եյին կուսակցական գծի «կործանաբերության» մասին, «հավանական կատաստրոֆի» մասին ԽՍՀՄ-ում, յերկիրը կուսակցությունից ու նրա ղեկավարությունից «փրկելու» անհրաժեշտության մասին և այլն։ Իսկ իրականում ինչ ստացվեց։ Իրականում այն ստացվեց, որ կուսակցությունը խոշորագույն հաղթանակներ տարավ սոցիալիզմի կառուցման բոլոր ճակատներում, իսկ աջ ուկլոնիստների խումբը, որն ուզում եր յերկիրը «փրկել», բայց որը հետո ընդունեց իր հայացքների սխալ լինելը, այժմ ծանծաղուտի մեջ է ընկել։

Սրա մասին են վկայում բանվոր դասակարգի ու գյուղացիության աճող հեղափոխական ակտիվությունը, աշխատավորության միլիոնավոր մասսաների կողմից կուսակցության քաղաքականությանը ցույց տրվող ակտիվ պաշտպանությունը և, վերջապես, բանվորների ու կոլտնտեսական-գյուղացիների այն աշխատանքային չտեսնված խանդավառությունը, վորն իր հոյակապությամբ ապշեցնում է մեր յերկրի թե թշնամիներին, թե բարեկամներին։ Էլ չեմ խոսում դեպի կուսակցությունը տածած վստահության անման այնպիսի նշանների մասին, ինչպիսիք են ամբողջ ցեխերով ու գործարաններով կուսակցության մեջ մտնելու մասին բանվորների արած հայտարարությունները, XV համագումարից մինչև XVI համագումարը տևող ժամանակամիջոցում կուսակցության անդամների թվի ավելի քան 600 հազար մարդով աճելը, այս տարվա միայն առաջին յեռամսյակում կուսակցության մեջ 200 հազար նոր անդամներ մտնելը։ Ինչի մասին է խոսում այս ամենը, յեթե վոչ այն մասին, վոր աշխատավորության միլիոնավոր մասսաները գիտակցում են մեր կուսակցության քաղաքականության ճիշտ լինելը և պատրաստ են պաշտպանելու այն։

Պետք է ընդգծել, վոր այս փաստերը չեյին լինի, յեթե

մեր կուսակցության գլխավոր գիծը միակ ճիշտ գիծը չլիներ։

բ) Բայց կուսակցությունը չի կարող սահմանափակվել գլխավոր գիծ մշակելով։ Նա պետք է նաև որը-որին ստուգի գլխավոր գծի կենսագործումը պրակտիկայում։ Նա պետք է ղեկավարի գլխավոր գծի կենսագործումը՝ աշխատանքի ընթացքում բարելավելով ու կատարելագործելով տնտեսական շինարարության ընդունված պլանները, ուղղելով ու կանխելով սխալները։

Ի՞նչպես է կատարել այդ աշխատանքը մեր կուսակցության Կենտկոմը։

Կենտկոմի աշխատանքն այդ բնագավառում ընթացել է, գլխավորապես, հնգամյա պլանը՝ տեմպերն ավելացնելու և ժամկետները կրճատելու իմաստով ուղղելու ու ճշգրտելու գծով, տնտեսական կազմակերպությունների համար սահմանված առաջադրանքների կատարումը ստուգելու գծով։

Ահա Կենտկոմի միքանի հիմնական վորոշումները, վորոնք ուղղում են հնգամյա պլանը՝ շինարարության տեմպերը բարձրացնելու և կատարման ժամկետները կրճատելու վոգով։

Սև մետաղագործության վերաբերմամբ. հնգամյա պլանը նախատեսում է թուջի արտադրությունը հնգամյակի վերջին տարում հասցնել 10 միլիոն տոննի. իսկ Կենտկոմի վճռով այս նորման բավական չի համարվում և գտնում է, վոր թուջի արտադրությունը հնգամյակի վերջին տարում պետք է բարձրացվի 17 միլիոն տոննի։

Տրակտորաշինության վերաբերմամբ. հնգամյա պլանը նախատեսում է տրակտորների արտադրությունը հնգամյակի վերջին տարում հասցնել 55 հազար հատի. իսկ Կենտկոմի վճռով այս առաջադրանքը բավական չի համարվում և գտնում է, վոր տրակտորների արտադրությունը հնգամյակի վերջին տարում պետք է բարձրացվի 170 հազար հատի։

Նույն այդ բանը պետք է ասել ավտոշինության մասին, վորտեղ հնգամյակի վերջին տարում 100 հազ. հատ ավտոմոբիլ (բեռնատար ու մարդատար) արտադրելու փոխարեն, վոր նախատեսված եր հնգամյա պլանով, վճռված է ավտոմոբիլների արտադրությունը բարձրացնել 200 հազ. հատի։

Նույն այդ բանը տեղի յե ունենում գունավոր մետաղագործության վերաբերմամբ, վորտեղ հնգամյա պլանի նշագծումներն (наметки) ավելացված են ավելի քան 100%-ով, և գյուղմեքենա-

շինության վերաբերմամբ, որտեղ հնգամյա պլանի նշագծումները նույնպես ավելացված են ավելի քան 100%-ով։

Էլ չեմ խոսում կոմբայններ շինելու մասին, որ բնավ հաշվի առնված չի եղել հնգամյա պլանում, և որոնց արտադրությունը հնգամյակի վերջին տարում պետք է հասցվի մինիմում 40 հազ. հատի։

Խորհտնտեսային շինարարության վերաբերմամբ. հնգամյա պլանը նախատեսում է ցանքերի տարածությունները հնգամյակի վերջերքին ընդարձակել մինչև 5 միլիոն հեկտար. իսկ Կենտկոմի վճիռն այդ նորման բավական չի համարում և գտնում է, որ խորհտնտեսությունների ցանքատարածությունները հնգամյակի վերջերքին պետք է հասցվեն 18 միլիոն հեկտ.։

Կոլտնտեսային շինարարության վերաբերմամբ. հնգամյա պլանը նախատեսում է ցանքատարածությունները հնգամյակի վերջերքին ընդարձակել մինչև 20 միլիոն հեկտար. իսկ Կենտկոմի վճիռն այդ նորման համարում է ակներևորեն անբավարար (այդ նորման արդեն գերակատարված է այս տարի) և գտնում է, որ հնգամյակի վերջերքին ԽՍՀՄ-ի կոլեկտիվացումը հիմնականում պետք է ավարտված լինի, և կոլտնտեսությունների ցանքատարածություններն այդ ժամանակ պետք է բռնեն ԽՍՀՄ-ի ամբողջ ցանքատարածության ինը տասներորդը, որ ներկայումս անհատական տնտեսություններն են մշակում։ (Ծափահարություններ)։

Եվ այլն և այլն։

Այս է կուսակցության գլխավոր գիծը կիրառելու գործի, սոցիալիստական շինարարությունը պլանավորելու գործի վերաբերմամբ Կենտկոմի ցույց տված ղեկավարության պատկերն ընդհանուր առմամբ։

Կարող են ասել, թե Կենտկոմը, այսպես հիմնովին փոխելով հնգամյա պլանի նշագծումները, խախտում է պլանավորման սկզբունքը և գցում է պլանավորող օրգանների հեղինակությունը։ Բայց այդպես կարող են ասել միայն անհուսալի բյուրոկրատները։ Մեզ, բոլշևիկներիս համար հնգամյա պլանը մի ինչ-որ ավարտված ու մի անգամ ընդմիշտ տրված բան չէ։ Մեզ համար հնգամյա պլանը, ինչպես և ամեն մի պլան, սոսկ առաջին մոտեցման կարգով ընդունված մի պլան է, որը պետք է ճշգրտել, փոփոխել ու կատարելագործել տեղերի փորձի հիման վրա, պլանը կատարելու փորձի հիման վրա։ Ոչ մի հնգամյա պլան չի կարող հաշվի առնել այն բոլոր հնարավորությունները, որ թաքնված

են մեր հասարակակարգի ընդերքում, և որոնք հայտաբերվում են միայն աշխատանքի ընթացքում, պլանը ֆաբրիկայում, գործարանում, կոլտնտեսության մեջ, խորհտնտեսության մեջ, շրջանում և այլուր իրագործելու ընթացքում։ Միայն բյուրոկրատները կարող են կարծել, թե պլանային աշխատանքը պլանը կազմելով ավարտվում է։ Պլանը կազմելը պլանավորման սկիզբն է միայն։ Պլանային իսկական ղեկավարությունը ծավալվում է միայն պլանը կազմելուց հետո, պլանը տեղերում ստուգելուց հետո, պլանի իրագործման, ուղղման ու ճշգրտման ընթացքում։

Ահա թե ինչու ԿԿ-ն ու ԿՎՀ-ը հանրապետության պլանային օրգանների հետ միասին անհրաժեշտ համարեցին փորձի տվյալների հիման վրա ուղղել ու բարելավել հնգամյա պլանը՝ շինարարության տեմպերը բարձրացնելու և կատարման ժամկետները կրճատելու ոգով։

Ահա թե ինչ էր ասում Լենինը պլանավորման սկզբունքի ու պլանային ղեկավարման մասին խորհուրդների VIII համագումարում ԳՈԷԼՌՈ-յի[1] տասնամյա պլանը քննարկելիս.

«Կուսակցության մեր ծրագիրը չի կարող մնալ միայն կուսակցության ծրագիր։ Նա պետք է վերածվի մեր տնտեսական շինարարության ծրագրի, այլապես նա իբրև կուսակցության ծրագիր էլ պետքական չէ։ Նա պետք է լրացվի կուսակցության երկրորդ ծրագրով, ժողովրդական ամբողջ տնտեսությունը վերստեղծելու և նրան ժամանակակից տեխնիկային հասցնելու աշխատանքների պլանով... Մենք պետք է գանք այն բանին, որ ընդունենք մի որոշ պլան։ Իհարկե, սա կլինի միայն առաջին մոտեցման կարգով ընդունված պլան։ Կուսակցության այս ծրագիրն այնպես անփոփոխ չի լինի, ինչպես մեր իսկական ծրագիրն է, որը փոփոխության ենթակա է միայն կուսակցության համագումարներում։ Ոչ, այս ծրագիրը բարելավվելու է, մշակվելու է, կատարելագործվելու և վերափոխվելու է ամեն օր, յուրաքանչյուր արհեստանոցում, յուրաքանչյուր գավառակում... Հետևելով գիտության ու պրակտիկայի փորձին տեղերում՝ անշեղորեն պետք է ձգտել այն բանին, որ պլանն ավելի շուտ կատարվի, քան նշանակված է կա-

1 ԳՈԷԼՌՈ (ГОЭЛРО) — Ռուսաստանի էլեկտրիֆիկացիայի պետական հանձնաժողով։ Հայ. հրատ. խմբ.։

տարել, վորպեսզի մասսաները տեսնեն, թե վորքը կարող է կրճատել այն յերկար ժամանակաշրջանը, վորը մեզ բաժանում է արդյունաբերության լիակատար վերականգնումից: Այդ մեզանից է կախված: Յեկեք լավացնենք տնտեսությունը յուրաքանչյուր արհեստանոցում, յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր բնագավառում,— և այն ժամանակ մենք ժամկետը կկրճատենք: Յեվ մենք կրճատում ենք այն» (հ. XXVI, եջ 45, 46, 43):

Դուք տեսնում եք, վոր ԿԿ-ն Լենինի մատնանշած ուղիով ընթացել՝ փոփոխելով ու բարելավելով հնգամյա պլանը, կրճատելով ժամկետներն ու բարձրացնելով շինարարության տեմպերը:

Բարձրացնելով շինարարության տեմպերը և կրճատելով հնգամյա պլանի կատարման ժամկետները՝ ԿԿ-ն ինչ հնարավորությունների վրա յե հենված յեղել: Այն ռեզերվների վրա, վորոնք թաքնված են մեր հասարակակարգի ընդերքում և վորոնք հայտաբերվում են աշխատանքի ընթացքում միայն, այն հնարավորությունների վրա, վոր տրամադրում է մեզ վերակառուցման ժամանակաշրջանը: ԿԿ-ն գտնում է, վոր արդյունաբերության ու գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերակառուցումն արտադրության սոցիալիստական կազմակերպման պայմաններում տեմպերի արագացման այնպիսի հնարավորություններ է բաց անում, վորոնց մասին կապիտալիստական վոչ մի յերկիր չի կարող յերազել:

Միայն այս հանգամանքներով կարելի յե բացատրել այն փաստը, վոր վերջին յերեք տարում մեր սոցիալիստական արդյունաբերությունն իր արտադրանքն ավելացրել է ավելի քան յերկու անգամ, իսկ այս արդյունաբերության աճը 1930/31 թվին ընթացիկ տարվա համեմատությամբ պետք է բարձրանա 47%-ով, ընդվորում միմիայն այդ աճն իր ծավալով հավասարվելու յե մինչպատերազմյան ժամանակի ամբողջ խոշոր արդյունաբերության արտադրանքի ծավալին:

Միայն այս հանգամանքներով կարելի յե բացատրել այն փաստը, վոր խորհտնտեսային շինարարությունը հնգամյա պլանը գերակատարում է յերեք տարում, իսկ կոլտնտեսային շինարարությունը հնգամյակն արդեն գերակատարել է յերկու տարում:

Գոյություն ունի մի թեորիա, ըստ վորի զարգացման բարձր տեմպերը թույլատրելի յեն միայն վերականգնման ժամանակաշրջանում, իսկ վերակառուցման ժամանակաշրջանին անցնելիս՝ շինարարության տեմպերը տարեցտարի կտրուկ կերպով պետք է իջնեն: Այդ թեորիան կոչվում է «մարող կորագծի» թեորիա: Այդ թեորիան մեր հետամնացությունն արդարացնելու թեորիա յե: Նա վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի, լենինիզմի հետ: Նա մի բուրժուական թեորիա յե, վոր ստեղծվել է մեր յերկրի հետամնացությունն ամրապնդելու հաշվով: Մեր կուսակցության հետ առնչություն ունեցած կամ ունեցող մարդկանցից միայն տրոցկիստները և, թերևս, աջ ուկլոնիստներն են այդ թեորիան պաշտպանում ու քարոզում:

Տրոցկիստների մասին գոյություն ունի մի կարծիք, թե նրանք գերինդուստրիալիստներ են: Բայց այդ կարծիքը ճիշտ է մասամբ միայն: Նա ճիշտ է միայն այնքան, վորքան խոսքը վերականգնման ժամանակաշրջանի վերջի մասին է, յերբ տրոցկիստներն իրոք վոր զարգացրին գերինդուստրիալիստական ֆանտազիաներ: Ինչ վերաբերում է վերակառուցման ժամանակաշրջանին, ապա տրոցկիստները, տեմպերի տեսակետից, ամենածայրահեղ մինիմալիստներն ու ամենազազիր կապիտուլյանտներն են: (Ծիծաղ: Ծափահարություններ): Տրոցկիստներն իրենց պլատֆորմներում ու դեկլարացիաներում տեմպերի վերաբերյալ թվական տվյալներ չտվին՝ սահմանափակվելով միայն ընդհանուր շաղակրատությամբ տեմպերի մասին: Բայց կա մի փաստաթուղթ, վորտեղ տրոցկիստները թվերով պատկերել են պետական արդյունաբերության զարգացման տեմպերի իրենց ըմբռնումը: Յես նկատի ունեմ պետական արդյունաբերության «Հիմնական կապիտալի վերականգնման հատուկ խորհրդակցության» (OCBOK) դեկուցագիրը, վորը կառուցված է տրոցկիզմի սկզբունքների վրա: Հետաքրքրական է մի-յերկու խոսքով քննարկել 1925/26 թ. վերաբերող այդ վավերագիրը: Հետաքրքրական է, վորովհետև նա ամբողջությամբ արտացոլում է մարող կորագծի տրոցկիստական սխեման:

Ըստ այդ փաստաթղթի՝ առաջարկվում եր պետական արդյունաբերության մեջ ներդրել 1926/27 թ.—1543 միլիոն ռ., 1927/28 թ.—1490 միլիոն ռ., 1928/29 թ.—1320 միլիոն ռ., 1929/30 թ.—1060 միլիոն ռ. (1926/27 թ. գներով):

Այս է տրոցկիստական մարող կորագծի պատկերը:

Իսկ իրականում մենք վորքան ենք ներդրել: Իրականում մենք պետական արդյունաբերության մեջ ներդրել ենք՝ 1926/27

թվին—1065 միլիոն ռ., 1927/28 թ.—1304 միլիոն ռ., 1928/29 թ.—1819 միլիոն ռ., 1929/30 թ.—4775 միլիոն ռ. (1926/27 թ. գներով):

Այս է բոլշևիկյան բարձրացող կորագծի պատկերը:

Ըստ այդ փաստաթղթի՝ պետական արդյունաբերության արտադրանքը պետք է աճեր՝ 1926/27 թ.—31,6%-ով, 1927/28 թ.—22,9%-ով, 1928/29 թ.—15,5%-ով, 1929/30 թ.—15%-ով:

Այս է տրոցկիստական մարող կորագծի պատկերը:

Իսկ իրականում ինչ ստացվեց մեզանում: Իրականում պետարդյունաբերության արտադրանքի աճը կազմել է՝ 1926/27 թ.—19,7%, 1927/28 թ.—26,3%, 1928/29 թ.— 24,3%, 1929—30 թ.—32%, 1930/31 թ. կկազմի 47% աճ:

Այս է բոլշևիկյան բարձրացող կորագծի պատկերը:

Հայտնի յե, վոր Տրոցկին իր «Դեպի սոցիալիզմ, թե դեպի կապիտալիզմ» գրքույկում հատկապես պաշտպանում է մարող կորագծի այդ կապիտուլյանտական թեորիան: Նա այնտեղ ուղղակի ասում է, թե քանի վոր «մինչև պատերազմը արդյունաբերության ընդլայնումը հիմնականում նոր գործարաններ կառուցելն եր», իսկ «մեր ժամանակներում ընդլայնումը շատ ավելի մեծ չափով հին գործարանները օգտագործելն ու հին սարքավորումը լիաբեռնելն է», ապա «հետևաբար, բնական է, վոր վերականգնման պրոցեսի ավարտումով աճման կոեֆիցիենտը նշանակալիորեն պետք է իջնի», ըստվորում՝ Նա առաջարկում է «արդյունաբերական աճման կոեֆիցիենտ ամենամոտիկ տարիներում բարձրացնել մինչպատերազմյանի 6%-ից վոչ միայն 2, այլև 3 անգամ, գուցե և դրանից ավելի»:

Այսպիսով, արդյունաբերության տարեկան աճի յերեք անգամ վեց տոկոս: Իսկ վորքա՞ն կանի այդ: Ընդամենը 18% աճ մի տարում: Ասել է թե պետարդյունաբերության արտադրանքի տարեկան աճի 18%-ը, տրոցկիստների կարծիքով, վերակառուցման ժամանակաշրջանում, զարգացման արագացրած տեմպ պլանավորելու այն ամենաբարձր սահմանն է, վորին պետք է ձգտել, իբրև իդեալի: Տրոցկիստների այս փշուրահավաքային իմաստությունն այժմ համեմատեցեք արտադրանքի իրական այն աճի հետ, վոր մենք ունենք վերջին յերեք տարում (1927/28 թ.—26,3%, 1928/29 թ.—24,3%, 1929—30 թ.—32%), տրոցկիստների կապիտուլյանտական այս փիլիսոփայությունը համեմատեցեք Գեոպլանի վերահսկիչ թվերով 1930/31 թ. համար նշագծված 47% աճի հետ, վորը գերազանցում է վերականգնման ժամանակաշրջանի արտադրանքի աճի ամենաբարձր տեմպերից,—և դուք կըմբռնեք «մարող կորագծի» տրոցկիստական թեորիայի ամբողջ ռեակցիոնությունը, վերակառուցման ժամանակաշրջանի հնարավորություններին տրոցկիստների չհավատալու ամբողջ խորությունը:

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր այժմ տրոցկիստները յերգում են արդյունաբերության ու կոլտնտեսային շինարարության զարգացման բոլշևիկյան տեմպերի «չափազանցության» մասին:

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառը, վոր տրոցկիստականներին այժմ մարդ չի ջոկի մեր աջ ուկլոնիստներից:

Հասկանալի յե, վոր մենք «մարող կորագծի» տրոցկիստա-աջ ուկլոնիստական թեորիան չջախջախած՝ չեյինք կարողանա ծավալել վոչ իսկական պլանավորումը, վոչ էլ շինարարության տեմպերի բարձրացման ու ժամկետների կրճատման գործը: Կուսակցության գլխավոր գծի կենսագործումը ղեկավարելու, շինարարության հնգամյա պլանն ուղղելու և բարելավելու, շինարարության տեմպերը բարձրացնելու և սխալները կանխելու համար, ամենից առաջ պետք եր ջախջախել ու վերացնել «մարող կորագծի» ռեակցիոն թեորիան:

ԿԿ-ն, ինչպես յես ասացի վերը, այդպես էլ վարվել է:

2. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Կարելի յե կարծել, թե սոցիալիստական շինարարությունը ղեկավարելու աշխատանքը, կուսակցության գլխավոր գիծը կենսագործելու աշխատանքը մեզանում կուսակցության մեջ անցնում եր հանգիստ ու սահուն, առանց պայքարի ու առանց կամքի լարման: Բայց, ընկերներ, սա սխալ է: Իրոք այս աշխատանքն ընթացել է ներկուսակցական դժվարությունների դեմ պայքար մղելով, ինչպես ընդհանուր քաղաքականության բնագավառում, այնպես էլ ազգային հարցի բնագավառում լենինիզմից կատարվող ամեն տեսակի թեքումների դեմ պայքար մղելով: Մեր կուսակցությունն ապրում ու գործում է վոչ անօդ տարածության մեջ: Նա ապրում ու գործում է կյանքի բուն խորքում՝ յենթարկվելով շրջապատող միջավայրի ազդեցությանը: Իսկ միջավայրը մեզանում, ինչպես հայտնի յե, տարբեր դա-

սակարգերից ու սոցիալական խմբերից է բաղկացած։ Մենք ձեռնամուխ յեղանք ծավալուն հարձակմանը կապիտալիստական տարրերի դեմ, մենք շատ առաջ շարժեցինք մեր սոցիալիստական արդյունաբերությունը, մենք ծավալեցինք խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների շինարարությունը։ Բայց այսպիսի յերևույթներն եժան չեն նստի շահագործող դասակարգերի վրա։ Այս յերևույթներին սովորաբար ուղեկցում է մահացող դասակարգերի քայքայվելը, կուլակության քայքայվելը գյուղում, քաղաքի մանր-բուրժուական շերտերի գործունեության դաշտի նեղացումը։ Հասկանալի յե, վոր այս ամենը չի կարող չսրել դասակարգերի կռիվը, մահացող դասակարգերի դիմադրությունը խորհրդային իշխանության քաղաքականությանը։ Ծիծաղելի կլիներ կարծել, թե այս դասակարգերի դիմադրությունն այս կամ այն արտացոլումը չի ունենա մեր կուսակցության շարքերում։ Յեվ նա, իրոք, իր արտացոլումն է ունենում կուսակցության մեջ։ Մահացող դասակարգերի դիմադրության արտացոլումն են հանդիսանում հենց բոլոր ու ամեն տեսակի այն թեքումները լենինյան գծից, վոր կան մեր կուսակցության շարքերում։

Արդյոք կարելի՞ յե հաջող պայքար մղել դասակարգային թշնամիների դեմ՝ միաժամանակ չպայքարելով թեքումների դեմ մեր կուսակցության մեջ, չհաղթահարելով այդ թեքումները։ Վո՛չ, չի կարելի։ Չի կարելի, վորովհետև անհնարին է իսկական պայքար ծավալել դասակարգային թշնամիների դեմ՝ ունենալով թիկունքում նրանց արտացոլումը կուսակցության մեջ, թողնելով թիկունքում այնպիսի մարդկանց, վորոնք չեն հավատում մեր գործին և ամեն կերպ ջանում են արգելակել մեր առաջխաղացումը։

Այստեղից էլ՝ անհաշտ պայքար լենինյան գծից կատարվող թեքումների դեմ, վորպես կուսակցության հերթական խնդիր։

Ինչու աջ թեքումն է ներկայումս գլխավոր վտանգ հանդիսանում կուսակցության մեջ։ Վորովհետև նա արտացոլում է կուլակային վտանգը, իսկ կուլակային վտանգը տվյալ մոմենտում, ծավալուն հարձակման ու կապիտալիզմի արմատները դուրս քաշելու մոմենտում, հիմնական վտանգն է յերկրում։

ԿԿ-ն ինչ պետք է աներ, վորպեսզի հաղթահարեր աջ թեքումը, վերջ տար «ձախ» թեքմանը և մաքրեր ճանապարհը՝

կուսակցությունը լենինյան գծի շուրջը առավելագույն չափով համախմբելու համար։

ա) Ամենից առաջ հարկավոր եր վերջ տալ տրոցկիզմի մնացորդներին կուսակցության մեջ, տրոցկիստական թեորիայի մնացուկներին։ Մենք արդեն վաղուց ենք ջարդուփշուր արել ու դեն շպրտել տրոցկիստական խումբը, վորպես ոպոզիցիա։ Այժմ տրոցկիստական խումբը հակապրոլետարական ու հակախորհրդային հակահեղափոխական մի խումբ է, վորը ջանասիրաբար իրազեկ է պահում բուրժուազիային մեր կուսակցության գործերի մասին։ Բայց կուսակցությունից դեռևս լիովին չեն մաքրված տրոցկիստական թեորիայի մնացորդները, տրոցկիզմի մնացուկները։ Այսպես ահա, ամենից առաջ, պետք եր վերջ տալ այս մնացուկներին։

Ի՞նչն է տրոցկիզմի եյությունը։

Տրոցկիզմի եյությունը, ամենից առաջ, մեր յերկրի բանվոր դասակարգի ու գյուղացիության ուժերով ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը ժխտելն է։ Ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է, վոր յեթե մերձավորագույն ժամանակներում համաշխարհային հաղթական հեղափոխության ոգնությունը չհասնի, մենք պետք է անձնատուր լինենք բուրժուազիային ու մաքրենք ճանապարհը՝ բուրժուա-դեմոկրատական հանրապետության համար։ Հետևաբար՝ մենք այստեղ ունենք մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության բուրժուական ժխտում, վորը քողարկվում է համաշխարհային հեղափոխության հաղթության վերաբերյալ «հեղափոխական» ֆրազով։ Ունենալով այսպիսի հայացքներ՝ արդյոք կարելի՞ յե բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներն աշխատանքային խանդավառության, սոցիալիստական մրցակցության, մասսայական հարվածայնության, ծավալուն հարձակման հանել ընդդեմ կապիտալիստական տարրերի։ Պարզ է, վոր չի կարելի։ Հիմարություն կլիներ կարծել, վոր յերեք հեղափոխություն կատարած մեր բանվոր դասակարգն աշխատանքային խանդավառության ու մասսայական հարվածայնության կգնա, վորպեսզի հող պարարտացնի կապիտալիզմի համար։ Մեր բանվոր դասակարգը դեպի աշխատանքային վերելք է ընթանում վոչ թե կապիտալիզմի համար, այլ վորպեսզի վերջնականապես թաղի կապիտալիզմը և սոցիալիզմ կառուցի ԽՍՀՄ-ում։ Խլեցեք նրանից սոցիալիզմ կառուցելու հնարավորության նկատմամբ ունեցած վստահությու-

նք, և դուք կվոչնչացնեք ամեն մի հող մրցակցության համար, աշխատանքային վերելքի համար, հարվածայնության համար։

Այստեղից՝ եզրակացություն. բանվոր դասակարգին աշխատանքային վերելքի ու մրցակցության հանելու և ծավալուն հարձակում կազմակերպելու համար՝ ամենից առաջ հարկավոր էր թաղել տրոցկիզմի բուրժուական թեորիան մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անհնարինության մասին։

Յերկրորդ, տրոցկիզմի էությունը գյուղացիության հիմնական մասսաները գյուղի սոցիալիստական շինարարության գործի մեջ ներգրավելու հնարավորությունը ժխտելն է։ Ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է, որ բանվոր դասակարգն անզոր է իր հետևից տանելու գյուղացիությունը՝ անհատական գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվ ռելսերի վրա փոխադրելու գործում, որ յեթե մերձավորագույն ժամանակներում բանվոր դասակարգին օգնության չհասնի համաշխարհային հեղափոխության հաղթությունը, գյուղացիությունը կվերականգնի բուրժուական հին կարգերը։ Հետևաբար՝ այստեղ մենք ունենք գյուղացիությունը դեպի սոցիալիզմ տանելու համար պրոլետարական դիկտատուրայի ունեցած ուժերի ու հնարավորությունների բուրժուական ժխտում, որը քողարկված է համաշխարհային հեղափոխության հաղթության վերաբերյալ «հեղափոխական» ֆրազների դիմակով։ Այսպիսի հայացքներ ունենալով՝ արդյոք կարելի՞ յէ գյուղացիական մասսաները կոլտնտեսային շարժման հանել, կոլտնտեսային մասսայական շարժում կազմակերպել, կուլակության՝ որպես դասակարգի՝ վերացում կազմակերպել։ Պարզ է, որ չի կարելի։

Այստեղից՝ եզրակացություն. գյուղացիության կոլտնտեսային մասսայական շարժում կազմակերպելու և կուլակությունը վերացնելու համար՝ ամենից առաջ պետք էր թաղել տրոցկիզմի բուրժուական թեորիան՝ գյուղացիության աշխատավորական մասսաները սոցիալիզմին հաղորդակից դարձնելու անհնարինության մասին։

Վերջապես, տրոցկիզմի էությունը կուսակցության մեջ յերկաթե կարգապահության անհրաժեշտությունը ժխտելն է, կուսակցության մեջ ֆրակցիոն խմբավորումների ազատությունն ընդունելն է, տրոցկիստական կուսակցություն կազմելու անհրաժեշտությունն ընդունելն է։ Տրոցկիզմի համար ՀամԿ(բ)Կ պետք է լինի վո՛չ թե միասնական ու համախմբված մարտական

կուսակցություն, այլ խմբերի ու ֆրակցիաների համաքույթ՝ իրենց կենտրոններով, իրենց մամուլով և այլն։ Իսկ ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է կուսակցության մեջ հռչակել քաղաքական ֆրակցիաների ազատություն։ Այս նշանակում է, որ կուսակցության մեջ քաղաքական խմբավորումների ազատության հետևից պետք է գա քաղաքական կուսակցությունների ազատությունը յերկրում, այսինքն՝ բուրժուական դեմոկրատիա։ Հետևաբար՝ մենք այստեղ ունենք կուսակցության մեջ ֆրակցիոն խմբավորումների ազատության ընդունում ընդհուպ մինչև քաղաքական կուսակցությունների թույլատրումը պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում, ընդունում, որը քողարկված է «ներկուսակցական դեմոկրատիայի» վերաբերյալ, կուսակցության մեջ «ռեժիմը լավացնելու» վերաբերյալ ֆրազով։ Այն, որ ինտելիգենտական խմբերի ֆրակցիոն խառնակչության ազատությունը դեռևս ներկուսակցական դեմոկրատիա չէ, որ կուսակցության կողմից կիրառվող ծավալուն ինքնաքննադատությունը և կուսակցական մասսաների վիթխարի ակտիվությունը հանդիսանում են իրական ու իսկական ներկուսակցական դեմոկրատիայի արտահայտությունը,—սա տրոցկիզմին չի վիճակված հասկանալ։ Ունենալով կուսակցության մասին այսպիսի հայացքներ՝ արդյոք կարելի՞ յէ ապահովել յերկաթե կարգապահությունը կուսակցության մեջ, ապահովել կուսակցության յերկաթե միասնականությունը, որն անհրաժեշտ է դասակարգային թշնամիների դեմ հաջողությամբ պայքարելու համար։ Պարզ է, որ չի կարելի։

Այստեղից՝ եզրակացություն. կուսակցության յերկաթե միասնականությունը և պրոլետարական կարգապահությունը նրանում ապահովելու համար ամենից առաջ հարկավոր էր թաղել տրոցկիզմի կազմակերպական թեորիան։

Իրականում կապիտուլյանտություն՝ որպես բովանդակություն, «ձախ» ֆրազներ ու «հեղափոխական»-ավանտյուրիստական հակումներ՝ որպես ձև, որը քողարկում և ռեկլամում է կապիտուլյանտային բովանդակությունը — այս է տրոցկիզմի էությունը։

Տրոցկիզմի այս յերկվությունն արտացոլում է յերկակի դրությունը քաղաքային քայքայվող մանր բուրժուազիայի, որը չի հանդուրժում պրոլետարիատի դիկտատուրայի «ռեժիմը» և ձգնում է կամ «մեկեն» ցատկել սոցիալիզմի մեջ, որպեսզի

160—8

ազատվի քայքայումից (այստեղից էլ՝ ավանտյուրիզմն ու հիստերիկան քաղաքականության մեջ), կամ, յեթե այդ հնարավոր չե, հոժարել ամեն մի զիջում անելու կապիտալիզմին (այստեղից էլ՝ կապիտուլյանտություն քաղաքականության մեջ):

Տրոցկիզմի այս յերկվությամբ ե բացատրվում այն փաստը, վոր իր իբր թե «կատաղի» գրոհումներն աջ ուկլոնիստների դեմ տրոցկիզմը սովորաբար պսակում ե նրանց հետ՝ վորպես անդիմակ կապիտուլյանտների հետ՝ բլոկ կազմելով:

Իսկ ինչ են ներկայացնում «ձախ» խոտորումները, վորոնք տեղի ունեցան կուսակցության մեջ կոլտնտեսային շարժման բնագավառում: Նրանք հանդիսանում են վորոշ, ճիշտ ե, անգիտակից, փորձ՝ մեզանում պրակտիկայում վերածնելու տրոցկիզմի տրադիցիաները, վերածնելու տրոցկիստական վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը: Նրանք հետևանք են քաղաքականության մեջ կատարված այն սխալի, վորը Լենինն անվանում ե «գերվարչարարություն»: Այս նշանակում ե, վոր կոլտնտեսային շարժման հաջողություններով տարված մեր ընկերներից վոմանք կոլտնտեսային շինարարության պրոբլեմին սկսեցին մոտենալ վոչ թե վորպես կառուցողներ, այլ վորպես առավելապես վարչարարներ՝ սրա շնորհիվ թույլ տալով մի շարք կոպտագույն սխալներ:

Մեզանում կուսակցության մեջ գոյություն ունեն մարդիկ, վորոնք կարծում են, թե հարկավոր չեր «ձախ» խոտորիչների փեշը քաշել. Նրանք գտնում են, վոր հարկավոր չեր նեղացնել մեր աշխատողներին և հակազդել նրանց հրապուրվելուն, յեթե այդ հրապուրումն անգամ սխալների յե հասցրել: Սա, ընկերներ, անմտություն ե: Այսպես կարող են ասել միայն այնպիսի մարդիկ, վորոնք անպատճառ ուզում են լողալ հոսանքի ուղղությամբ: Դրանք հենց այն մարդիկ են, վորոնք յերբեք չեն կարողանա յուրացնել լենինյան գիծը—հոսանքի դեմ գնալ, յերբ այս ե պահանջում իրադրությունը, յերբ այս են պահանջում կուսակցության շահերը: Դրանք պոչականներ են, վոչ թե լենինիստներ: Կուսակցությանը հենց այն պատճառով հաջողվեց մեր ընկերների ամբողջ ջոկատներ դարձնել ճիշտ ճանապարհի վրա, կուսակցությանը հենց այն պատճառով հաջողվեց շտկել սխալները և հաջողությունների հասնել, վոր նա հանուն գլխավոր գծի կենսագործման՝ վճռապես գնաց հոսանքի դեմ: Հենց այս ե լենինիզմը պրակտիկայում, լենինիզմը ղեկավարման գործում:

Ահա թե ինչու յեմ յես կարծում, վոր, չհաղթահարելով «ձախ» խոտորումները՝ մենք չեյինք կարողանա կոլտնտեսային շարժման մեջ հասնել այն հաջողություններին, վոր այժմ ունենք:

Այսպես ե տրոցկիզմի մնացորդների ու նրանց արտահայտությունների դեմ պայքարելու բանը գործնականում:

Փոքր ինչ այլ կերպ ե աջ օպորտունիզմի հարցի բանը, աջ օպորտունիզմի, վորին գլուխ եյին կանգնած կամ կանգնած են ընկ. ընկ. Բուխարինը, Ռիկովն ու Տոմսկին:

Աջ ուկլոնիստների մասին չի կարելի ասել, թե նրանք չեն ընդունում ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը: Վոչ, նրանք այդ հնարավորությունն ընդունում են, և այս ե նրանց տարբերությունը տրոցկիստներից: Բայց աջ ուկլոնիստների դժբախտությունն այն ե, վոր, ձևականորեն ընդունելով մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, նրանք չեն ուզում ընդունել պայքարի այն ուղիներն ու միջոցները, առանց վորոնց անհնարին ե սոցիալիզմ կառուցել: Նրանք չեն ուզում ընդունել, վոր ինդուստրիայի ամենակերպ զարգացումը ժողովրդական ամբողջ տնտեսությունը սոցիալիզմի հիմունքներով փոխակերպելու բանալին ե: Նրանք չեն ուզում ընդունել դասակարգային անհաշտ կռիվը կապիտալիստական տարրերի դեմ և սոցիալիզմի ծավալուն հարձակումը կապիտալիզմի վրա: Նրանք չեն հասկանում, վոր այս բոլոր ուղիներն ու միջոցները հանդիսանում են այն միջոցառումների սիստեմը, առանց վորոնց անհնարին ե պահել պրոլետարիատի դիկտատուրան և սոցիալիզմ կառուցել մեր յերկրում: Նրանք կարծում են, թե սոցիալիզմ կարելի յե կառուցել սուսուփուս, ինքնահոսով, առանց դասակարգային կռվի, առանց կապիտալիստական տարրերի վրա հարձակվելու: Նրանք կարծում են, թե կապիտալիստական տարրերը կամ իրենք աննկատելի կմահանան, կամ կներաճեն սոցիալիզմի մեջ: Յեվ վորովհետև պատմության մեջ այդպիսի հրաշքներ չեն լինում, ուստի դուրս ե գալիս, վոր աջ ուկլոնիստները փաստորեն գլորվում են դեպի մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը ժխտող տեսակետը:

Աջ ուկլոնիստների մասին չի կարելի նաև ասել, թե նրանք ժխտում են գյուղացիության հիմնական մասսաներին գյուղում սոցիալիզմ կառուցելու գործին ներգրավելու հնարավորությունը: Վոչ, նրանք այս հնարավորությունն ընդունում են, և այս ե

Նրանց տարբերությունը տրոցկիստներից։ Բայց ձևականորեն այդ ընդունելով՝ Նրանք միաժամանակ ժխտում են այն ուղիներն ու միջոցները, առանց վորոնց անհնարին է գյուղացիության ներգրավումը սոցիալիզմի կառուցման գործի մեջ։ Նրանք չեն ուզում ընդունել, վոր խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները հանդիսանում են գյուղացիության հիմնական մասսաներին սոցիալիզմի կառուցման գործի մեջ ներգրավելու հիմնական միջոցն ու «գլխավոր ճանապարհը»։ Նրանք չեն ուզում ընդունել, վոր առանց կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը կենսագործելու՝ անկարելի յե հասնել գյուղը սոցիալիզմի հիմունքներով փոխակերպելուն։ Նրանք կարծում են, թե գյուղը կարելի յե սոցիալիզմի ռելսերի վրա փոխադրել սուսուփուս, ինքնահոսով, առանց դասակարգային կռվի, լոկ միմիայն մատակարարող-վաճառահանող կոոպերացիայի ճանապարհով, վորովհետև Նրանք համոզված են, վոր կուլակն ինքը կներաճի սոցիալիզմի մեջ։ Նրանք կարծում են, թե այժմ գլխավորը վո՛չ թե ինդուստրիայի զարգացման բարձր տեմպերն են և վո՛չ թե կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, այլ այն, վոր «սանձալույծ» անենք շուկայական տարերքը, «ազատություն տանք» շուկային և «արձակենք կապանքները» անհատական տնտեսություններից ընդհուպ մինչև գյուղի կապիտալիստական տարրերը։ Բայց վորովհետև կուլակը չի կարող ներաճել սոցիալիզմի մեջ, իսկ շուկային «ազատություն տալը» նշանակում է զինել կուլակությանը և զինաթափ անել բանվոր դասակարգին, ուստի դուրս է գալիս, վոր աջ ուկլոնիստներն իրականում գլորվում են դեպի՝ գյուղացիության հիմնական մասսաներին սոցիալիզմի կառուցման գործի մեջ ներգրավելու հնարավորությունը ժխտելու տեսակետը։

Սրանով էլ իսկապես բացատրվում այն փաստը, վոր տրոցկիստների հետ ունեցած իրենց աքլորակռիվներն աջ ուկլոնիստները սովորաբար պսակում են անդրկուլիսային բանակցություններով տրոցկիստների հետ՝ նրանց հետ բլոկ կազմելու վերաբերյալ։

Աջ ոպորտունիզմի հիմնական չարիքն այն է, վոր նա իր կապերը խզում է դասակարգային կռվի լենինյան ըմբռնման հետ ու գլորվում դեպի մանր-բուրժուական լիբերալիզմի տեսակետը։

Կասկած չի կարող լինել, վոր աջ թեքման հաղթանակը մեր կուսակցության մեջ՝ կնշանակեր բանվոր դասակարգի լիակատար

զինաթափում, կապիտալիստական տարրերի զինում գյուղում և կապիտալիզմի ռեստավրացիայի շանսերի աճում ԽՍՀՄ-ում։

Աջ ուկլոնիստները կանգնած չեն այլ կուսակցություն կազմելու տեսակետի վրա, և այդ է նրանց ելի մի տարբերությունը տրոցկիստներից։ Աջ ուկլոնիստների լիդերները բացորոշ ընդունեցին իրենց սխալները և անձնատուր յեղան կուսակցության հանդեպ։ Բայց հիմարություն կլիներ սրա հիման վրա կարծել, թե աջ թեքումն արդեն թաղված է։ Աջ ոպորտունիզմի ուժը չափվում է վոչ այս հանգամանքով։ Աջ ոպորտունիզմի ուժը մանր-բուրժուական տարերքի ուժի մեջ է, ընդհանրապես կապիտալիստական տարրերի կողմից, առանձնապես կուլակության կողմից կուսակցության դեմ ուղղված գրոհի ուժի մեջ է։ Յեվ հենց այն պատճառով, վոր աջ թեքումն արտացոլում է մահացող դասակարգերի հիմնական տարրերի դիմադրությունը, այս իսկ պատճառով էլ աջ թեքումը մեր ժամանակի գլխավոր վտանգն է կուսակցության մեջ։

Ահա թե ինչու կուսակցությունն անհրաժեշտ համարեց վճռական ու անհաշտ պայքար մղել աջ թեքման դեմ։

Կասկած չի կարող լինել, վոր առանց վճռական պայքար մղելու ընդդեմ աջ թեքման, առանց մեկուսացնելու նրա ղեկավար տարրերին, մենք չեյինք կարողանա հասնել կուսակցության ու բանվոր դասակարգի ուժերի մոբիլիզացիային, չքավորության ու գյուղացիության միջակ մասսաների մոբիլիզացիային՝ սոցիալիզմի ծավալուն հարձակման գործի համար, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների կազմակերպման գործի համար, մեր ծանր ինդուստրիայի վերականգնման գործի համար, կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման գործի համար։

Այսպես է կուսակցության միջի «ձախ» ու աջ թեքումների բանը։

Խնդիրն այն է, վոր առաջիկայում էլ շարունակենք անհաշտ պայքարը յերկու ճակատով, ինչպես «ձախերի» դեմ, վորոնք մանր-բուրժուական ռադիկալիզմն են ներկայացնում, այնպես էլ աջերի դեմ, վորոնք մանր-բուրժուական լիբերալիզմն են ներկայացնում։

Խնդիրն այն է, վոր առաջիկայում էլ շարունակենք անհաշտ պայքարը կուսակցության միջի այն հաշտվողական տարրերի դեմ, վորոնք չեն հասկանում կամ ձևացնում են թե չեն հաս-

կանում յերկու ճակատով վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը։

բ) Կուսակցության միջի թեքումների դեմ պայքարելու պատկերը լրիվ չի լինի, յեթե մենք չշոշափենք կուսակցության մեջ ազգային հարցի բնագավառում գոյություն ունեցող թեքումները։ Ցես նկատի ունեմ, նախ, թեքումը դեպի վելիկոռուսական շովինիզմը և, յերկրորդ, թեքումը դեպի տեղական նացիոնալիզմը։ Այս յերկու թեքումներն այնքան նկատելի և համառ չեն, վորքան «ձախ» կամ աջ թեքումները։ Նրանց կարելի յեր անվանել սողացող թեքումներ։ Բայց դա դեռ չի նշանակում, վոր նրանք գոյություն չունեն։ Վոչ, նրանք գոյություն ունեն և, վոր գլխավորն է, աճում են։ Այս մասին վոչ մի կասկած չի կարող լինել։ Կասկած չի կարող լինել, քանի վոր դասակարգային կռվի սրման ընդհանուր մթնոլորտը չի կարող չտանել դեպի ազգային բաղխումների վորոշ սրում, բաղխումներ, վորոնք իրենց արտացոլումն ունեն կուսակցության մեջ։ Ուստի և հարկ էր բաց անել և լույս աշխարհ հանել այդ թեքումների կերպարանքը։

Վո՞րն է դեպի վելիկոռուսական շովինիզմը յեղած թեքման եյությունը մեր ժամանակակից պայմաններում։

Դեպի վելիկոռուսական շովինիզմը յեղած թեքման եյությունը՝ լեզվի, կուլտուրայի, կենցաղի ազգային տարբերությունները զանց առնելու ձգտումն է. ազգային հանրապետությունների ու մարզերի վերացումը նախապատրաստելու ձգտումն է. ազգային իրավահավասարության սկզբունքը խախտելու և ապարատն ազգայնացնելու, մամուլը, դպրոցը և պետական ու հասարակական այլ կազմակերպություններն ազգայնացնելու վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը պսակազերծ անելու ձգտումն է։

Այս տիպի ուկլոնիստներն ընդմին յելնում են նրանից, թե, քանի վոր սոցիալիզմի հաղթության դեպքում ազգերը պետք է ի մի ձուլվեն, իսկ նրանց ազգային լեզուները պետք է վերածվեն միասնական մի ընդհանուր լեզվի, ապա հասել է ժամանակը, վորպեսզի վերացնենք ազգային տարբերությունները և հրաժարվենք առաջներում ճնշված ժողովուրդների ազգային կուլտուրայի զարգացմանն աջակցելու քաղաքականությունից։ Ընդմին՝ նրանք վկայակոչում են Լենինին՝ ցիտատ բերելով նրանից սխալ կերպով, իսկ յերբեմն էլ ուղղակի խեղաթյուրելով

ու գրպարտելով Լենինին։ Լենինն ասել է, վոր սոցիալիզմի մեջ ազգությունների շահերն ի մի ամբողջություն կձուլվեն. արդյոք սրանից չի՞ հետևում, թե ժամանակ է վերջ տալու ազգային հանրապետություններին ու մարզերին հօգուտ... ինտերնացիոնալիզմի։ Լենինը 1913 թ. բունդականների հետ բանավիճելիս ասել է, վոր ազգային կուլտուրայի լոզունգը բուրժուական լոզունգ է. արդյոք սրանից չի՞ հետևում, թե ժամանակ է վերջ տալու ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրային հօգուտ... ինտերնացիոնալիզմի։ Լենինն ասել է, վոր ազգային կեղեքումը և ազգային միջնապատերը սոցիալիզմի ժամանակ վոչնչանում են. արդյոք սրանից չի՞ հետևում, վոր ժամանակ է վերջ տալու ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու քաղաքականությանը և անցնելու ասիմիլյացիայի քաղաքականությանը հօգուտ... ինտերնացիոնալիզմի։ Ցեվ այլն և այլն։

Կասկած չի կարող լինել, վոր ազգային հարցում այս թեքումը, վորը ընդմին քողարկվում է ինտերնացիոնալիզմի դիմակով ու Լենինի անունով, վելիկոռուսական նացիոնալիզմի ամենանրբերին և այս պատճառով ամենավտանգավոր տեսակն է։

Նախ, Լենինը յերբեք չի ասել, թե ազգային տարբերությունները պետք է անհետանան, իսկ ազգային լեզուները պետք է ձուլվեն վորպես մի ընդհանուր լեզու մեկ պետության սահմաններում, մինչև սոցիալիզմի հաղթությունը համաշխարհային մասշտաբով։ Լենինը, ընդհակառակը, ասել է ուղղակի հակադիր մի բան, այն է, թե «ազգային ու պետական տարբերությունները ժողովուրդների ու յերկրների միջև... մնալու յեն դեռ շատ ու շատ յերկար ժամանակ, մինչև անգամ պրոլետարիատի դիկտատուրան համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո»[1] (հ. XXV, եջ 229)։ Ի՞նչպես կարելի յե վկայակոչել Լենինին՝ մոռանալով նրա այս հիմնական ցուցումի մասին։

Ճշմարիտ է, նախկին մարքսիստներից մեկը, իսկ ներկայումս ռենեգատ ու ռեֆորմիստ, պ. Կաուցկին պնդում է ուղղակի հակադիրը այն բանի, ինչ Լենինն է մեզ ուսուցանում։ Նա, հակառակ Լենինի, պնդում է, թե պրոլետարական հեղափոխության հաղթությունն ավստրո-հունգարական միավորյալ պետության մեջ անցյալ դարի կեսերին կհանգեցներ գերմաններեն մի ընդհանուր լեզվի գոյացմանը և չեխերի գերմանացմանը, քանի

[1] Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.:

վոր՝ «կաչկանդումից ազատագրված փոխանակության ուժը միմիայն, արդի կուլտուրայի ուժը միմիայն, կուլտուրայի, վորը բերել են իրենց հետ գերմանացիները, առանց վորևե բանի գերմանացման գերմանացիներ կդառնեին չեխական հետամնաց մանր բուրժուաների, գյուղացիների ու պրոլետարների, վորոնց վոչինչ չեր կարողանում տալ նրանց լղարիկ ազգությունը» (տես «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» գրքի գերմաներեն հրատարակության առաջաբանը)։ Հասկանալի յե, վոր այսպիսի «կոնցեպցիան» միանգամայն ներդաշնակում ե Կաուցկու սոցիալ-շովինիզմի հետ։ Կաուցկու հենց այս հայացքների դեմ եմ յես պայքարել 1925 թ. իմ ելույթով Արևելքի ժողովուրդների համալսարանում։ Բայց միթե մեզ, մարքսիստներիս համար, վոր կամենում ենք մինչև վերջն ինտերնացիոնալիստներ մնալ, վորևե դրական նշանակություն կարող ե ունենալ չափը կորցրած գերմանական սոցիալ-շովինիստի այս հակամարքսիստական շաղակրատությունը։ Ո՞վ ե իրավացի,—Կաուցկի՞ն, թե Լենինը։ Յեթե Կաուցկին ե իրավացին, այն ժամանակ ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր համեմատաբար այնպիսի հետամնաց ազգությունները, ինչպիսիք են բելոռուսներն ու ուկրաինացիները, վորոնք վելիկոռուսներին ավելի յեն մոտիկ, քան չեխերը գերմանացիներին, ԽՍՀՄ-ում պրոլետարական հեղափոխությունը հաղթանակելու հետևանքով վո՛չ թե ռուսացան, այլ, ընդհակառակը, վերածնվեցին ու զարգացան իբրև ինքնուրույն ազգեր։ Ինչո՞վ բացատրել, վոր այնպիսի ազգեր, ինչպիսիք են թուրքմենները, կիրգիզները, ուզբեկները, տաջիկները (չխոսելով արդեն վրացիների, հայերի, ադրբեջանցիների և այլոց մասին), չնայած իրենց հետամնացությանը, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթության կապակցությամբ վո՛չ միայն չռուսացան, այլ, ընդհակառակը, վերածնվեցին ու զարգացան վորպես ինքնուրույն ազգեր։ Արդյոք պարզ չե՞, վոր մեր հարգելի ուկլոնիստները, ցուցական ինտերնացիոնալիզմի հետևից ընկնելով, կաուցկիական սոցիալ-շովինիզմի ճանկերն են ընկել։ Արդյոք պարզ չե՞, վոր, մաքառելով մեկ ընդհանուր լեզվի համար մեկ պետության սահմաններում, ԽՍՀՄ-ի սահմաններում, ըստ բանի եյության նրանք ձգտում են վերականգնելու առաջներում տիրապետած լեզվի, այն ե՝ վելիկո-ռուսական լեզվի արտոնությունները։ Ել այստեղ ո՞ւր ե ինտերնացիոնալիզմը։

Յերկրորդ, Լենինը յերբեք չի ասել, թե ազգային ճնշման

վոչնչացումը և ազգությունների շահերի ձուլումը ի մի ամբողջություն հավասարազոր ե ազգային տարբերությունների վոչնչացմանը։ Մենք վոչնչացրինք ազգային ճնշումը, մենք վոչընչացրինք ազգային արտոնությունները ու ազգային իրավահավասարություն հաստատեցինք։ Մենք վոչնչացրինք բառի հին իմաստով վերցրած պետական սահմանները, սահմանաբաժան սյուները և մաքսային արգելքները ԽՍՀՄ-ի ազգությունների միջև։ Մենք հաստատեցինք ԽՍՀՄ-ի ժողովուրդների տնտեսական ու քաղաքական շահերի միասնականությունը։ Բայց արդյոք այս նշանակո՞ւմ ե, թե մենք դրանով իսկ վոչնչացրինք ազգային տարբերությունները, ազգային լեզուները, կուլտուրան, կենցաղը և այլն։ Պարզ ե, վոր չի նշանակում։ Բայց յեթե ազգային տարբերությունները,—լեզուն, կուլտուրան, կենցաղը և այլն,—մնում են, արդյոք պարզ չե՞, վոր ազգային հանրապետությունները և մարզերը տվյալ պատմական ժամանակաշրջանում վոչընչացնելու պահանջը մի ռեակցիոն պահանջ ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի շահերի դեմ ե ուղղված։ Արդյոք հասկանո՞ւմ են մեր ուկլոնիստները, վոր այժմ վոչնչացնել ազգային հանրապետություններն ու մարզերը՝ այդ նշանակում ե ԽՍՀՄ-ի ժողովուրդների միլիոնավոր մասսաներին զրկել մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից, նրանց զրկել՝ մայրենի լեզվով դպրոց, դատարան, ադմինիստրացիա, հասարակական ու այլ կազմակերպություններ ու հիմնարկներ ունենալու հնարավորությունից, նրանց զրկել սոցիալիստական շինարարությանը հաղորդակից լինելու հնարավորությունից։ Արդյոք պարզ չե՞, վոր ցուցական ինտերնացիոնալիզմի հետևից ընկնելով՝ մեր ուկլոնիստներն ընկել են վելիկոռուսական ռեակցիոն շովինիստների ճանկերը և մոռացել, բոլորովին մոռացել են պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի կուլտուրական հեղափոխության լոզունգի մասին, վորը միևնույն ուժն ունի ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների համար, թե՛ վելիկոռուսների, թե՛ վոչ-վելիկոռուսների համար։

Յերրորդ, Լենինը յերբեք չի ասել, թե պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ազգային կուլտուրան զարգացնելու լոզունգը ռեակցիոն լոզունգ ե։ Ընդհակառակը, Լենինը միշտ կողմնակից ե յեղել այն բանին, վոր օգնենք ԽՍՀՄ-ի ժողովուրդներին իրենց ազգային կուլտուրան զարգացնելու։ Լենինի, և վոչ թե մի ուրիշի ղեկավարությամբ եր, վոր կազմվեց և

կուսակցության X համագումարում ընդունվեց ազգային հարցի վերաբերյալ այն բանաձևը, վորտեղ ուղղակի ասվում ե, վոր

«Կուսակցության խնդիրն այն ե, վոր ոգնի վոչ-վելիկոռուսական ժողովուրդների աշխատավորական մասսաներին՝ հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին, ոգնի նրանց՝ ա) զարգացնելու և ամրացնելու իրենց մոտ խորհրդային պետականությունն այն ձևերով, վորոնք համապատասխանում են այդ ժողովուրդների ազգային-կենցաղային պայմաններին. բ) զարգացնելու և ամրացնելու իրենց մոտ մայրենի լեզվով գործող դատարան, ադմինիստրացիա, տնտեսության որգաններ, իշխանության որգաններ՝ բաղկացած տեղական բնակչության կենցաղն ու հոգեբանությունն իմացող տեղական մարդկանցից. գ) զարգացնելու իրենց մոտ մայրենի լեզվով՝ մամուլ, դպրոց, թատրոն, ակմբային գործ և առհասարակ կուլտուր-լուսավորական հիմնարկներ. դ) կազմակերպելու և զարգացնելու մայրենի լեզվով՝ ինչպես հանրակրթական, այնպես և արհեստագիտական-տեխնիկական բնույթի դասընթացների ու դպրոցների լայն ցանց»:

Պարզ չե՞ արդյոք, վոր Լենինն ամբողջովին ու լիովին կողմնակից ե՝ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ազգային կուլտուրա զարգացնելու լոզունգին:

Մի՞թե պարզ չե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ազգային կուլտուրայի լոզունգը ժխտելը՝ նշանակում ե ժխտել ԽՍՀՄ-ի վոչ-վելիկոռուս ժողովուրդների կուլտուրական վերելքի անհրաժեշտությունը, ժխտել այդ ժողովուրդների համար հանրապարտադիր կրթության անհրաժեշտությունը, հանձնել այդ ժողովուրդները հոգևոր ստրկացման՝ ռեակցիոն նացիոնալիստներին:

Լենինը, իրոք, բուրժուազիայի տիրապետության ժամանակ ազգային կուլտուրայի լոզունգը վորակել ե վորպես ռեակցիոն լոզունգ: Բայց արդյոք կարո՞ղ եր այլ կերպ լինել: Ի՞նչ բան ե ազգային կուլտուրան ազգային բուրժուազիայի տիրապետության ժամանակ: Բուրժուականը՝ ըստ իր բովանդակության և ազգային՝ ըստ իր ձևի մի կուլտուրա, վորը նպատակ ունի մասսաներին թունավորելու նացիոնալիզմի թույնով և ամրացնելու

բուրժուազիայի տիրապետությունը: Ի՞նչ բան ե ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ: Սոցիալիստականը՝ ըստ իր բովանդակության և ազգային՝ ըստ ձևի մի կուլտուրա, վորը նպատակ ունի մասսաներին դաստիարակելու ինտերնացիոնալիզմի վոգով և ամրացնելու պրոլետարիատի դիկտատուրան: Ի՞նչպես կարելի յե շփոթել այս յերկու՝ սկզբունքորեն տարբեր յերևույթները՝ չխզելով կապերը մարքսիզմի հետ: Մի՞թե պարզ չե, վոր, պայքարելով ազգային կուլտուրայի լոզունգի դեմ բուրժուական կարգերում, Լենինը հարվածում եր ազգային կուլտուրայի բուրժուական բովանդակությանը, և վոչ թե նրա ազգային ձևին: Հիմարություն կլիներ յենթադրել, թե Լենինը սոցիալիստական կուլտուրան դիտում եր վորպես ապազգային մի կուլտուրա, վորը չունի այս կամ այն ազգային ձևը: Բունդականները, իրոք, մի ժամանակ Լենինին վերագրում եյին այս անմտությունը: Բայց Լենինի յերկերից հայտնի յե, վոր նա կտրականապես բողոքում եր այսպիսի զրպարտության դեմ՝ վճռապես սահմանազատվելով այսպիսի անմտությունից: Մի՞թե մեր հարգելի ուկլոնիստներն իսկապես քարշ յեկան բունդականների հետքերով:

Ել ի՞նչ մնաց այս ամեն ասվածից հետո մեր ուկլոնիստների փաստարկներից:

Վոչինչ, բացի ինտերնացիոնալիզմի դրոշով ժոնգլյորություն անելուց և Լենինին զրպարտելուց:

Վելիկոռուսական շովինիզմի կողմը թեքվողները խորապես սխալվում են՝ կարծելով, թե սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը ԽՍՀՄ-ում՝ ազգային կուլտուրաների քայքայման ու վերացման ժամանակաշրջան ե: Բանը հենց դրա հակառակն ե: Իրականում պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը ԽՍՀՄ-ում ազգային կուլտուրաների,—բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների—ծաղկման ժամանակաշրջան ե: Նրանք, ակնհայտ ե, չեն հասկանում, վոր ազգային կուլտուրաների զարգացումը՝ մայրենի լեզվով հանրապարտադիր սկզբնական կրթություն մտցնելով ու արմատացնելով՝ պետք ե նոր ուժով ծավալվի: Նրանք չեն հասկանում, վոր ազգային կուլտուրաները զարգացնելու պայմանով միայն կարելի կլինի հետամնաց ազգություններին ինչպես հարկն ե հաղորդակից դարձնել սոցիալիստական շինարարության գործին: Նրանք չեն հասկանում,

որ հենց այս է ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրաների զարգացմանն օգնելու և աջակցելու լենինյան քաղաքականության հիմքը։

Կարող է տարօրինակ թվալ, որ մենք, ազգային կուլտուրաների՝ մի ընդհանուր լեզու ունեցող (թե ըստ ձևի և թե ըստ բովանդակության) մի ընդհանուր կուլտուրայի մեջ ապագայում ձուլվելու կողմնակիցներս, միաժամանակ կողմնակից ենք ազգային կուլտուրաների ծաղկմանն տվյալ մոմենտում, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում։ Բայց սրա մեջ ոչ մի տարօրինակ բան չկա։ Պետք է հնարավորություն տալ, որ ազգային կուլտուրաները զարգանան ու ծավալվեն՝ դրսևորելով իրենց ներունակությունները, որպեսզի պայմաններ ստեղծենք՝ մի ընդհանուր լեզու ունեցող մի ընդհանուր կուլտուրայի մեջ նրանց ձուլվելու համար։ Ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների ծաղկում մեկ երկրում պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում՝ մի ընդհանուր լեզու ունեցող (թե ըստ ձևի և թե ըստ բովանդակության) մի ընդհանուր սոցիալիստական կուլտուրայի մեջ ձուլվելու համար, երբ պրոլետարիատն ամբողջ աշխարհում կհաղթի, և սոցիալիզմը կմտնի կենցաղի մեջ,—հենց այս է ազգային կուլտուրայի լենինյան հարցադրման դիալեկտիկականությունը։

Կարող են ասել, թե այսպիսի հարցադրումը «հակասական է»։ Բայց միթե նույնպիսի «հակասականություն» չկա մեզանում պետության հարցի նկատմամբ։ Մենք պետության մահացման կողմնակից ենք։ Եվ մենք միաժամանակ կողմնակից ենք, որ ուժեղացվի պրոլետարիատի դիկտատուրան, որը մինչև այժմ գոյություն ունեցող պետական իշխանությունների մեջ ամենահուժկու և ամենահզոր իշխանությունն է։ Պետական իշխանության բարձրագույն զարգացում՝ պետական իշխանության մահացման համար պայմաններ նախապատրաստելու նպատակով,—ահա մարքսիստական ֆորմուլան։ Սա «հակասակա՞ն» է։ Այո, «հակասական» է։ Բայց այս հակասությունը կենսական է, և նա ամբողջովին արտացոլում է մարքսյան դիալեկտիկան։

Կամ, օրինակ, ազգերի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատումը՝ իրավունքի լենինյան հարցադրումը։ Լենինն ազգային ինքնորոշման թեզիսը երբեմն պատկերում էր մի պարզ ֆորմուլայի ձևով—«անջատում միավորման համար»։ Դուք մեկ մտածեցեք—անջատում միավորման համար։ Սա նույնիսկ պարադոքս

է թվում։ Այնինչ այս «հակասական» ֆորմուլան արտացոլում է մարքսյան դիալեկտիկայի այն կենսական ճշմարտությունը, որ բոլշևիկներին հնարավորություն է տալիս ազգային հարցի բնագավառում վերցնելու ամենաանառիկ ամրոցները։

Նույն այդ բանը պետք է ասել ազգային կուլտուրայի վերաբերյալ ֆորմուլայի մասին. պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում ազգային կուլտուրաների (և լեզուների) ծաղկում մեկ երկրում՝ նպատակ ունենալով նրանց մահացման և մեկ ընդհանուր սոցիալիստական կուլտուրայի (ու մեկ ընդհանուր լեզվի) մեջ նրանց ձուլվելու համար պայմաններ նախապատրաստել՝ ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթելու ժամանակաշրջանում։

Ով չի հասկացել մեր անցման ժամանակի այս յուրօրինակությունը և «հակասականությունը», ով չի հասկացել պատմական պրոցեսների այս դիալեկտիկան, նա կորած է մարքսիզմի համար։

Մեր ուկլոնիստների դժբախտությունն այն է, որ նրանք չեն հասկանում և չեն ուզում հասկանալ մարքսյան դիալեկտիկան։

Այսպես է դեպի վելիկոռուսական շովինիզմը յեղած թեքման բանը։

Դժվար չէ հասկանալ, որ այս թեքումն արտահայտում է առաջներում տիրապետող վելիկոռուսական ազգի մահացող դասակարգերի՝ կորցրած արտոնությունները իրենց վերադարձնելու ձգտումը։

Այստեղից էլ՝ վելիկոռուսական շովինիզմի վտանգը, որպես կուսակցության մեջ գլխավոր վտանգ ազգային հարցի բնագավառում։

Ո՞րն է դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքման էությունը։

Դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքման էությունն առանձնանալու և իր ազգային կեղևի շրջանակներում փակվելու ձգտումն է, իր ազգի ներսում դասակարգային հակասությունները քողարկելու ձգտումն է, սոցիալիստական շինարարության ընդհանուր հորձանքից հեռանալու միջոցով վելիկոռուսական շովինիզմից պաշտպանվելու ձգտումն է, ձգտումն՝ չտեսնելու այն, ինչ մոտեցնում ու միացնում է ԽՍՀՄ-ի ազգությունների աշ-

խատավորական մասսաներին, և տեսնելու միայն այն, ինչ կարող է նրանց միմյանցից հեռացնել։

Դեպի տեղական նացիոնալիզմը չեղած թեքումն արտացոլում է առաջներում ճնշված ազգերի մահացող դասակարգերի դժգոհությունը պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմից, իրենց ազգային պետության մեջ առանձնանալու և այնտեղ իրենց դասակարգային տիրապետությունը հաստատելու ձգտումը։

Այս թեքման վտանգն այն է, որ նա պատվաստում է բուրժուական նացիոնալիզմ, թուլացնում է ԽՍՀՄ-ի աշխատավոր ժողովուրդների միասնականությունը և ծառայում է ինտերվենցիոնիստների շահերին։

Այս է դեպի տեղական նացիոնալիզմը չեղած թեքման էյությունը։

Կուսակցության անելիքն այն է, որ վճռական պայքար մղի այս թեքման դեմ և ապահովի այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են ԽՍՀՄ-ի ժողովուրդների աշխատավորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության համար։

Այսպես է մեր կուսակցության մեջ չեղած թեքումների՝ «ձախ» ու աջ թեքումների բանն ընդհանուր քաղաքականության բնագավառում, այն թեքումների, որ կան ազգային հարցի բնագավառում։

Այս է մեր ներկուսակցական դրությունը։

Այժմ, երբ կուսակցությունը հաղթող դուրս եկավ գլխավոր գծի համար մղած պայքարից, երբ մեր կուսակցության լենինյան գիծը հաղթանակում է ամբողջ ճակատով, շատերը հակված են մոռանալու այն դժվարությունները, որ մեր աշխատանքի մեջ մեզ համար ստեղծում էին բոլոր ու ամեն տեսակի ուկլոնիստները։ Դեռ ավելին. քաղքենիորեն տրամադրված միքանի ընկերներ մինչև այժմ էլ կարծում են, թե կարելի յեր յոլա գնալ առանց ուկլոնիստների դեմ պայքարելու։ Ինչ ասել կուզի, որ այդ ընկերները խորը մոլորության մեջ են։ Բավական է միայն հետ նայել և մտաբերել տրոցկիստների ու աջ ուկլոնիստների սխրագործությունների (художество) մասին, բավական է միայն մտաբերել թեքումների դեմ անցած ժամանակաշրջանում մղած պայքարի պատմությունը, որպեսզի հասկանանք կուսակցական այս քաղքենիականության ամբողջ դատարկությունն ու անպետքությունը։ Կասկած չի կարող լինել, որ, յեթե չսանձահարեյինք ուկլոնիստներին ու նրանց չջախ-

ջախեյինք բաց մարտում, մենք չեյինք կարողանա հասնել այն հաջողություններին, որոնցով մեր կուսակցությունն իրավամբ հպարտանում է այժմ։

Լենինյան գծից կատարված թեքումների դեմ պայքարելով է աճել ու ամրապնդվել մեր կուսակցությունը։ Թեքումների դեմ մղած պայքարում է նա դարբնել իր համար իր շարքերի լենինյան միասնականությունը։ Այժմ վոչ վոք արդեն չի ժխտում այն անվիճելի փաստը, որ կուսակցությունը դեռ յերբեք այնպես համախմբված չի յեղել իր ԿԿ-ի շուրջը, ինչպես այժմ։ Բոլորն այժմ հարկադրված են ընդունելու, որ կուսակցությունն այժմ ավելի, քան յերբեք, միասնական ու համախմբված է, որ XVI համագումարը մեր կուսակցության այն սակավաթիվ համագումարներից մեկն է, որտեղ այլևս չկա ձևավորված ու համախմբված ոպոզիցիա, որն ընդունակ լիներ իր ուրույն գիծը հակադրելու կուսակցության գլխավոր գծին։

Ի՞նչ բանի յե պարտական կուսակցությունն իր այս վճռական նվաճումը։

Այս նվաճումը նա պարտական է այն հանգամանքին, որ թեքումների դեմ մղած իր պայքարում նա միշտ վարել է սկզբունքային քաղաքականություն՝ յերբեք չիջնելով մինչև անդրկուլիսային կոմբինացիաներն ու դիվանագիտական գեշեֆտմախերությունը։

Լենինն ասում էր, որ սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է։ Թեքումների դեմ մղած պայքարից մենք հաղթող դուրս յեկանք այն պատճառով, որ ազնվորեն ու հետևողականորեն կատարում եյինք Լենինի այս պատգամը։ (Ծափահարություններ)։

* * *

Յես վերջացնում եմ, ընկերներ։

Վո՞րն է ընդհանուր յեզրակացությունը։

Անցած ժամանակաշրջանում սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում մենք մի շարք վճռական հաջողություններ ունեցանք։ Այս հաջողությունները մենք ունեցանք այն պատճառով, որ կարողացանք բարձր պահել Լենինի վսեմ դրոշը։ Յեթե հաղթել ենք ուզում, մենք առաջիկայում էլ պետք է բարձր պահենք Լենինի դրոշը՝ պահպանելով նրա մաքրությունն ու անբծությունը։ (Ծափահարություններ)։

Այս է ընդհանուր յեզրակացությունը։

Լենինի դրոշով մենք հաղթեցինք հանուն Հոկտեմբերյան հեղափոխության մղած մարտերում։

Լենինի դրոշով մենք վճռողական հաջողությունների հասանք հանուն սոցիալիստական շինարարության հաղթանակի մղվող պայքարում։

Այս իսկ դրոշով կհաղթենք պրոլետարական հեղափոխության մեջ ամբողջ աշխարհում։

Կեցցե լենինիզմը։ (Վորոտընդոստ, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ։ Ովացիաներ ամբողջ դահլիճում)։

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Ընկերնե՛ր։ ԿԿ-ի հաշվետվության առթիվ յեղած վիճաբանություններից հետո, այն բանից հետո, ինչ մեզանում տեղի ունեցավ համագումարում աջ ոպոզիցիայի նախկին լիդերների յելույթի կապակցությամբ, իմ յեզրափակման խոսքում ինձ քիչ բան է մնում ասելու։

Իմ զեկուցման մեջ յես ասացի, վոր կուսակցության XVI համագումարը մեր կուսակցության պատմության մեջ այն սակավաթիվ համագումարներից մեկն է, վորտեղ չկա փոքրիշատե ձևավորված մի ոպոզիցիա, վորը կարողանար հանդես բերել իր սեփական գիծը և այն հակադրել կուսակցության գծին։ Այս, ինչպես տեսնում եք, իրականում հենց այդպես էլ դուրս յեկավ։ Մեր համագումարում, կուսակցության XVI համագումարում, չեղավ վոչ միայն ձևավորված ոպոզիցիա, այլև չգտնվեց նույնիսկ մի փոքր խումբ կամ նույնիսկ առանձին ընկերներ, վորոնք որինաչափ համարեյին այստեղ ամբիոն յելնել ու հայտարարել կուսակցության գծի սխալ լինելու մասին։ Պարզ է, վոր մեր կուսակցության գիծը միակ ճիշտ գիծն է, ըստվորում նրա ճիշտ լինելը, բանից դուրս է գալիս, այնքան ակներև ու անվիճելի յե, վոր նույնիսկ աջ ոպոզիցիայի նախկին լիդերները հարկավոր համարեցին իրենց յելույթներում առանց տատանումների ընդգծել կուսակցության ամբողջ քաղաքականության ճիշտ լինելը։

Հասկանալի յե, վոր այս ամենից հետո կարիք չկա ընդարձակաբանելու այն դրույթների ճիշտ լինելու մասին, վոր դարգացվեցին հաշվետու զեկուցման մեջ։ Այդ բանի կարիքը չկա, քանի վոր կուսակցության գիծը, նրա ակներևորեն ճիշտ լինելու շնորհիվ, հետևաբար, իր հետագա պաշտպանության կարիքը չունի այս համագումարում։ Յեվ յեթե, չնայած դրան, յես

160—9.

չհրաժարվեցի յեզրափակման խոսքից, ապա այս այն պատճա-
ռով է, որ, այնուամենայնիվ, ըստ իս, ավելորդ չէ հակիրճ պա-
տասխանել միքանի հարցատոմսերի, որ ընկերները տվել են
համագումարի նախագահությանը, և հետո միքանի խոսք ասել՝
աջ ոպոզիցիայի նախկին լիդերների յելույթի կապակցու-
թյամբ:

Հարցատոմսերի մեծ մասը միքանի յերկրորդական հարցերի
յե վերաբերում. ինչու հաշվետու զեկուցումներում չի հիշատակ-
ված ձիաբուծության մասին,—արդյոք չի՞ կարելի այս մասին
հիշատակել յեզրափակման խոսքում (ծիծաղ). ինչու հաշվետու
զեկուցումների մեջ չի հիշատակված բնակարանային շինարա-
րության մասին,—արդյոք չի՞ կարելի սրա մասին մի բան ասել
յեզրափակման խոսքում. ինչու հաշվետու զեկուցումների մեջ
վոչինչ չի ասված գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիայի մա-
սին,—արդյոք չի՞ կարելի սրա մասին վորևե բան ասել յեզրա-
փակման խոսքում: Յեվ այլն՝ այդ վոգով:

Յես բոլոր այս ընկերներին պետք է պատասխանեմ, վոր իմ
զեկուցման մեջ յես չեյի կարող շոշափել ժողովրդական տնտե-
սության բոլոր հարցերը: Յեվ վոչ միայն չեյի կարող, այլև դրա
իրավունքն էլ չունեյի, վորովհետև յես իրավունք չունեմ խու-
ժելու ընկ. ընկ. Կույբիշևի և Յակովլևի զեկուցումների բնագա-
վառը, վորոնք ձեզ պետք է զեկուցեն արդյունաբերության ու
գյուղատնտեսության կոնկրետ պրոբլեմների մասին: Իսկապես
վոր, յեթե ԿԿ-ի զեկուցման մեջ շոշափենք բոլոր հարցերը, ապա
այն ժամանակ այլևս ինչի՞ մասին պետք է խոսեն զեկուցողները
իրենց զեկուցումներում արդյունաբերության մասին, գյուղա-
տնտեսության մասին և այլն: (Ձայներ—«Ճի՛շտ է»):

Մասնավորապես գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիային
վերաբերող հարցատոմսի մասին պետք է նկատեմ, վոր այս հար-
ցատոմսի հեղինակը միքանի անճշտություններ է թույլ տալիս:
Նա հավատացնում է, թե մենք արդեն «ընդհուպ մոտեցել ենք»
գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիային, թե Հողժողկոմատը
չի թողնում, վոր այս գործը զարգանա, թե Լենինն այս մասին
այլ կերպ եր մտածում և այլն: Այս ամենը, ընկերներ, սխալ է:
Չի կարելի ասել, թե մենք «ընդհուպ մոտեցել ենք» գյուղատըն-
տեսության ելեկտրիֆիկացիայի գործին: Յեթե վոր մենք, իրոք,
ընդհուպ մոտեցած լինեյինք գյուղատնտեսության ելեկտրիֆիկա-

ցիային, ապա մենք արդեն այժմ կունենայինք մի 10—15 շրջան
ելեկտրիֆիկացված գյուղատնտեսական արտադրությամբ: Բայց
դուք լավ գիտեք, վոր առայժմ նման վոչ մի բան մենք չունենք:
Այն ամենը, ինչ այժմ կարելի յե ասել գյուղատնտեսության
ելեկտրիֆիկացիայի մասին, այդ այն է, վոր ելեկտրիֆիկացիան
մեզանում գտնվում է փորձնական մշակման ստադիայում: Լե-
նինն այսպես էլ նայում եր այդ գործին՝ խրախուսելով գյուղա-
տնտեսության ելեկտրիֆիկացիայի վերաբերյալ փորձերը: Ըն-
կերներից վոմանք կարծում են, թե տրակտորներն արդեն ապ-
րել են իրենց դարը, թե հասել է ժամանակը տրակտորներից
գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիային անցնելու: Իհարկե,
սա ցնդաբանություն ու ֆանտաստիկա յե: Այդպիսի ընկերների
փեշը պետք է քաշել: Հողժողկոմատը հենց այդպես էլ վարվում
է այս ընկերների հետ: Հետևաբար, հարցատոմսի հեղինակի դըժ-
գոհությունը Հողժողկոմատից՝ չի կարելի հիմնավորված համարել:

Հարցատոմսերի յերկրորդ խումբը վերաբերում է ազգային
հարցին: Այդ հարցատոմսերից մեկը, վորը յես ամենից ավելի
հետաքրքրականն եմ համարում, XVI համագումարում արած
իմ զեկուցման մեջ ազգային լեզուների պրոբլեմին վերաբերող
մեկնաբանությունը զուգադրում է այն մեկնաբանությանը, վորը
տրված է իմ յելույթի մեջ Արևելքի ժողովուրդների համալսա-
րանում 1925 թ., ու գտնում է, վոր այստեղ վորոշ անպարզու-
թյուն կա, վորը պետք է պարզաբանվի: «Դուք,—ասում է հար-
ցատոմսը,—այն ժամանակ առարկում եյիք սոցիալիզմի ժա-
մանակաշրջանում (մի յերկրում) ազգային լեզուների մահանալու
և մի ընդհանուր լեզու ստեղծելու վերաբերյալ (Կաուցկու) թեո-
րիայի դեմ, իսկ այժմ, XVI համագումարում արած ձեր զեկույց-
ման մեջ, հայտարարում եք, թե կոմունիստներն ազգային
կուլտուրաներն ու ազգային լեզուները՝ մի ընդհանուր լեզու
ունեցող մի ընդհանուր կուլտուրայի մեջ (սոցիալիզմի՝ համաշ-
խարհային մասշտաբով հաղթելու ժամանակաշրջանում) ձուլելու
կողմնակից են,—արդյոք այստեղ անպարզություն չկա՞:

Յես կարծում եմ, վոր այստեղ վո՛չ անպարզություն կա,
վո՛չ էլ վորևե հակասություն: Իմ յելույթի մեջ 1925 թվին յես
առարկում եյի Կաուցկու նացիոնալ-շովինիստական թեորիայի
դեմ, վորի համաձայն պրոլետարական հեղափոխության հաղթա-
նակն անցյալ դարի կեսերին ավստրո-գերմանական միավորյալ

պետության մեջ պետք է հանգեցներ ազգերի մեկ ընդհանուր գերմանական լեզու ունեցող մեկ ընդհանուր գերմանական ազգի մեջ ձուլվելուն և չեխերի գերմանացմանը։ Յես առարկում եյի այս թեորիայի դեմ, վորպես հակամարքսիստական, հակալենինյան թեորիայի դեմ՝ վկայակոչելով սոցիալիզմը ԽՍՀՄ-ի մեջ հաղթելուց հետո մեր յերկրի կյանքից վերցրած փաստերը, վորոնք հերքում են այդ թեորիան։ Յես այժմ էլ եմ առարկում այդ թեորիայի դեմ, ինչպես այդ յերևում է այս XVI համագումարում արած իմ հաշվետու զեկուցումից։ Առարկում եմ, վորովհետև, ասենք, ԽՍՀՄ-ի բոլոր ազգերը՝ մի ընդհանուր վելիկոռուսական լեզու ունեցող մի ընդհանուր վելիկոռուսական ազգի մեջ ձուլելու թեորիան նացիոնալ-շովինիստական թեորիա յե, հակալենինյան թեորիա յե, վոր հակասում է լենինիզմի հիմնական այն դրույթին, թե ազգային տարբերությունները մերձավորագույն ժամանակաշրջանում չեն կարող անհետանալ, թե նրանք դեռևս յերկար ժամանակ պետք է մնան նույնիսկ պրոլետարական հեղափոխության՝ համաշխարհային մասշտաբով հաղթելուց հետո։ Ինչ վերաբերում է ազգային կուլտուրաների ու ազգային լեզուների ավելի հեռավոր պերսպեկտիվին, ապա յես միշտ յեղել եմ և շարունակում եմ մնալ լենինյան այն հայացքին, թե սոցիալիզմի՝ համաշխարհային մասշտաբով հաղթելու ժամանակաշրջանում, յերբ սոցիալիզմը կամրանա ու կենցաղի մեջ կմտնի, ազգային լեզուներն անխուսափելիորեն պետք է ձուլվեն մի ընդհանուր լեզվի մեջ, վորը, իհարկե, չի լինի վոչ վելիկոռուսական, վոչ գերմանական, այլ մի ինչ-վոր նոր բան։ Այս մասին յես նույնպես վորոշակի հայտարարեցի XVI համագումարում արած իմ զեկուցման մեջ։

Ու՞ր է այստեղ անպարզությունը, և, իսկապես, ինչ է պահանջվում այստեղ պարզաբանել։

Ըստ յերևույթին, հարցատուի հեղինակներն իրենց համար առնվազն յերկու բան լիովին չեն պարզել։

Նրանք իրենց համար չեն պարզել ամենից առաջ այն փաստը, վոր մենք ԽՍՀՄ-ում արդեն թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը, ընդվորում՝ չնայած այն բանին, վոր մենք այս ժամանակաշրջանն ենք թևակոխել, ազգերը վոչ միայն չեն մահանում, այլ, ընդհակառակը, զարգանում ու ծաղկում են։ Իսկապես վոր, արդյոք մենք արդեն թևակոխե՞լ ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը։ Մեր ժամանակաշրջանը սովորաբար կոչվում

է անցման ժամանակաշրջան կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։ Նա անցման ժամանակաշրջան եր կոչվում 1918 թվականին, յերբ Լենինն իր հռչակավոր ««Ձախ» մանկության մասին» հոդվածում առաջին անգամ բնորոշեց այս ժամանակաշրջանը տնտեսական կյանքի նրա հինգ կացութաձևով։ Նա անցման ժամանակաշրջան է կոչվում ներկայումս, 1930 թվականին, յերբ այդ կացութաձևերից միքանիսը, իբրև հնացած, արդեն հատակն են իջնում, իսկ այդ կացութաձևերից մեկը, այն է՝ նոր կացութաձևն արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառում աճում ու զարգանում է չտեսնված արագությամբ։ Արդյոք կարելի՞ յե ասել, թե անցման այս յերկու ժամանակաշրջանները նույնական են, թե նրանք արմատապես չեն տարբերվում միմյանցից։ Պարզ է, վոր չի կարելի։ 1918 թ. մենք ինչ ունեյինք ժողովրդական տնտեսության բնագավառում։ Կործանված արդյունաբերություն ու վառիչներ (зажигалки), կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների՝ վորպես մասսայական յերևույթի՝ բացակայություն, քաղաքում «նոր» բուրժուազիայի և գյուղում կուլակության աճում։ Մենք ինչ ունենք այժմ։ Վերականգնված ու վերակառուցվող սոցիալիստական արդյունաբերություն, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների զարգացած սիստեմ, վորոնք ունեն ԽՍՀՄ-ի բոլոր ցանքերի 40%-ից ավելին միմիայն գարնանացանի հողաշերտում, մեռնող «նոր» բուրժուազիա՝ քաղաքում, մեռնող կուլակություն՝ գյուղում։ Թե՛ այնտեղ է անցման ժամանակաշրջան։ Թե՛ այստեղ է անցման ժամանակաշրջան։ Յեվ այնուամենայնիվ նրանք արմատապես տարբերվում են միմյանցից՝ ինչպես յերկինքը յերկրից։ Յեվ այնուամենայնիվ վոչ վոք չի կարող ժխտել, վոր մենք կանգնած ենք կապիտալիստական վերջին լուրջ դասակարգի՝ կուլակների դասակարգի վերացման շեմքին։ Պարզ է, վոր մենք արդեն դուրս ենք յեկել իր հին մտքով վերցրած անցման ժամանակաշրջանից՝ թևակոխելով ամբողջ ճակատով սոցիալիստական ուղղակի ու ծավալուն շինարարության ժամանակաշրջանը։ Պարզ է, վոր մենք արդեն թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը, վորովհետև սոցիալիստական սեկտորն այժմ իր ձեռքում պահած ունի ժողովրդական ամբողջ տնտեսության տնտեսական բոլոր լծակները, թեև սոցիալիստական հասարակության կառուցումը և դասակարգային տարբերությունների վոչնչացումը դեռ հեռու յե։ Յեվ այնուամենայնիվ, չնայած դրան, ազգային լեզուները

վոչ միայն չեն մահանում ու չեն ձուլվում մի ընդհանուր լեզվի մեջ, այլ, ընդհակառակը, ազգային կուլտուրաներն ու ազգային լեզուները զարգանում ու ծաղկում են։ Արդյոք պարզ չէ՞, վոր մեկ պետության շրջանակներում՝ սոցիալիստական ծավալուն շինարարության ժամանակաշրջանում, մեկ յերկրում սոցիալիզմ լինելու ժամանակաշրջանում ազգային լեզուների մահանալու և նրանց՝ մի ընդհանուր լեզվի մեջ ձուլվելու թեորիան սխալ, հակամարքսիստական, հակալենինյան թեորիա յե։

Երկրորդ, հարցատոմսի հեղինակները չեն պարզել այն, վոր ազգային լեզուների մահանալու և նրանց՝ մի ընդհանուր լեզվի մեջ ձուլվելու հարցը ներպետական հարց չէ, մեկ յերկրում սոցիալիզմի հաղթելու հարց չէ, այլ միջազգային հարց է, սոցիալիզմի՝ միջազգային մասշտաբով հաղթության հարց է։ Հարցատոմսի հեղինակները չեն հասկացել, վոր չի կարելի սոցիալիզմի հաղթությունը մեկ յերկրում՝ շփոթել սոցիալիզմի հաղթության հետ միջազգային մասշտաբով։ Լենինը զուր չէր ասում, վոր ազգային տարբերությունները դեռ յերկար կմնան նույնիսկ պրոլետարիատի դիկտատուրայի՝ միջազգային մասշտաբով հաղթությունից հետո։ Բացի սրանից՝ պետք է նկատի ունենալ ելի մի հանգամանք, վորն առնչություն ունի ԽՍՀՄ-ի մի շարք ազգությունների հետ։ ԽՍՀՄ-ի կազմում կա Ուկրաինա։ Բայց կա նաև մի ուրիշ Ուկրաինա այլ պետությունների կազմում։ ԽՍՀՄ-ի կազմում կա Բելոռուսիա։ Բայց կա նաև մի ուրիշ Բելոռուսիա այլ պետությունների կազմում։ Արդյոք կարծո՞ւմ եք դուք, վոր ուկրաինական ու բելոռուսական լեզվի հարցը կարող է լուծվել առանց այս յուրորինակ պայմանները հաշվի առնելու։ Այնուհետև, վերցրեք ԽՍՀՄ-ի այն ազգությունները, վորոնք տեղավորված են նրա հարավային սահմանի ուղղությամբ՝ սկսած Ադրբեջանից մինչև Կազակստան ու Բուրյաթ-Մոնղոլիա։ Նրանք բոլորն էլ գտնվում են նույն դրության մեջ, ինչ վոր Ուկրաինան ու Բելոռուսիան։ Հասկանալի յե, վոր այստեղ էլ հարկ կլինի ուշադրություն առնելու այդ ազգությունների զարգացման պայմանների յուրորինակությունը։ Արդյոք պարզ չէ՞, վոր այս բոլոր ու սրանց նման հարցերը, վորոնք կապված են ազգային կուլտուրաների ու ազգային լեզուների պրոբլեմի հետ, չեն կարող լուծում ստանալ մի պետության շրջանակներում, ԽՍՀՄ-ի շրջանակներում։

Ահա թե, ընկերներ, ինչպես է ազգային հարցի բանը՝ ընդ-

հանրապես, վերը հիշված հարցատոմսի բանը ազգային հարցի
վերաբերյալ՝ մասնավորապես։
Թույլ տվեք այժմ անցնելու աջ ոպոզիցիայի նախկին լիդեր-
ների յելույթին։
Ի՞նչ է պահանջում համագումարն աջ ոպոզիցիայի նախկին
լիդերներից։ Գուցե՝ զղջում, ինքնախարազանո՞ւմ։ Իհարկե, վոչ։
Յերբեք մեր կուսակցությունը, մեր կուսակցության համագու-
մարը չի դիմի այնպիսի բանի, վոր կուսակցության անդամ-
ներից պահանջի մի այնպիսի բան, վորը նրանց կարող է նվաս-
տացնել։ Համագումարն աջ ոպոզիցիայի նախկին լիդերներից
յերեք բան է պահանջում. առաջին, վորպեսզի նրանք իրենց
հաշիվ տան այն մասին, վոր կուսակցության գծի և այն գծի
միջև, վոր նրանք եյին պաշտպանում, անդունդ կա ընկած, վոր
այն գիծը, վոր նրանք եյին պաշտպանում, ոբյեկտիվորեն տա-
նում է վոչ թե դեպի սոցիալիզմի հաղթություն, այլ դեպի կա-
պիտալիզմի հաղթություն (Ձայներ — «Ճիշտ է»). յերկրորդ, վոր-
պեսզի նրանք այս գիծը նշավակեն վորպես հակալենինյան գիծ
և բացորոշ ու ազնվորեն սահմանազատվեն նրանից (Ձայներ —
«Ճիշտ է»), յերրորդ, վորպեսզի նրանք մեզ հետ համաքայլ
ընթանան և մեզ հետ միասին վճռական պայքար մղեն բոլոր ու
ամեն տեսակի աջ ուկլոնիստների դեմ։ (Ձայներ — «Ճիշտ է»։
Բուռն ծափահարություններ)։
Ահա թե ինչ է պահանջում համագումարն աջ ոպոզիցիայի
նախկին լիդերներից։
Արդյոք այս պահանջների մեջ կա՞ վորևէ նվաստացուցիչ
բան նրանց համար, իբրև այնպիսի մարդկանց համար, վորոնք
ուզում են բոլշևիկ մնալ։
Պարզ է, վոր այստեղ չկա և չի կարող լինել նվաստացուցիչ
վոչ մի բան։ Ամեն մի բոլշևիկ, ամեն մի հեղափոխական, իրեն
հարգող ամեն մի կուսակցական կհասկանա, վոր նա կուսակցու-
թյան աչքում միայն կարող է բարձրանալ ու շահել, յեթե նա
բացորոշ ու ազնվորեն ընդունի պարզ ու անվիճելի փաստերը։
Ահա թե ինչու յես յես կարծում, վոր ընկ. Տոմսկու խոսակ-
ցությունները այն մասին, թե նրան ուզում են ուղարկել Գոբի
անապատը և ստիպել վայրի մեղր ու մարախ ուտել՝ գավառա-
կան-վոդեվիլային բնույթի դատարկ սանկոսներ են, վորոնք
վոչ մի ընդհանուր բան չունեն հեղափոխականի արժանապատ-
վության հարցի հետ։ (Ծիծաղ։ Ծափահարություններ)։

Կարող են հարցնել, հապա ինչու՞ չի համագումարը նորից այս պահանջները ներկայացնում աջ ոպոզիցիայի նախկին լիդերներին։ Միթե սա փաստ չե, վոր դրանք, այդ պահանջները, մի անգամ արդեն ներկայացված եյին նրանց 1929 թվականի նոյեմբերին, ԿԿ-ի պլենումում։ Միթե սա փաստ չե, վոր նրանք, աջ ոպոզիցիայի նախկին լիդերները, այն ժամանակ ընդունեցին այդ պահանջները, հրաժարվեցին իրենց գծից՝ ընդունելով նրա սխալ լինելը, ընդունեցին կուսակցության գծի ճիշտ լինելը և խոստացան կուսակցության հետ միասին պայքարել աջ թեքման դեմ։ Այո, այս ամենը յեղել ե։ Հապա այն ժամանակ ինչումն ե բանը։ Բանն այն ե, վոր նրանք չկատարեցին իրենց խոստումը, չկատարեցին ու չեն կատարում այն պարտավորությունները, վոր ստանձնել են սրանից յոթ ամիս առաջ։ (Ձայներ — «Ճիշտ ե»)։ Ընկ. Ուգլանովը միանգամայն իրավացի յեր, յերբ նա իր ճառում հայտարարեց, վոր իրենք չեն կատարել ԿԿ-ի նոյեմբերյան պլենումում իրենց ստանձնած պարտավորությունները։

Ահա թե վորտեղ ե այն անվստահության աղբյուրը, վորին նրանք այժմ հանդիպում են այս համագումարում։

Ահա թե ինչու համագումարը նորից ե նրանց ներկայացնում իր պահանջները։

Ընկ. ընկ. Ռիկովը, Տոմսկին ու Ուգլանովն այստեղ գանգատվում եյին, թե համագումարը նրանց անվստահությամբ ե վերաբերվում։ Իսկ ո՞վ ե սրա մեղավորը։ Մեղավորը նրանք իրենք են։ Ով չի կատարում իր պարտավորությունները, նա չի կարող վստահություն ակնկալել։

Նրանք, աջ ոպոզիցիայի նախկին լիդերները, իրենց խոստումը կատարելու և անցյալի վրա խաչ քաշելու հնարավորություններ, առիթներ արդյոք ունեցե՞լ են։ Իհարկե, ունեցել են։ Իսկ նրանք յոթ ամսվա ընթացքում ի՞նչ են արել այդ հնարավորություններն ու առիթներն ոգտագործելու համար։ Վոչինչ։

Նորերս ընկ. Ռիկովը յեղել ե ուրալյան կոնֆերենցիայում։ Հետևաբար, նա ամենաբարեպատեհ առիթն ե ունեցել իր սխալներն ուղղելու։ Յեվ ի՞նչ։ Փոխանակ բացորոշ ու վճռականորեն վերջ դնելու իր տատանումներին՝ նա սկսել ե այնտեղ խորամանկություն անել ու մանևրել։ Հասկանալի յե, վոր ուրալյան կոնֆերենցիան չեր կարող նրան հակահարված չտալ։ Այժմ համեմատեցեք ընկ. Ռիկովի ճառն ուրալյան կոնֆերենցիայում նրա ճառի հետ XVI համագումարում։ Նրանց միջև անդունդ կա։

Այնտեղ նա խորամանկություն ե անում և մանևրում ե՝ կռվելով ուրալյան կոնֆերենցիայի դեմ։ Այստեղ նա փորձում ե բացորոշ ու բարձրաձայն ընդունել իր սխալները, փորձում ե խզել կապերն աջ ոպոզիցիայի հետ և խոստանում ե աջակցել կուսակցությանը՝ թեքումների դեմ մղվող պայքարում։ Վորտեղից ե այսպիսի փոփոխությունը, ինչո՞վ բացատրել այն։ Սա, ակներևորեն, բացատրվում ե այն սպառնական իրադրությամբ, վոր ստեղծվել ե կուսակցության մեջ աջ ոպոզիցիայի նախկին լիդերների համար։ Ուստի զարմանալի չե, վոր համագումարի համար ստեղծվել ե վորոշակի տպավորություն. մինչև վոր հուպ չտաս այդ մարդկանց, նրանցից բան չես ստանա։ (Ընդհանուր ծիծաղ։ Յերկարատև ծափահարություններ)։

Ընկ. Ուգլանովն արդյոք հնարավորություն ունեցե՞լ ե ԿԿ-ի նոյեմբերյան պլենումին տված իր խոստումը կատարելու։ Այո, ունեցել ե։ Յես նկատի ունեմ անկուսակցական ժողովը «Մոսելեկտրիկ» գործարանում, վորտեղ նա նորերս յելույթ ե ունեցել։ Յեվ ի՞նչ։ Փոխանակ հանդես գալու, ինչպես վայել ե բոլշևիկին, նա այնտեղ սկսեց պարսավել կուսակցության գիծը։ Հասկանալի յե, վոր նա դրա համար հարկ յեղած հակահարվածն ստացավ գործարանի բջիջի կողմից։ Այժմ նրա այդ յելույթը համեմատեցեք նրա այն հայտարարության հետ, վոր տպված ե այսոր «Правда»-յում։ Նրանց միջև անդունդ կա։ Ինչո՞վ ե բացատրըվում այդ փոփոխությունը։ Նույն այն սպառնական իրադրությամբ, վոր ստեղծվել ե աջ ոպոզիցիայի նախկին լիդերների շուրջը։ Ել ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե համագումարն այս բանից վորոշ դաս առավ. յեթե այդ մարդկանց հուպ չտաս, նրանցից բան չես ստանա։ (Ընդհանուր ծիծաղ։ Ծափահարություններ)։

Կամ, որինակ, ընկ. Տոմսկին։ Նորերս նա յեղել ե Թիֆլիսում անդրկովկասյան կոնֆերենցիայում։ Հետևաբար, իր մեղքերը քավելու առիթ ե ունեցել։ Յեվ ի՞նչ։ Այնտեղ նա իր ճառում շոշափել ե արհմիությունները, կոլտնտեսությունները, կոոպերացիան, կուլտուրական հեղափոխությունը և ամեն տեսակ նման բաներ, բայց գլխավորի, այսինքն՝ իր ոպորտունիստական աշխատանքի մասին ՀԱՄԿԽ-ում նա վոչ մի խոսք չի ասել։ Սա կոչվում ե կուսակցությանը տված պարտավորությունների կատարում։ Ուզեցել ե խորամանկությամբ խաբել կուսակցությանը՝ մոռանալով, վոր մեզանից յուրաքանչյուրին միլիոնավոր

աչքեր են նայում և այստեղ խորամանկությամբ վոչ վոքի չես խաբի։ Այժմ համեմատեցեք Թիֆլիսի նրա յելույթը նրա յելույթի հետ այս համագումարում, վորտեղ նա շիտակ ու բացորոշ կերպով ընդունեց իր օպորտունիստական սխալները ՀԱՄԿԽ-ի ղեկավարության ասպարեզում։ Նրանց միջև անդունդ կա։ Ինչո՞վ բացատրել այս տարբերությունը։ Նույն այն սպառնական իրադրությամբ, վոր ստեղծվել է աջ օպոզիցիայի նախկին լիդերների շուրջը։ Եվ ի՞նչ զարմանալու բան կա, յեթե համագումարը փորձ արեց ինչպես հարկն է սեղմելու այս ընկերներին, վորպեսզի ստիպի կատարելու իրենց պարտավորությունները։ (Ծափահարություններ։ Ընդհանուր ծիծաղ ամբողջ դահլիճում)։

Ահա թե վորտեղ է այն անվստահության աղբյուրը, վոր համագումարը դեռևս տածում է դեպի այդ ընկերները։

Ինչո՞վ բացատրել աջ օպոզիցիայի նախկին լիդերների այսպիսի, ավելի քան տարօրինակ, վարքագիծը։

Ինչո՞վ բացատրել այն փաստը, վոր անցած ժամանակաշրջանում նրանք վոչ մի անգամ չեն փորձել իրենց պարտավորությունները կատարելու ինքնակամ, առանց դրսի ճնշման։

Սա բացատրվում է առնվազն յերկու հանգամանքով։

Նախ, նրանով, վոր նրանք, դեռ լիովին համոզված չլինելով կուսակցության գծի ճիշտ լինելուն, սուսուփուս շարունակում եյին ֆրակցիոն վորոշ աշխատանք, առժամանակ նստում ու սպասում եյին հարմար դեպքի, վորպեսզի նորից բացորոշ հանդես գան կուսակցության դեմ։ Հավաքվելով իրենց ֆրակցիոն ժողովներին և քննարկելով կուսակցական հարցերը՝ նրանք սովորաբար հաշիվ եյին անում. սպասենք մինչև գարուն, թերևս կուսակցությունը տապալվի ցանքերի հարցում,—այն ժամանակ էլ կհարվածենք ինչպես հարկն է։ Սակայն գարունը վոչ մի պլյուս չէր տալիս նրանց, վորովհետև ցանքերը բարեհաջող եյին անցնում։ Այն ժամանակ նրանք նորից եյին հաշիվ անում. սպասենք մինչև աշուն, թերևս կուսակցությունը տապալվի հացամթերումների հարցում,—այն ժամանակ էլ կհարվածենք ԿԿ-ին։ Սակայն աշունն էլ էր նրանց հուսախաբ անում՝ ձեռնունայն թողնելով նրանց։ Յեվ քանի վոր գարունն ու աշունն ամեն տարի յեն կրկնվում, ուստի աջ օպոզիցիայի նախկին լիդերները շարունակում եյին նորից նստած սպասել՝ իրենց հույսերը դնելով մեկ գարնան, մեկ աշնան վրա։ (Ընդհանուր քրքիջ ամբողջ դահլիճում)։

Հասկանալի յե, վոր, սեզոնից սեզոն նստած մնալով ու սպասելով բարեհաջող մոմենտի՝ կուսակցությանը հարված տալու համար, նրանք չեյին կարողանում կատարել իրենց պարտավորությունները։

Վերջապես՝ յերկրորդ պատճառը։ Նա, այդ յերկրորդ պատճառն այն է, վոր աջ օպոզիցիայի նախկին լիդերները չեն հասկանում մեր բոլշևիկյան տեմպերը, չեն հավատում այդ տեմպերին և, առհասարակ, չեն ընդունում վոչ մի այնպիսի բան, ինչ դուրս է գալիս աստիճանական զարգացման շրջանակներից, ինքնահոսի շրջանակներից։ Դեռ ավելին. մեր բոլշևիկյան տեմպերը, զարգացման մեր նոր ուղիները, վորոնք կապված են վերակառուցման ժամանակաշրջանի հետ, դասակարգային կռվի սրումը և այս սրման հետևանքները նրանց տագնապ, գլխակորություն, յերկյուղ, վախ են ներշնչում։ Ուստի հասկանալի յե, վոր նրանք խույս են տալիս այն ամենից, ինչ վոր կապված է մեր կուսակցության ամենից ավելի սուր լոզունգների հետ։ Նրանք հիվանդ են նույն այն հիվանդությամբ, ինչով հիվանդ եր չեխովյան հայտնի հերոս Բելիկովը, հունարեն լեզվի ուսուցիչը, Փուտլյարի միջի մարդը։ Հիշո՞ւմ եք Չեխովի «Փուտլյարի միջի մարդը» պատմվածքը։ Այս հերոսը, ինչպես հայտնի յե, ման եր գալիս միշտ կրկնակոշիկներով, միշտ մեջը բամբակ դրած վերարկուով, հովանոցով՝ թե շոգ և թե ցուրտ յեղանակին։ «Ներեցեք, ձեր ինչի՞ն են պետք կրկնակոշիկներն ու մեջը բամբակ դրած վերարկուն հուլիս ամսին, մի այսպիսի շոգ յեղանակին»,— հարցնում եյին Բելիկովին։ Ամեն դեպքի համար,—պատասխանում եր Բելիկովը,—վայ թե մի բան պատահի, իսկ յեթե հանկարծ սառնամանիք անի, ապա այն ժամանակ ինչ անեմ» (Ընդհանուր ծիծաղ։ Ծափահարություններ)։ Նա, ասես ժանտախտից, վախենում եր ամեն մի նոր բանից, այն ամենից, ինչ դուրս եր գալիս քաղքենիական գորշ կյանքի սովորական շրջանից։ Նոր ճաշարան բաց արին. Բելիկովն արդեն տագնապի մեջ է. «այդ, իհարկե, գուցե և լավ է ճաշարան ունենալը, բայց տեսեք, չլինի՞ թե մի բան պատահի»։ Դրամատիկական խմբակ կազմակերպեցին, ընթերցարան բաց արին,—Բելիկովը նորից տագնապի մեջ է. «դրամատիկական խմբակ, նոր ընթերցարան,— տեսնես՝ ինչի՞ համար է այս. տեսեք, չլինի՞ թե մի բան պատահի»։ (Ընդհանուր ծիծաղ)։

Այդ նույն բանը պետք է ասել աջ օպոզիցիայի նախկին

լիդերների մասին։ Հիշո՞ւմ եք բտուհերը (ВТУЗ) տնտեսական ժողկոմատներին հանձնելու պատմությունը։ ԺՏԳԽ-ին մենք ուզում եինք հանձնել ընդամենը յերկու բտուհ։ Թվում եր, թե մի փոքրիկ գործ ե։ Իսկ այնինչ՝ մենք կատաղի դիմադրության հանդիպեցինք աջ ուկլոնիստների կողմից։ «Յերկու բտուհ հանձնել ԺՏԳԽ-ին։ Ինչի՞ համար ե այդ։ Արդյոք ավելի լավ չե՞ սպասել։ Տեսեք, այս ձեռնարկումից մի բան դուրս չգա»։ Իսկ այժմ մեզանում բոլոր բտուհերը հանձնված են տնտեսական ժողկոմատներին։ Յեվ վոչինչ— ապրում ենք։

Կամ, որինակ, կուլակների դեմ արտակարգ միջոցներ ձեռք առնելու հարցը։ Հիշո՞ւմ եք, թե այս առթիվ ինչ հիստերիկա սարքեցին մեր գլխին աջ ոպոզիցիայի լիդերները։ «Արտակարգ միջոցառումներ կուլակների դե՞մ։ Ինչի՞ համար ե այդ։ Արդյոք ավելի լավ չի՞ լինի լիբերալ քաղաքականություն կիրառել կուլակների վերաբերմամբ։ Տեսե՛ք, այս ձեռնարկումից չլինի թե մի բան դուրս գա»։ Իսկ այժմ մենք կիրառում ենք կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը, մի քաղաքականություն, վորի համեմատությամբ կուլակության դեմ գործադրած արտակարգ միջոցառումները դատա՛րկ բան են։ Յեվ վոչինչ—ապրում ենք։ Կամ, որինակ, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների հարցը։ «Խորհտնտեսություններ ու կոլտնտեսություննե՞ր։ Ինչի՞ համար են նրանք։ Մենք շտապելու ի՞նչ կարիք ունենք։ Տեսեք, այդ խորհտնտեսություններից ու կոլտնտեսություններից չլինի թե մի բան դուրս գա»։ Յեվ այլն և այլն։

Ահա նորի այս վախը, նոր հարցերին նոր կերպ մոտենալու անկարողությունը,—«չլինի թե մի բան պատահի»-ի այս տագնապը, ֆուտլյարի մեջի մարդու հենց այս գծերն են, վոր աջ ոպոզիցիայի նախկին լիդերներին խանգարում են կուսակցության հետ ինչպես հարկն ե ձուլվելու։

Ֆուտլյարի մեջի մարդու այս գծերը նրանցում առանձնապես ծիծաղելի ձևեր են ընդունում դժվարություններ յերևան գալիս, հորիզոնի վրա մի ամենափոքր թխպիկ յերևան գալիս։ Մեզանում վորևե տեղ դժվարություն, արգելք յերևան յեկավ թե չե—նրանք արդեն տագնապի մեջ են՝ չլինի թե մի բան պատահի։ Մի վորևե տեղ խշխշացրեց բզեզը՝ չկարողանալով դեռ ինչպես հարկն ե դուրս գալ իր բնից, իսկ նրանք արդեն հետ են նետվում, սարսափահար են լինում և սկսում են վայ-

նասուն բարձրացնել կատաստրոֆայի, խորհրդային իշխանության կործանման մասին։ (Ընդհանուր ծիծաղ)։ Մենք հանդըստացնում ենք նրանց և աշխատում ենք համոզել, թե այստեղ դեռ վոչ մի վտանգավոր բան չկա, թե սա ընդամենը մի բզեզ ե, վորից չպետք ե վախենալ։ Բայց ո՞ւմ եք ասում։ Նրանք շարունակում են իրենց վայնասունը. «Ի՞նչպես թե բզեզ։ Դա վո՛չ թե մի բզեզ ե, այլ մի հազարյակ կատաղի գազաննե՛ր։ Դա բզեզ չե, այլ անդունդ ե, խորհրդային իշխանության կործանում»։ Յեվ այսպես շարունակում են իրենցը... Բուխարինն այս առթիվ թեզիսներ ե գրում և դրանք ուղարկում ե ԿԿ՝ պնդելով, թե ԿԿ-ի քաղաքականությունը յերկիրը կործանման հասցրեց, թե խորհրդային իշխանությունը հաստատապես կկործանվի, յեթե վոչ այժմ, գոնե մի ամսից հետո։ Ռիկովը միանում ե Բուխարինի թեզիսներին, սակայն այն վերապահությամբ, թե Բուխարինի հետ ինքն ունի լըրջագույն տարաձայնություն, վորն այն ե, թե խորհրդային իշխանությունը, նրա կարծիքով, կկործանվի վո՛չ թե մի ամսից հետո, այլ մի ամիս ու յերկու որից հետո։ (Ընդհանուր ծիծաղ)։ Տոմսկին միանում ե Բուխարինին ու Ռիկովին, բայց բողոքում ե այն բանի դեմ, վոր չկարողացան յոլա գնալ առանց թեզիսների, չկարողացան յոլա գնալ առանց փաստաթղթի, վորի համար հետո հարկ կլինի պատասխան տալ. «Քանի՛ անգամ եմ ձեզ ասել,—ինչ ուզում եք արեք, բայց փաստաթղթեր մի՛ թողնեք, հետքեր մի՛ թողնեք»։ (Հոմերական ծիծաղ ամբողջ դահլիճում։ Յերկարատև ծափահարություններ)։ Ճշմարիտ ե, հետո, մի տարի անց, յերբ ամեն մի հիմարի համար պարզ ե դառնում, վոր բզեզի վտանգը մի հոտած ձու ել չարժե, աջ ուկլոնիստներն սկսում են ուշքի գալ և, սիրտ առնելով, դեմ չեն նույնիսկ պարծենկոտության դիմելու՝ հայտարարելու, թե նրանք վոչ մի բզեզից չեն վախենում, թե այդ բզեզը ընդամին այնպիսի նիհարն ու սատկածի մեկն ե։ (Ծիծաղ։ Ծափահարություններ)։ Բայց սա լինում ե մի տարուց հետո։ Իսկ առայժմ հաճեցեք հալումաշ լինել այս կանխատեսների յերեսից...

Ահա, ընկերներ, այն հանգամանքները, վորոնք աջ ոպոզիցիայի նախկին լիդերներին խանգարում են՝ ավելի մոտենալու կուսակցական ղեկավարության կորիզին և մինչև վերջը ձուլվելու նրա հետ։

Այստեղ ինչո՞վ կարելի յե գործին օգնել։

Սրա համար միայն մի միջոց կա, վերջնականապես խզել

կապերն իրենց անցյալի հետ, նոր կերպ վերազինվել և ի մի ձուլվել մեր կուսակցության ԿԿ-ի հետ՝ զարգացման բոլշևիկյան տեմպերի համար մղած նրա պայքարում, աջ թեքման դեմ մղած նրա պայքարում։

Այլ միջոցներ չկան։

Աջ ոպոզիցիայի նախկին լիդերները կկարողանան այս բանն անել—լավ։ Չեն կարողանա—թող իրենցից դժգոհեն։ (Ծափահարություններ ամբողջ դահլիճում։ Ովացիա։ Բոլորը վոտքի յեն կանգնում և յերգում են «Ինտերնացիոնալը»)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Զեկուցումը և յեզրափակման խոսքը 1930 թ. հունիսի 27-ին—հուլիսի 2-ին 5

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՃՈՂ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 5

1. Համաշխարհային տնտեսական ճգնաժամը 7
2. Կապիտալիզմի հակասությունների սրումը 16
3. ԽՍՀՄ-ի և կապիտալիստական պետությունների հարաբերությունները 22

II. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՃՈՂ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 29

1. Ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության աճումը 30
2. Ինդուստրացման հաջողությունները 32
3. Սոցիալիստական արդյունաբերության իշխող դրությունը և նրա աճման տեմպը 34
4. Գյուղատնտեսությունը և հացիկային պրոբլեմը . . . 40
5. Գյուղացիության շրջադարձը սոցիալիզմի կողմը և խորհտնտեսային-կոլտնտեսային շինարարության զարգացման թեմպը 46
6. Բանվորների ու գյուղացիների նյութական և կուլտուրական դրության բարելավումը 54
7. Աճման դժվարությունները, դասակարգերի կռիվը և սոցիալիզմի հարձակումն ամբողջ ճակատով 63
8. Տնտեսության կապիտալիստական, թե սոցիալիստական սիստեմ 77
9. Հերթական խնդիրները 84

Եջ

ա) Ընդհանուրները 84
բ) Արդյունաբերության վերաբերյալ 90
գ) Գյուղատնտեսության վերաբերյալ 91
դ) Տրանսպորտի վերաբերյալ 95
III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 97

1 Սոցիալիստական շինարարությունը ղեկավարելու հարցերը 100
2. Ներկուսակցական գործերի ղեկավարման հարցերը . . 109

ՑԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ 129

Թարգմ. Պ. Աբեղյան
Խմբագրեց Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Ի—4916, հրատ. № 423
Պատվեր № 160, տիրաժ 6000
Հանձնված է արտադրության 10/VIII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 23/IX 1937 թ.
Գինը 1 ռ. 50 կ.
Հայկուսհրատի տպարան, Երևան,
Ալավերդյան 71

ՀՀ Ազգային գրադարան
NL0179131